

key page.

8388

8389

891-99

9-89



H. MATTEOSIA  
Relieur  
American Ha  
STAMBOUL

43


ՀԱԶԱՐ ԵՒ ՄԻ

**ԶԲՕՍՈՒՑԻՉ**

# ՄԱՆՐԱՎԷՊԻ




(ՀԱՒԱԲԱԾՈՅ)



ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ



ՀԱՏՈՐ Ա.



معارف نظارت جلیله سنک رخصتیه

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՃԻՎ.ԷԼ.ԵԿԵԱՆ

**1889**

28674-4.2



( 308  
42 )

11701-57


## ԵՐԿՈՒ ԽՕՍԻՔ

Յայտնի է որ քաղաքակրթեալ ազգաց մէջ սկսած է ընդունելութիւն գտնել այնպիսի մանրավէպերու հաւաքածոյներ, որք կարգ մը վէպերու նման երկար և անօգուտ նկարագրութիւններէ զերծ, եւ ընդհակառակն ընթերցողին ժամերն դբօսալի և հեշտ կը գործեն, անոնցմէ իւրաքանչիւրին քանի մը տողերն ընդարձակ վիպասանութեան մը ոգին ներկայացնելով:

Մօնթէսքիէօ ըսած է, «— Աւելի՛ Մանրավէպեր կարդալը կենաց ձանձրոյթներուն դէմ լաւագոյն դարման մ'է, և ունեցած չեմ վիշտ մը՝ դոր ժամուան մը մանրավէպի ընթերցումը փարատած չըլլայ—»:

Գոհ եմք, որ մեր արդոյ ազգայինք ալ դգացած են սոյն ճշմարտութիւնն, որու գործնական ապացոյցն վայելած եմք մեր խմբագրութեամբ հրատարակեալ հինգ հատոր ՀՆԶԱԿներու հաւաքածոյին առթիւ: Ներկայ գործոյս վարձատրութիւնն ալ նոյնպէս ընթերցողաց ընծայելի գոհունակութենէն սպասելով, — առ որ վստահ եմք լիապէս, — պարտ անձին կը համարիմք յայտնել թէ՛ նոյն հինգ հատոր ՀՆԶԱԿ հաւաքածոյին սլարունակութեան կրկնութիւնը չէ:





## ՍԷՐԸ ՍԻՐՈՎ ԲԺՇԿԵԼ

Գաբրիէլ խենդի պէս սիրահարած էր իւր բը-  
ժըշկին : Թէեւ իրողութիւնը հազուադէպ է , այլ  
կրնայ սովորական դառնալ , քանի որ կանայք ա-  
րանց հետ կը մրցին այնպիսի արուեստներու մէջ ,  
որք ցարդ զօրաւոր սեռին վերապահուած կը  
թուէին , զի Գաբրիէլի բժիշկն իւր դրացուհին  
էր , քսան ութ ամեայ , թխահեր , սիրուն կին մը ,  
յորմէ գիտութիւնը չէր կորզած իւր կնային հը-  
րապոյրներէ ոչ մին :

Կան մարդիկ , որ սիրուն կիներ կամ աղջիկներ  
տեսնելու պատրուակ ունենալու համար կը յա-  
ճախեն այնպիսի վաճառատուներ , ուր վաճա-  
ռողք գեղեցիկ սեռէ են , եւ իրենց տուներուն  
մէջ ձեռնոցներու , փոշիներու (բուրմ) անուշահո-  
տութեանց , (գուշիկ)ներու բլուրներ կը կուտակեն :  
Գաբրիէլ ալ իւր բժիշկին այցեգին տալով սնան-  
կութեան ճամբան բռնած էր : Անհաւատալի բան  
էր թէ ի՞նչպէս կը դիմանար այնքան հիւանդու-  
թեանց . տենդ , ցնցղատապ , յողացաւ , ստա-  
մոքսի ցաւեր , ո՛ր մէկը թուենք , ամենքն ալ ա-  
ռանց շունչ առնելու իրարու կը յաջորդէին : Մին-  
չեւ իսկ օր մը պնդեց թէ թոքերէն մին ախտա-  
ւորուած էր , բժիշկին ականջը սրտին վրայ դնել  
տալու համար :

Սիրուն սօքթօնուհին իւր փափուկ մատնե-  
րովն ծանր ծանր Բէ+ Բէ+ զարկաւ կարծեցեալ հի-  
ւանդին կուրծքին եւ կռնակին , յետոյ իւր փա-

փուկ եւ վարդագոյն ականջն դրաւ նոյն տողերուն վրայ, որք բարակ կտաւով մը ծածկուած էին: Ապա ծիծաղը զսպելով, յայտարարեց թէ՛ «Թոքը բնաւ բան մը չունէր:»

— Սխալած ե՛մ, ցաւին տեղն հոս չէ, ըսաւ Գաբրիէլ, հիմա դտայ տեղն, ձեռքդ վրաս դընելէդ յետոյ, հոս կը ցաւի, — յարեց, ձեռքը սրտին վրայ դնելով:

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ տօքթօրուհին, նորէն չսկըսինք, արդէն սրտիդ հիւանդութեան վրայ խօսած էք ինձ. ձանձրացուցի՛ք զիս... դիտե՛ք, սիրելի Գաբրիէլ, թէ ճշմարիտ հիւանդներ ունիմ իննամեւու. դուք ժամանակս վատնել կուզէք... ձեզ դրօսանք պէտք է, շա՛տ դրօսանք, եւ պիտի տեսնէք թէ ձեր սրտին ցաւիկը շուտ մը պիտի անցնի:

Ահա այս կերպով դեռատի կիներ կը մերժէր հէք սիրահարը, ամեն անգամ որ քիչ մը շափը անցունէր:

Բայց Գաբրիէլի սրտին ցաւիկը փոխանակ բուժուելու, հետզհետէ կը սաստկանար: Նորէն կանչեց բժիշկն, սպասաւորին բերնով ըսել տալով թէ՛ «շա՛տ գէշ էր»:

Տօքթօրուհին գալով, դտաւ սուտ հիւանդը ցայգագգեատի մը մէջ փաթթուած եւ թիկնաթուի մը վրայ տարածուած:

— Տեսնե՛նք, տեսնե՛նք, ի՞նչ ունիք նորէն, հարցուց անհամբեր դէմքով:

— Օդին մէջ ելեքտրականութիւն կայ, ըսաւ Գաբրիէլ մտովի, յետոյ ցաւադին ձայնով մը գոչեց, չէ՞ք տեսներ, տիկի՛ն, թէ ամեն օր մէյմէկ քիչ ծանր ծանր կը մեռնիմ:



— Եւ ո՞վ է գրեց այդ կերպով մեռնելու ըստիպողն .

— Ո՞վ է զիս ստիպո՞ղն . . . հը՛ . . . բայց դո՛ւք էք, դու՛ք, զոր բոլոր հողւովս կը սիրեմ :

— Օ՛հ, արդարեւ շատ հիւանդ էք, ըսաւ տօքթօրուհին, բայց հիւանդութիւննիդ անբուժելի չէ : Ի՞նչ կրնամ տալ որ բժշկուիք .

— Թողէք որ ես ըսեմ եւ դուք գրեցէք դեղագիրը, զի երբեմն հիւանդը բժշկէն աւելի լաւ դիտէ իրեն պէտք եղածը : Ես՝ ձեզմով . . .

— Ձեզ պէտք եղածն ե՞ս եմ . . . ըսաւ տօքթօրուհին խնդալով, բայց եթէ բժիշկ մ'եմ, բուժիչ դեղ մը չեմ . . . Ի՞նչ կրսէ ամուսինս, եթէ դեղագրերուս մէջ զովացուցիչ բուսաջուրի տեղ անձս գրեմ,

— Ձմեզ իրարմէ բաժնող բանին վրայ չ'իսուի՛նք, ըսաւ Գարրիէլ, այլ մօտեցնող բանին վրայ :

— Լաւ, հիւանդութեանդ վրայ խօսինք, ըսաւ բժշկուհին, եւ թեւաթոռ մը առած՝ անվեհեր դէմքով Գարրիէլի դիմացը նստաւ : Ըստ որում երիտասարդն իր հիւանդի դիրքը փոխած էր, տօքթօրուհին ստիպեց զայն որ թիկնաթոռին վրայ տարածուի : Յայգազդեատին ծալքերը վրայ բերաւ եւ յետոյ կէս հեգնական եւ կէս լուրջ լեզուաւ մը յարեց . — Այդ վիճակին մէջ շատ խրնամք հարկաւոր է ձեզ . այնպիսի հիւանդութիւն մ'ունիք, որ ընդհանրապէս ձեր տարիքն ունեցող մարդոց վրայ կը տիրէ : Ոմանք մինչեւ աստիճան մը նկարագրի բարձրութիւն ունենալով, իրենք իրենց կը բժշկուին, այլք դուեհիկ բնութիւն ունենալով, աւելի տեղի կուտան հիւանդութեան . այս վերջինք երբէք չեն խորհած սա առածին վրայ . «Երջանկութիւն գտնել կարծե-

լով իւր կրից անձնատուր լինելը կը նմանի հեղեղի մը մէջ նետուելուն, բաղնիքի մը հաճոյքը գտնելու յուսով .» այնպիսիք անմիջական հաճոյքը միայն կը տեսնեն, առանց անոնց ետեւէն եկող հոգերու բանակը տեսնելու . այս կարգի մարդոց համար ամուսնացեալ կին մը նախանձելի որս մ'է : Այն աղջիկներն, որք սէրն արհեստ մը դարձուցած են, շատ սուղի կը նստին . ուրիշի մը կինն ծախք մը չառներ, եւ ասկէց զատ, պատասխանատուութիւն ալ չկայ, վասն զի անհարազատ որդի ալ չգոյանար ամուսնութեան մէջ :

— Ո՛հ, տիկի՛ն, գոչեց Գարրիէլ փոխ առ փոխ կարմրելով եւ դեղնելով, այդպիսի հաշիւները ընող մա՞րդ մը կը կարծէք զիս .

— Ներեցէք, մի՛ ընդմիջէք, դուք զիս խորհրդակցութեան կոչեցիք . ձեր վէրքը կը զննեմ . . . զգայնութիւննիդ բարեգուշակ է, բայց Ֆիզիքական վէրքեր միայն զննելու սովորութիւն ունենալով, թերեւս ձեռքս քիչ մը ծանր իջաւ բարոյական վէրքի մը վրայ . սակայն որչափ ալ ծանր լինի, դարձեալ ամուսնոյս ձեռքէն թեթեւ է, եթէ երբէք այս գործողութիւնն անոր յանձնէի . . .

— Չեմ գիտեր, ըսաւ Գարրիէլ, բայց պիտի նախնտրէի . . .

— Յաւցուցի զձեզ, ընդմիջեց տօքթօրուհին, բայց դուք որ կառաջարկէք ինձ ամուսնոյ մը նուիրական պարտքերը մատնել, կը կարծէք թէ զիս չի վիրաւորեցի՞ք : Օն անդր, թողէք որ պատեմ այդ վէրքն, զոր ակամայ պատճառեցի, եւ քիչ մը օգնեցէք ինձ :

Բայց Գարրիէլ յամառ հիւանդ մ'էր, տեսնելով որ դեռատի կինն իւր նպատակէն կը խոտորեցնէր խօսակցութիւնն, ուղեց մէկէն ի մէկ

առաջադրած ճամբուն մէջ վերադարձնել զայն :  
 Ինչ որ սէրը կրնար դուրս ժայթքեցնել սաստիկ  
 սիրահարեալ սրտէ մը, զայն բոցավառ լեզուա-  
 մը յայտնեց . իւր պէրճախօսութիւնը մեղրի պէս  
 կը ծորէր շրթներէն, մանաւանդ որ տիկին Սուա-  
 քինեան անշարժ եւ անբարբառ, աչերը կիսա-  
 փակ, կարծես մտիկ կրնէր երկիւղածօրէն :

Սակայն հարկ էր եղրակացութեան մը յան-  
 դիլ . Գարրիէլ անոր ձեռները բռնեց, բայց սօք-  
 թօրուհին դլուխը վեր առաւ, ձեռները քաշեց  
 եւ ըսաւ . — Լմնցուցի՞ք, ո՛հ, շատ լաւ . եթէ  
 բոլոր հիւանդներն ալ այսպէս բացայայտ խօսին,  
 բժիշկն շատ դիւրաւ պիտի դուշակէր ախտերը .

Գարրիէլ վհատեալ՝ ինկաւ իւր աթոռին վրայ .

— Յաւը սաստիկ է, կրկնեց տիկին Սուաքինե-  
 եան անողոքարար, եւ բժշկութիւնը վրաս չեմ  
 առնուր, մինչեւ որ կրաւորապէս ինձ հնազան-  
 դելու բացորոշ խոստում չտաք .

Երիտասարդը յուսահատական շարժում մ'ըրաւ .

— Ամենէն արագ, ապահով եւ գլխաւոր դար-  
 մանն է ամուսնութիւնն .

— Ամուսնանա՛մ, գոչեց Գարրիէլ, երբ սիրտս  
 ձեզմով լի է .

— Զձեզ կորովամիտ մարդ մը կը կարծէի,  
 պարո՛ն, կրկնեց դեռատի կինն խստութեամբ,  
 եւ կը տեսնեմ որ քաջութիւն չունիք ինձ օգ-  
 նելու ա՛յն գործոյն մէջ՝ որուն կուզեմ ձեռնար-  
 կել . սրտոտ մարդ մը կը կարծէի զձեզ, եւ չէք  
 ըմբռներ թէ կուզեմ զձեզ արդելուլ մեղապարտ  
 ճամբու մը մէջ աւելի առաջ նետուելէ : Զեզ նը-  
 կատմամբ բարեկամութիւն եւ յարգանք կը տա-  
 ծէի, սխալեր եմ . . : Իբրեւ բժիշկ՝ կը յորդորեմ  
 զձեզ որ ուրիշ բժիշկ մը ընտրէք, քանի որ իս

գիտութիւնս անկարող է զձեզ բուժելու : Իբրեւ կին կը յայտարարեմ թէ՛ իմ տանս մէջ ձեր ներկայութիւնն այսուհետեւ դժնդակ պիտի լինի ինձ, եւ եթէ երբէք բունի գաք, իբրեւ թշնամանք պիտի նկատեմ զայն : Մնայք բարեա՛ւ, պարոն . . .

—Մի՛ թողուք զիս այսպէս, գոչեց Գաբրիէլ այս յանդիմանութենէն յաղթուած, այլ եւս ըզձեզ չտեսնե՛լ . . . ո՛հ, ո՛չ . . . պիտի հնազանդիմ :

—Կերդնո՞ւք .

—Կերդնում . . . ըսէ՛ք, ի՞նչ պէտք է ընել .

—Պէտք է միշտ ձեր միտքը բերէք սա ճրջմարտութիւնը . «Տիկին Առաքինեան պարկեշտ կին մ'է» : Պէտք է զիս այլ եւս հոս չկոչէք, եւ երեկոյները յաճախ մեր տունը գաք անցունեք : Ահա այսչափ : Հիմա, յարեց իւր զուարթագին կերպարանքը վերստանալով, ի փոխարէն ձեր երդման, մտերմական գաղտնիք մը պիտի յայտնեմ ձեզ : Իուք սիրուն, հրապուրիչ, կատարեալ եւ սիրուելու արժանի մարդ մ'էք, բայց շա՛տ ուշ կուգաք, զի ես արդէն սիրահար մը ունիմ .

—Սիրահա՛ր մը, գոչեց Գաբրիէլ, աչերը խոշոր խոշոր բանալով .

—Ա, յո՛ . գիտութի՛ւնն . ըսաւ տիկին Առաքինեան :

—Բայց գիտութիւնը սիրահար մը չէ (չսիրեր) . գոչեց Գաբրիլ . այլ սիրուհի մ'է (կը սիրուի) :

—Թո՛ղ այդպէս ըլլայ . . . այն ատեն հակաբնական կիրք մը ունիմ . . . Յտեսութի՛ւն . . . շուտ եկէ՛ք :

\* \*

Ա, յն ժամանակէն սկսեալ, Գաբրիէլ իւր գրացուհւոյն տան մէջ յաճախ հանդիպեցաւ դեռատի օրիորդի մը, զոր մինչեւ այն ատեն չէր նըշմարած իսկ, ա՛յնքան իւր սիրտն ու աչերը ուրիշ

տեղ գրադած էին : Սակայն ապաքինութիւնն բա-  
ւական երկար տեւեց : Գաբրիէլ մերթ ընդ մերթ  
տկարութիւններ գդաց, վախցուեցաւ թէ վերան-  
կում կունենայ, բայց տօքթօրուհին միշտ ար-  
ժանի գտնուեցաւ իւր բարձր պաշտօնին :

«Սէրը սիրով բժշկելը՝ նմանարութութիւն մ'է  
(օհօօհօհօհ), զոր կընեմ», կըսէր ինքն իրեն տօքթօ-  
րուհին, ամեն հնար ի գործ դնելով՝ որպէս զի  
իւր երիտասարդ բարեկամուհին փայլեցնէ յաչս  
դրացւոյն :

Իեռատի օրիորդն անգիտակցաբար իբրեւ  
գործիք կը ծառայէր տիկին Սուաքինեանի ձե-  
ռացը մէջ . իւր կուսական շնորհն ու գեղեցկու-  
թիւնը կը գրաւէին երիտասարդին ուշադրու-  
թիւնը, զոր մտաց տաղանդներն ու սրտի ձիր-  
քերն ալ միշտ վառ պահեցին, եւ բժշկուհին օր  
մը տեսաւ թէ իւր հիւանդը բուժուած էր :

— Բժշկութիւնս կատարեալ է, ըսաւ տօքթօ-  
րուհին առ իւր դրացին, նորա ամուսնացած օրը  
զայն մէկ կողմ առնելով . այլ եւս ինձ պէտք չու-  
նիք մինչեւ այն օրն ուր ձեր կիսնն պատրաստ  
լինի գեղեցիկ մանկիկ մը տալու ձեզ . վասն զի  
կը յուսամ թէ միշտ յաճախորդ պիտի մնաք  
ինձ, եւ փոքր ինչ համակրանք պիտի պահէք  
ձեր բժշկին համար :

— Ո՛հ, տիկին, գոչեց Գաբրիէլ եռանդազին,  
հրեշտակ մ'էք դուք .

— Հրեշտակ մը, ըսաւ տիկին Սուաքինեան,  
ո՛չ, ո՛չ . . . : Ընտիր բժիշկ մը եւ ոչ ուրիշ բան :

Եւ որովհետեւ Գաբրիէլ կուզէր անոր ձեռներ-  
ը պագնել, տօքթօրուհին սիրով ձեռքը երկնցուց,

— Համբուրեցէ՛ք, ըսաւ, դուք հիմա արժա-  
նի էք ասոր . գոհ եմ ձեռնէ . . . : Նոյնչափ ալ

իմ անձէս գոհ եմ. — յարեց, աչերովն հետեւե-  
ւելով Գարրիէլի, որ կերթար իւր օրինաւոր կը-  
նոջ բազկացը մէջ գտնելու ա՛յն երջանկութիւնն,  
զոր երբեմն ապօրէն յարաբերութեանց մէջ գըտ-  
նել կը կարծէր : Թ. Կ. Գ. Գ.

— 0 —

## 2

## ԱՆՉԳՈՅՇ ԱՏԵՆԱԲԱՆ ՄԸ

Վարդապետ մը օր մը քարոզին մէջ սխալե-  
լով «Յիսուս 5000 հացով 5 մարդ կշտացուց»,  
ըսաւ : Գիւղապետը, որ ժողովրդին մէջ կը գըտ-  
նուէր, ատենարանը ծաղրելով ըսաւ. — Հինգ  
հազար հացով հինգ մարդ ես ալ կրնամ կշտա-  
ցընել :

Վարդապետը քանի մը օրէն ետքը ուզելով  
քարոզինն ոյն սխալը շտկել, գոչեց. — Յիսուս հինգ  
հացով հինգ հազար մարդ կշտացուց — ապա  
գիւղապետին դառնալով, գոռոզութեամբ հար-  
ցուց. — Պարո՛ն գիւղապետ, աս ալ կրնա՞ս ընել :

— Ա. յո՛, պատասխանեց գիւղապետը, առջի  
քարոզիդ մնացորդներովը :

— 0 —

## 3

## ԱՆՄԻՏ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Իմաստասիրին մէկը գիշեր ատեն ճրագին լու-  
սովը մարդակազմութեան գիրք մը կարդացած  
պահուն, տեղ մը հանդիպեցաւ, ուր սապէս

դրուած էր . «Երկոյն» կռիւն խեղդանալէան նշան է .» Չայս ստուգելու համար ճրագը առաւ , — ըստ որում ինքն ալ երկայն կզակ մը ունէր — եւ հայելիին առջեւ վազեց , ու տհաճութեամբ անոր մէջ նայած ատեն ճրագը մօրուքին խիստ մօտեցուցած ըլլալով՝ մօրուքը բռնկեցաւ եւ գծբաղդաբար կէսէն աւելին այրեցաւ : Իմաստասէրը բոլորովին հանդարտ եւ առանց խռովելու գնաց իւր գլրքին քովը ու գրիչը առնելով լուսանցքին վրայ դրեց . «Ասոր փորձը եղած է» :

— 0 —

#### 4

### ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

Ուսանողներէ ոմանք երբեմն ուղղուած հարցումներու անանկ պատասխաններ կուտան (սրբամտաբար կամ միամտաբար) որ լսողին զարմանք կամ ծիծաղ կը պատճառեն : Ահա մի քանի օրինակներ :

Կենդանաբանութեան դասատուն սրամիտ ուսանողի մը կը հարցնէ .

— Պարո՛ն Վահրամ, խնդիր է գիտէալ թէ՛ Նոյի տապանէն մեկնող ու ձիթենւոյ ոստը բերանը առած վերադարձող աղաւնին արո՞ւ էր թէ՛ էգ .

— Արու էր , մի՛ւսիւ :

— Ինչէ՞ն հասկցար .

— Վասն զի եթէ էգ ըլլար՝ այնքան ատեն կրնա՞ր բերանը գոց պահել :

— 0 —

## 5

Կառավարիչ մը «Խիղճը հանդարտ եզող մարդուն հանգիստ քուն քաշել կարենալը» բացատրելու համար փոքրիկ ուսանողի մը հարցուց .

— Զոր օրինակ , դպրոցին մէջ լաւ աշխատելով եթէ դասերդ պատրաստես եւ աղէկ շօ՞ն առնես , նոյն գիշերը հանգիստ չե՞ս քնանար .

— Ո՛չ :

— Եւ կամ ծնողացդ հնազանդ գտնուելով , եթէ անոնց սիրոյն արժանանաս , հանգիստ չե՞ս քնանար .

— Ո՛չ :

— Բայց զա՛ւակս , բարի գործ մը կատարած օրդ հարկաւ նոյն գիշերը հանգիստ կը քնանաս .

— Ո՛չ .

— Ի՞նչպէս ոչ . . .

— Որովհետեւ մեր տունը լեցուն Բ-Ի-Մ-ընէ կայ :

— 0 —



## 6

Կենդանաբանութեան դասատուն .

— Պարո՛ններ , գիշատիչ թռչնոց անունները սովորեցանք , կարգը եկաւ մարդուս օգտակար ծառայութիւններ մատուցանող թռչունները ճանչնալ .

Անհամբեր աշակերտ մը . — Ատիկայ ես արդէն գիտեմ , մի՛ւսիւ .

— Գիտես մի՛ . . . ըսէ տեսնենք ուրեմն , օգտակար հանդիսացող թռչունները որո՞նք են .

— Քէպպալ ըլլալով սեղանը բերուածներուն ամենքն ալ օգտակար են :

— 0 —

## 7

## ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՐՈՆ ՄԸ

օր մը մեծ պողոտայէ մը անցած ժամանակ յուղարկաւորաց բաղմութեան մը կը հանդպի , եւ դադաղին հետեւորդներէն մէկուն մօտենալով կը հարցնէ .

— Բա՛րեկամ , յուղարկաւորաց բաղմութեանը նայելով , հանգուցեալը հարուստ մէկը եղած ըլլալու է , այնպէս չէ՞ .

— Զգիտիմ է՞ֆէնտրմ , զապիլ է ուր՝ ատանկ է .

— Երիտասա՞րդ էր , կըսես .

— Երեսը գոց տանելնուն՝ սէպէպովը ադ խուսուսին մուխուֆ չեղանք :

- Արդեօք ամուսնացեալ էր թէ ամուրի .
- Չի հարցուցանք . . . չը գիտիմ :
- Էյ, ողջ եղած ատենը ի՞նչ գործով կղբաղի եղեր .

— Էֆէնտըմ, թախում մի պօշ-պօղաղ մուխուֆ-ճոց չկրնալով խօսք ու մէրամ հասկցունիլ՝ էն-ճամիւլ քէլամ գլուխ չէ բրցուցիր տը՝ իշթէ թախլան նետեր է :

Այս պատասխանը լսող մի քանի ուղեկիցք չի կրնալով ծիծաղնին բռնել, քահ քահ մը կը ճըգեն, որով հետաքրքիր պարոնն ալ խելքը տուն կը կանչէ եւ անխօսուկ մը կծիկը կը դնէ :

— 0 —

## 8

### ԵՐԿՈՒ ԴՐԱՑՈՒՀԻՔ

- Տիկի՛ն, երկու օր էր ո՞ւր էիք .
- Կնքահօրս տղուն հարսնիքը գացեր էի .
- Է, ի՞նչպէս, աղէկ հարսնիք բռնե՞ր էին .
- Էհ, գէշ չէր . իրենց կարողութեանը չափ . . .
- Հարսը խաղցուցի՞ն .
- Հարսը խաղցունելը հիմա պարիթ է, փեսան կը խաղցունեն կոր .
- Այդ ի՞նչ ըսել է .
- Ի՞նչ ըսել պիտի ըլլայ, տղուն 100 ոսկի տալ խոստացեր են, այսօր կուտանք վաղը կուտանք ըսելով մինչեւ հիմա կը խաղցունեն կոր :

## 9

## ԵՐԵՔ ԳՈՂԵՐ

Երեք գողեր հեռուէն դաշտին մէջ կը տեսնեն մարդ մը, որ իշու մը վրայ նստած, ետեւէն ալ վզէն փոքրիկ զանգակ մը կախուած ոչխար մը ձգած՝ «Է՛հլ Է՛հլ կուգայ»:

Գողերէն մին կըսէ իւր ընկերացը.

— Ընկե՛րք, եկէք սա մարդը կողոպտենք, բայց անանկ վարպետութեամբ մը, որուն վրայ Աստուած անգամ վերէն զարմանայ. ես իմ վրաս կառնում ոչխարը գողնալ, այնպիսի ձեւով մը՝ որ մարդը չիմանայ:

— Ես ալ էշը կը գողնամ, կը պատասխանէ երկրորդը:

— Այն ատեն, մարդուն հագուստները թուցընելն ալ ինձի կը մնայ, կը յարէ երրորդը:

Այս համաձայնութենէն ետքը, առաջին գողը լռիկ մնչիկ, ծռելով ծռմրտկելով կերթայ կամացուկ մը ոչխարին վզէն կը հանէ զանգակը եւ զայն իշուն պոչին կապելէն ետքը ոչխարը կը գրկէ կը տանի:

Իշուն վրայ հեծնող մարդը զանգակին ձայնը լսելով երբ տակաւին կը կարծէր թէ ոչխարը ետեւէն կուգայ, յանկարծ ետին կը դառնայ, եւ տեսնելով որ թէեւ զանգակին ձայնը կայ բայց ոչխարը չկայ՝ էշէն վար ցատկելով ափ ի բերան կը մնայ: Նոյն միջոցին Բ. գողը ասոր մօտենալով կը հարցնէ թէ՛



11701-17  
309  
42

— Ինչո՞ւ զարմացեր կեցեր է .

— Ի՞նչպէս չի զարմանամ, ե՛ղբայր, քանի որ կը տեսնեմ ոչխարիս զանգակը իշուս պոչէն կախուած՝ իսկ ոչխարս յափշտակուած . . .

— Ճշմարիտ է, ափսո՛ս է եղեր քեզի . էշդ ալ, որ գանդաղաքայլ է, արդեւք պիտի ըլլայ քեզի աստ անդ իյնալով ոչխարդ գտնելու . եթէ կուզես, բարեկամական ծառայութիւն մը մատուցանեմ քեզ, ես էշդ բռնեմ հոս կենամ, դուն գնա ոչխարդ փնտռէ :

— Շատ աղէկ կըլլայ . — ըսելով երբ մարդը կը մեկնի՝ գողը իշուն վրայ ցատկելուն պէս կ'աներեւութանայ : Աւելորդ է ըսել թէ որքա՞ն կ'աւելնայ մարդուն զարմանքը, տեսնելով որ ոչխարէն զատ այս անգամ էշն ալ վրայ տուած է :

Հազիւ քանի մը քայլ կ'առնու, ահա Գ. գողը իրեն կը մօտենայ, ինքզինքը բոլորովին տրտում ու տխուր ցուցնելով :

Երբ մեր մարդուկը նորա տխրութեան պատճառը կը հարցնէ,

— Ի՞նչպէս չի տրտմիմ, կը պատասխանէ խորամանկը . սա ձորակի լճին մէջէն անցնելու ատենս ձգեցի խուրճս, որուն մէջ մեր քաղքին մեծաւորին տարուելիք նուէրներ կային . ա՛հ, ո՞ւր էր թէ մէկը ըլլար զայն հանէր, ըստ որում լողալ չգիտեմ, եւ ես փոխարէն իրեն մինչեւ տասը ոսկի կը հատուցանէի :

Մեր մարդուկը ինքն իրեն կըսէ թէ . — Աս աղ-

ւոր բաղդ մ' է, իշուս ալ ոչխարիս ալ կրկին գինը  
 ձեռք ձգած կըլլամ եթէ հիմա հանուիմ, մտնեմ  
 սա լիճը եւ հանեմ խուրճը, քանի որ լողալու  
 արհեստին ալ բաւական վարժ եմ:

Կարճ խօսինք. երբ մտքէն այս անցուցածը  
 անմիջապէս ի գործ կը դնէ, երրորդ գողն ալ  
 անոր հագուստները առնել ու թուցնելը մէկ կընէ:  
 Գարձեալ աւելորդ է ըսել թէ, որքա՛ն մեծ կըլ-  
 լայ մարդուն զարմանքը, երբ ջրէն ելլելէն ետքը  
 ինքզինքը ոչ թէ միայն ոչխարէն եւ էշէն զրկու-  
 ած, այսինքն իւր միակ հարստութենէն կողոպ-  
 տուած, այլ եւ արեւուն տակ Վըր գտնէ մօրէ-  
 մերկիկ:

\*  
 \* \*

Այս վէպին բարոյական միտքը սա է որ,  
 մարդիկ պէտք չէ որ զարմանան թէ Ադամ եւ  
 Եւայ ինչո՞ւ խաբուեր են դրախտին մէջ սատա-  
 նայէն, որ մարդէն տարբեր էակ մ' է, մինչդեռ  
 իրենք ամեն օր իրարմէ խաբուելու վրայ են, որ  
 իրարմէ տարբեր ալ էակներ չեն:

— 0 —

10

ԿԻՆ

Աշխարհիս մէջ երեք բան կայ, որոց թէ նմա-  
 նելու է կին մը եւ թէ նմանելու չէ.

Առաջին. — Պէտք է նմանի խղուճին, որ իւր

տունը կը պահէ կանոնաւորապէս, բայց պէտք չէ որ անոր պէս իւր բոլոր ունեցածը շալկէ .

Երկրորդ . — Նմանելու է արձագանդին, որ իրեն հարցում ուղղուած ժամանակ միայն կը խօսի, բայց պէտք չէ որ արձագանդին պէս վերջին խօսքը ինքն ըսել աշխատի .

Երրորդ . — Նմանելու է քաղաքի մը մեծ ժամացոյցին, որ ճշգրիտ եւ կանոնաւոր ընթացք մը կուեննայ, բայց պէտք չէ որ անոր պէս բոլոր քաղաքը դղրդող աղմուկ պատճառէ :

— 0 —

## 11

### ԲԱԺԱԿԱՃԱՌ

Հարսնիքի մը մէջ թուարան պատուելի մը հետեւեալ բաժակաճառն արտասաներ է գեղանի աղջիկներու համար .

« Մաղթենք նոցա ՅԱԻԵԼՈՒՄ՝ն առաքինութեան ի գեղեցկութիւն անձին, ԲԱՐՉՈՒՄ՝ն նախանձու ի բարեկամութենէ իւրեանց, ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻԻՆ գեղեցիկ կատարելութեանց ընդ քաղցրութեան բարուց, ԲԱԺԱՆՈՒՄ՝ն ժամանակի ընդ մէջ ընկերակցութեան ու տնտեսութեան եւ ԶՆԶՈՒՄ՝ն ամենայն բամբասանաց » :

Տ

— 0 —

## 12

## ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԽՐԱՏ ՄԸ

Ի Բարիզ Սէն-Մատրլէն եկեղեցւոյն մէջ պըսակի արարողութիւն մը կը կատարուէր : Ամուսնացեալք, հարս եւ փեսայ վերջին աստիճանի տղեղ էին : Նոյն պահուն, յորում քահանայն Քիրենց կողմը կը դառնայ պարագային համեմատ խրատ մը տալու համար, մի քանի վայրկեան ապշեալ կը մնայ նոցա տղեղութենէն . ուստի յուզեալ ձայնիւ մը կըրսէ .

— Դեռ ատի՛ ամուլք, սիրեցէ՛ք զմիմեանս, զի եթէ՞ չի սիրէք, ո՛վ պիտի սիրէ զձեզ . . . Թարգմ.

— 0 —

## 13

## ՎԱՐԺԱՐՄԱՆԻ ՄԷՉ

Տարեկան հարցաքննութեան օր մը վարդապետին մէկը տեսնելով փոքրիկ տղայ մը, որ շատ յաջող պատասխաններ կուտար Սրբազան պատմութեան դասին մէջ, զանի շուարեցնելու մտօք կը հարցնէ .

— Տղա՛ս, կրնա՞ս ըսել ինձ թէ ջրհեղեղի ժամանակ Նայ նահապետին տապանէն որո՞նք դուրսը մնացին .

Կայտառ ուսանողը անմիջապէս կը պատասխանէ . — Վարդապետներն ու մայրապետները, որք արու եւ էգ չըլլալնուն համար ներս չընդունուեցան : — 0 —

## 14

## ԱՅՅԵՏՈՄՍԸ

Սրամիտ եւ քիչ մը ազատ բնաւորութեան տէր դեռատի կին մը այցելութեանց կը պատէր կաղանդի օր մը, որպէս սովորութիւն կայ եւրոպացւոց մէջ: Սա՛ ճամբան կը պատահի նիհար եւ վտիտ բարեկամահւոյ մը. որ քիչ մը անճաշակ կերպիւ հագուած էր, այսինքն իւր շրջագդեատին վերի մասը աւելի բացուած (տէքօլթէ) ըլլալով, կուրծքին վրայ առատութենէ աւելի սովի նշաններ ցոյց կու տար: Առաջին տիկինը ծաղրաբար իւր մեծարանքներն ընելով հանդերձ նորեկին, կամացուկ մը այցետոմս մը կը նետէ նորա սեղմարանին (կուրծքին) մէջ:

— Ի՞նչ կընէք, տի'կին, կը գոչէ զարմանօք նիհար տիկինը.

— Ներեցէք, կը պատասխանէ կատակաբան գեղանին, ըստ որում այսօր այցելութեանց կը պատիմ, եւ ուր որ մարդ չեմ գտներ՝ այցետոմս կը թողում:

— օ —

## 15

## ԳԻՆՈՎ ԴԵՐԱՍԱՆ ՄԸ

Թատրերգութեան մը մէջ զինւորի դեր կատարող դերասան մը առջի իրիկուրնէ բաւական



կը գինովնայ, եւ ներկայացման ժամանակ ի տեսարան գալով, — Տէր իմ, Արտաշէս թշնամին բողորովին բերդին մօտեցաւ . — ըսելու տեղ, «Տէր իմ, արձակէջ թշնամին բողորովին բորոտին մօտեցաւ,» կը գոչէ . բայց հանդիսականաց ընդ որս եւ դերասանաց բարձրաձայն ծիծաղելնէն կը յուշարերի եւ ամօթահար կը փախչի :

— 0 —

## 16

### ԵՐՈՅԻ ՊԱՐՈՆՆԵՐ

Ներեցէք բարեկամս , ձեզի բան մը պիտի հարցնեմ .

— Հրամայեցէք .

— Ձեր դրացի պարոնը ձիով ճամբորդած պահուն ինչո՞ւ արդեօք ձիուն վրայ հանդարտ չի կրնալով նստիլ միշտ վեր վեր կը ցատկէ .

— Թեթեւութենէն .

— Բայց մէկ քանիներու հարցուցի նէ ըսին թէ՛ ձիուն ծանրութիւն չպատճառելու համար անանկ կընէ եղեր :

— Այդ մէկ քանիներու խօսքին կարեւորութիւն մի՛ տաք, իմ գիտցած պարոնս է նէ՛ անցած տարի Չատկին հետը կշռուեցանք, ինձմէ 35 հօխա թեթեւ եկաւ, է՛, ասոր ծանրութիւնը ո՞ւր մնաց :

— 0 —

## 17

Պատժական ատենի մը մէջ .

Իատաւորը (առ ամբաստանեալն) — Չե՞ս ամէնար, պա՛րոն, այս տասներորդ անգամն է որ հոս կուգաս .

Ամբաստանեալը . — Ինքեցէք տէր իմ, դուք որ ամեն օր հոս կուգաք, իմ տասն անգամ գալլս շա՞տ տեսաք . . . :

— 0 —

## 18

## ԶՈՒԱՐՃԱԽՕՍ ՍԿՆՑԻ ՄԸ

Իւր մէկ ընկերոջը հետ կամուրջէն անցած ժամանակ, դիմացէն եկող անձ մը ցուցնելով, կըսէ .

— Աղա՛, սա դիմացի մարդը կու ճաշնա՞ս .

— Խայրը .

— Ասոր՝ ատլի շանլի վար-եէմէզ օղլի կօզմօզ աղա կըսին .

— Շիտտակ է . հագած լաթերուն պատուած ու թեւէն պէլլի է ուր՝ վար-եէմէզին մէյն է .

— Խայրը էֆէնտըմ, լաթերուն պատուած ու թանը մի՛ նայիր . սա մարդը հազարաւոր ու բիւրաւոր մարդոց աշվին արցիւնքը կու սուրբէ .

— Չըսե՞ս ուր, հէմ հարուստ հէմ շատ մարդասէր մէյն է .

— Նէ՞ միւնասիպէթ .

— Անանկ է նը հազարաւոր մարդոց արցիւնքը  
ինտո՞ր կու սուրբէ .

— Էֆէնտրմ, չարսուին դուռը կոյնած՝ հատը  
քառսուն փարանոց մէնտիլ կու ծախի :

— 0 —

## 19

### ԳՈՐԾՈՒՆԵԱՅ ՄԱՏԱԿԱՐԱՐ ՄԸ

Նշանաւոր սեղանաւորներէ մին, ամսագլխու  
առթիւ տանը մատակարարին հաշիւը տեսնելու  
համար, տետրակները բերել կը հրամայէ .

— Եկուր նայինք, պարոն Վախիթանկ, այս ա-  
միս մսավաճառին ի՞նչ տուիր .

— 170 հօխա ոչխարի միս առնուեցաւ, ամեն  
մէկ հօխան 6էն՝ կընէ 1020 ղըշ . 140 հօխա ալ ե-  
ղան միս առինք, նոյնպէս վեց վեց դահեկանէն՝  
840 . դու մար ընդհանուր՝ 1860 .

— Խենդեցա՞ր Վախիթանկ, այսչափ միսը ո՞վ  
կերաւ . . .

— Կ'ուտուի, տէր իմ, կ'ուտուի .

— Ի՞նչ կըսես . . . հիմա աս տանը մէջ 340 հօ-  
խա մի՞ս կերուեցաւ .

— Ներեցէք տէր իմ, մի՛ կասկածիք. եթէ ան-  
դամ մը դեղադործին հաշիւը աչքէ անցնէք, այն  
ատեն պիտի համոզուիք թէ . . .

— Հասկցանք, հասկցանք . . . առ այժմ մսա-

վաճառին ու դեղագործին հաշիւը թող մէկ կողմ մնան, զորս ի վերջոյ մի առ մի աչքէ պիտի անցունեմ. հիմա ուրիշ ծախքերդ ըսէ .

— Այս ամիս հացագործին 250 հօխա հացի փոխարէն պարտք ունինք .

— Մսավաճառին հաշւոյն նայելով, հացագործը խղճահարու թեամբ վարուեր է . սակայն, մեր տունը այսչափ հաց կերթայ՞ մի եա' .

— Կերթայ, տէր իմ, կերթայ . «հացը կը վաղէ, մենք ալ անոր ետեւէն կը վազենք» կըսեն :

— Ի՞նչ կը մրմռաս . հասնու մի պիտի ըսենք, թէ ոչ հաշիւ պիտի տեսնենք .

— Մի' բարկանաք տէր իմ, հիմա շատ մարդիկ իրարու անանկ հասնելը կըսեն որ . . .

— Սա 2000 դրուշի գումարը ի՞նչ է .

— Տիկինին հրամանաւը տեղ մը տրուեցաւ :

— Այդ տեղը անուն չունի՞ :

— Ձի համարձակեցայ հարցնել :

— Շատ աղէկ . . . ուրիշ ի՞նչ կայ .

— Օրիորդ Յ.ին համար Բէրշըրօնի վաճառատունէն 10 թօփ նամակի ընտիր ոսկեզօծեալ թուղթ, 10 թօփ ալ նոյն տեսակէն պահարան տունուեցաւ, որոյ արժէքն է 140 ֆրանք .

— Ի՞նչ կըսես, վա'խթանկ, մեր աղջիկը վաճառականութեա՞ն սկսաւ . . .

— Ո՛չ, տէր իմ, երբեմն իւր բարեկամացը նամակ գրելուն պատճառաւ . . .

— Տէր ողորմեա . . . տէր ողորմեա . . .

—Ներկայ ամսոյս 13ին տիկնոջ հրամանաւր  
աղքատաց գանձանակը 630 դրշ. ձգուեցաւ .

—Վա'խթանկ, ինչե՛ր կըսես կոր, ես ալ եկե-  
ղեցի կերթամ, բայց շատ շատ 5-6 դրուշէն կել-  
լամ . . .

—Իրաւունք ունիք տէր իմ, բայց դուք աւե-  
լի աղէկ գիտէք թէ տիկինը շատ շատ բարեպաշտ ըլ-  
լալով, առատօրէն կ'ողորմի աղքատաց :

—Թող այդ ալ ատանկ ըլլայ . . . ուրի՛շ .

—Գարձեալ օրիորդ Փ.ին համար Մէղօն տը  
Միլ-Վիլին 150 ֆրանք կըծապանի (Քօրսէ) մը  
փոխարէն .

—Վա'խթանկ, դու մարները երթալով կ'երկն-  
նա՛ն կոր .

—Ներեցէք տէր իմ, օրիորդ Փ.ին ալ հասա-  
կը օր օրի կ'երկննայ կոր :

—Աստուած համբերութիւն տայ, Վա'խթանկ :

—Գարձեալ օրիորդին համար Պօնմարշէէն 1  
տուղինա առաջին կարգի Բուտըր տը ըօղ առ-  
նուեցաւ 40 ֆրանք .

—Այդ վուրտու պօղոսը ո՞վ կըլլայ կոր .

—Վուրտու պօղոս չըսի, բուտըր տը ըօղ, բէն-  
պէ բուտրա ըսել է :

—Պաւլօ՛ . մեր աղջիկը ինչե՛ր ալ սորվեր է .

—Շատ խելացի բան է, տէր իմ, Աստուած  
պահէ զինքը :

—Ալ ուրիշ բան մը չմտայ ա՛ .

— Հինգշաբթի օրը այն ինչ գիւղը երթալ գալու համար 569 զրշ. եւ 35 բարա ծախք եղաւ :

— Ի՞նչ ապուր կուտէ . խեղճեցա՞ր վախճանկ : այն ինչ գիւղը ասկէց կէս ժամուան հեռաւ որով թիւն մը ունի , հոն երթալու համար այսչափ ծախք . . . Չինաստա՞ն կը ճամբորդէք կոր , ի՞նչ կընէք կոր :

— Ներեցէք տէր իմ , կուզէք նէ՛ մի առ մի տեղը ցուցնեմ .

— Յցո՛ւր նայիմ , ցցո՛ւր , սա 569 զրուշը ո՞ւր խարճեցիր :

— Հինգշաբթի առաւօտ տիկինը զիս կանչեց , « այն ինչ գիւղը երթալով , Տիար Ս .ին տիկինը հիւանդ է եղեր , որպիսութիւնը տեղեկացիր եւ լուր մը բեր ինձի » ըսաւ .

— Շատ աղէկ :

— Փողոցի դռնէն դուրս ելլելուս պէս , բարեկամներէս մէկը դիմաւորեցի . « Ժամանակը դեռ կանուխ է , եկուր սա գարեջրատունը մտնենք եւ մէյմէկ դաւաթ նետենք , » ըսաւ .

— Հասկցայ , հասկցայ , նետելէն սկսաք նէ՛ հաշլին վերջը չպիտի գայ . . . Հիմա ընդհանուր պահանջդ ո՞րչափ է .

— Չըսածներովս 9236 զրշ . 35 բարա :

— Ա՛ռ սա 9 ոսկին , հիմա ինձմէ ճիշդ 200 զրշ . կուզես :

— Կը սխալիք տէր իմ , այս 9 ոսկին 972 զրշ . կընէ :

— Աս ոսկիները տեսա՞ր . . . ասոնց ամեն մէկը քեզի համար հազարական դրշ է, սորվէ՛, ու այսուհետեւ երթալիք տեղդ անոր համեմատ վարուէ .» — ըսելով, իւր գործունեայ մատակարարը կը ճամբէ : 8 .

— 0 —

## 20

Ծովային ճամբորդութիւն ընող անձ մը փափաքելով անգամ մ'ալ շոգեհաւուն խոհանոցէն ճաշել, նոյն օրուան պատրաստի կերակրոց ցուցակը աչքէ անցունելէն ետքը, դնոց տարօրինակ սղութենէն զարմացած՝ կըսէ սենեկապանին .

— Լաքին եա՛հու, թաամլարընըղ նէ՛ դատար թուզլու . . .

— Թաաճիւպ իթմէ յինիղ, մի՛ւսիւ, կը պատասխանէ սենեկապանը, մալիւմ ա՛, պուրասը տէնիղ տիր . պուրատա սուլար պիլէ թուզլու տըր :

— 0 —

## 21

## ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՉ

Թուարանութեան դատատուն .

— Պարոն Գառնիկ, մէկ օրը քանի՞ ժամ է .

— Քսան եւ հինգ .

- Քսան եւ հինգ մի' . . . ատանկ բան կըլլայ .  
 — Ի՞նչպէս չըլլար . անցեալները դուք չէի՞ք  
 ըսողը թէ օրերը ժամ մը երկնցաւ . . .

— 0 —

## 22

## ՓՈՔՐԻԿ ՎԱՀՐԱՄԸ

Առաջին օրն՝ որ փոքրիկ Վահրամ դպրոց գա  
 ցեր էր, մայրը գորովանօք կը հարցնէ իրեն .

— Եկուր նայինք, Վահրամ, այսօր դպրոցը  
 ի՞նչ սորվեցար .

— Բան մը չի սորվեցայ :

— Մինչեւ իրիկուն ի՞նչ ըրիր .

— Բան մը չըրի . կնիկ մը կար հոն, ինձի հար-  
 ցուց որ քերական կարդացե՞ր եմ . այո՛ ըսի . կա-  
 տուն ընտո՞ր կը կապես ըսաւ . . .

— Էյ դուն ի՞նչ ըսիր .

— Պոչէն կը կապեմ ըսի :

Գ .

— 0 —

## 23

## ԳԻՆՈՎ ՏՐԱՄԱԲԱՆ ՄԸ

« — Որովհետեւ ամեն քայլերդ այդպէս կը  
 գլտորեցնէ զքեզ, մի՛ խմեր այդ գինին — » կըսէ  
 բարեկամ մը, գինովին մէկուն .



— Ոչ, կը պատասխանէ գինեմոլը, գինին յան-  
ցանք չունի, ես գէշ կը քալեմ կոր :

— 0 —

## 24

### ՄԱՏԱԿԱՐԱՐՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐԸ

Հարսնիքի մը առջի օրը մատակարար մը կառա-  
վարի մը հետ սակարկութեան մտեր է այսպէս .

— Պարոն կառավար, վաղը տիրոջս տղուն հա-  
մար հարսառի պիտի երթցուի, եթէ սակարկու-  
թիւննիս յարմարի՝ վաղը ժամը ճին կառքդ կառ-  
նես մեր տունը կուգաս .

— Շատ աղէկ, պարոն, ինչո՞ւ չի պիտի յար-  
մարի .

— Ժամը 7ին հարսառի պիտի երթան եւ 10ին  
վերադառնան :

— Աղէկ կըլլայ :

— Ո՞րչափ պիտի վճարենք .

— Ի՞նչ գիտէք . . . քսան ֆրանք տուէք .

— Օ՛ . . . քսան ֆրանքը շատ չէ՞ մի ես՛ . . .

— Շատ չէ, Պ, մատակարար . . . ասոր հարս-  
նիք կըսեն, ուրիշ բանի չի նմանիր . . . մենք ալ  
ասանկ օրերու կ'սպասենք . . .

— Շատ աղէկ, ես այդ գումարը պիտի վճա-  
րեմ, բայց դուն ալ ձեռք մը նոր հագուստ  
ունի՞ս .

— Կը գտնուի . . . բանի մը կը յարմարցնենք :

— Աւրեմն նոր հագուստներդ աղւոր մը հագնելով՝ ածիլուելու եւ մազերդ ալ հիմակուան ձեւով յարդարել տալու ես. . . հա՛, նայէ՛, այս գլխարկը չըլլար, նոր մը ա՛ռ. նմանապէս նոր կոշիկներ պիտի հագնիս եւ ճերմակ նոր ձեռնոց պիտի դնես :

— Ներեցէք պարոն մատակարար, ես ճայմիշ եղայ, չեմ կրնար գալ :

— Ինչո՞ւ :

— Հարսը ես առնելու չեմ. . . տեանողը չի տեսնողը փեսան ա՛ս է պիտի ըսեն :

— 0 —

## 25

### ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Կինը . — Աս տարի ծովը մտար նէ, սանքիմ ֆայտա մը տեսա՞ր :

Այրը . — Է՛հ, փառք Աստուծոյ, սրզըներուս էբէյի ֆայտա ըրաւ :

Կինը . — Պարէ լողալ սորվեցա՞ր :

Այրը . — Կնիկ, ատոր դուն ալ շաշմիշ եղիր՝ ես ալ . սա ամեն օր պարտքին մէջ կը լողամ կոր տէ, ի՞նչ կըսես, պիր թիւրլիւ ծովուն մէջ չեմ կրնար կոր ույտուրէր :

— 0 —

## 26

## ՃԱՐՊԻԿ ՔՍԱԿԱՀԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Ամերիկացի քսակահատաներու ընկերութեան անդամներէն մին, կեղծ աղամանդ մը առած՝ հրուշակաւոր հարուստ աղամանդավաճառի մը խանութը երթալով, աղամանդ կուզէ գնել. աղամանդավաճառն անմիջապէս աղամանդներ պարունակող տուփ մը անոր կը ներկայէ: Քսակահատն աղամանդները զատել կեղծելով, զանոնք ձեռքին մէջ դէս ու դէն դարձնելէն եւ իւր քովը գտնուած կեղծ քարին խոշորութեամբ աղամանդ մը գրպանելէն վերջը, կեղծը անոր տեղ տուփին մէջ կը սահեցնէ եւ «Ներեցէք, այս աղամանդներուն չի հաւնեցայ» ըսելով, կը մեկնի:

Աղամանդավաճառը տուփին մէջ գտնուած քարերը աճապարանօք համրելով, ճշդութիւնը ստուգելէն վերջը՝ տուփը իր տեղը կը դնէ. իսկ քսակահատը ընկերները գտնելով, գողցած աղամանդը անոնց ցուցնելով, հպարտութեամբ կըսէ.

— Ընկե՛րք, գիտէ՞ք թէ այսօր խիստ թանկագին աղամանդ մը գողցայ:

— Բէ՛հ . . . աղամանդ մը գողնալն ալ այդչափ մե՞ծ բան է, կը գոչէ ընկերներէն մին, զայն ծաղրելու եղանակաւ:

— Մեծ բան մ'է մի՛ կըսես . . .

— Վարպետութիւնը այդ աղամանդին ընկերները իրենց տուփովը գողնալ բերելն է:

— Բայց ի՞նչպէս կըլլայ, երբ վաճառողը աչքը  
չորս բացած . . .

— Կուղէ՛ նէ՛ աչքը հինգ բանայ, ճարպիկու-  
թեամբ ամեն բան կըլլայ .

— Բայց . . .

— Աւելորդ խօսք չուղեր . այդ ադամանդը ին-  
ծի տուր, ես հիմա կերթամ ասոր ընկերները  
տուփովը կը բերեմ :

Այս որոշումէն ետքը ադամանդավաճառա-  
տան ո՛ւր գտնուիլը իւր ընկերէն կը տեղեկանայ  
եւ քահանայական հաղուստով ծպտեալ, շունչը  
ադամանդավաճառին խանութը կառնէ, ուր պահ  
մը դադար առնելէ վերջը, ընկերոջը գողցած ա-  
դամանդը վաճառականին ներկայելով կըսէ .

— Որդեակ իմ սիրեցեալ, քանի մը օր առաջ  
արդեօք այս թուով ադամանդ մը կորուսի՞ր .

Վաճառականը դող ելած՝ անմիջապէս ադա-  
մանդին տուփը բերելով կը տեսնէ որ քահանային  
ըսածը ստոյգ է, եւ թէ ադամանդներուն մէջ  
կեղծ քար մը կայ . ու մինչդեռ իւր շնորհակա-  
լութիւնն յայտնել կը պատրաստուի, կեղծ քա-  
հանայն կորուսեալ ադամանդը անոր վերադար-  
ձնելով, խրատական ոճով մը կըսէ .

— Զաւա՛կս, այս ադամանդը գողցողը խղճէն  
տանջուելով եկաւ զիս գտաւ . զինքն ըստ իմ նը-  
ւիրական պարտաւորութեան յորդորելէ ետքը  
ըսի որ չըլլայ թէ ուրիշ անգամ այսպիսի յան-  
ցանք մը գործէ . առ այս արտասուաթորմ աչօք

զղջում յայտնելով ապահովցուց զիս թէ յետ այնորիկ նմանօրինակ արարքի մը մէջ չպիտի դտնուի : Արդ դու ալ, սիրելի՛ որդեակ, դու եւս ներէ՛ իրեն եւ կաղաչեմ որ զինքը ոտիկանութեան չի մատնես . բայց աստի, ձեզի ալ խրատ մը ունիմ, հիմա, ինչպէս որ գիտէք, աշխարհի մէջ վատահելի անձնաւորութիւնները հազուադիւտ են . օրինակի աղաղաւ, սա աղամանդին տուփը չէ՞, յաճախորդ մը կը ներկայանայ եւ աղամանդ կուզէ գնել, դուք ալ այս տուփը իրեն կը ներկայացնէք որ ուղածը հաւնի, եւ աղամանդները դիտած պահուն կը տեսնէք որ դրանք մօտեցած, զայն դրսէն փակելու պէս ձեւեր ըրած միջոցին դուռը դուրսի կողմէն փակելով կը փախչի :»

Կեղծ քահանայն այս խօսքերը արտասանած ատեն, ճիշդ իւր ակնարկած յաճախորդին ընթացքը օրինակել ջանալով, տուփը կառնու, սենեկէն դուրս կելլէ եւ գրպանը պահած գործիքով մը ի քթթել ական դուռը արտաքուստ փակելէ վերջը կը փախչի :

Խեղճ աղամանդավաճառը քահանային նորէն դուռը բանալով ներս մտնելուն կ'սպասէ, բայց ի զո՛ւր . յայնժամ իրողութեան վերահասու լինելով ասի ի բերան կը մնայ այսպիսի ճարպիկ գողութեան մը զոհ երթալուն համար :

## 27

## ՎԱՐԺԱՐՄԱՆԻ ՄԷՉ

Կառավարչի մը հագած կրկնոցին անութին (գօլթուղ) կարը քաղուած էր . զուարճախօս աշակերտ մը զայն իւր քովը նստող ընկերոջը ցուցընելով ըսաւ .

— Կը տեսնե՞ս , ուսումն եւ գիտութիւնը կառավարչին անութին տակի բացուած ծակէն դուրս կը նային կոր :

Այս խօսքին վրայ ընկերը բարձրաձայն ծիծաղեցաւ : Կառավարիչը խնդրէն տեղեակ լինելով պատասխանեց .

— Այո , պարոններ , անմտութիւնն ու անպիտանութիւնն ալ այն ծակէն ներս կը նային կոր :

— Ուրեմն գոցելու է այդ պատուհանը , կրկնեց զուարճախօսը քթին տակէն :

— 0 —

## 28

## ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՔ

— Եւ այի համար կըսեն թէ բարի կին մ'էր , արդեօք իրա՞ւ է .

— Կը հաւատամ , վասն զի այն ատեն երկրիս վրայ Ադամէն զատ ուրիշ մարդ չի կար :

— 0 —

## 29

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԹՈՒԹԵԱՆ

ՀՐԱՇԱԼԻԲ Մ'ԱԼ

ԿԱՄ

ՄԱՅՐ ՏԸ ՍԷՆ — ԲՕՁՕ

Վշտերու խորագոյնն կրնայ համարուիլ հօր մը համար, իւր որդւոյն մահամերձ վիճակն. իսկ եթէ կայ կսկծեցուցիչ վիշտ մը, անբաղդատելի թշուառութիւն մը, բժիշկ հօր մը յուսահատութիւնն է, որ զաւկին իւր գրկացը մէջ մեռնիլը կը տեսնէ. զի իբրեւ հայր կը վշտակրի եւ իբրեւ բժիշկ կ'երկրայի գիտութեան վրայ:

Այսպէս էր Պ. տը Մէղէննէօվի յուսահատ վիճակը, երբ կ'սկսի այս պատմութիւնը:

Պ. տը Մէղէննէօվ տօքթօրը ի Ֆրանսա Օրմէսօն դալարագեղ գիւղին մօտ կառուցեալ այգեատանի ամարանոցի մը մէջ կը բնակէր: Յիսուն տարեկանի մօտ մարդ մ'էր, թէեւ քառասուննոց հազիւ կերեւար, գիմաց այնպիսի գեղեցկութեամբ՝ որ առաջին տեսնուելուն զգայնութեան դանձ մը կը պարզէր մարդուն աչքին:

Բարիզու գլխաւոր անկեղանոցաց միոյն մէջ բրժկապետ, տնօրէն ախտաբանական ձրի դասարանի մը՝ ի պէտս դեռահաս բժիշկներու. իւր յաճախորդաց շատութենէն օրուան 15 ժամերը անոնց տալ ստիպուած Պ. տը Մէղէննէօվ, քսանամեայ սոյն բեղմնաւոր փորձառութենէն յետոյ, տարւոյն միայն հինգ ամսուան մէջ եւ այն ալ շարաթը երեք անգամ կուգար իր ընտանեաց ծոցը իւր ծանր աշխատութենէն հանգիստ առնուլ:

Տօքթօրին ընտանիքը կնոջմէն, տղէն եւ քեռ-  
աղջկէն կը բաղկանար: Քեռաղջիկը՝ Լիւսէթ, վեշ-  
տասնամեայ, որ անուշիկ գանգրահեր էր, իսկ  
տղան Լիւսիէն՝ քսան տարեկան, դեղեցիկ եւ սեւ  
մազերով: Այս կապացուցանէ թէ բնութիւնը զա-  
նոնք մին միւսոյն համար ստեղծած էր: Գէթ  
այսպէս կը մտածէին տօքթօրն ու կիներ:

Արդ, իրիկուն մը Լիւսիէն սովորականէն քիչ  
մը ուշ եկած էր երեկոյեան ճաշի. տօքթօրը թե-  
թեւ մը կշտամբեց նորա անճշդապահութիւնը.  
որդին ինքզինքը պաշտպանելու համար քանի մը  
խօսք կակաղեց. Լիւսէթ ալ օգնութեան հասաւ,  
որ ատեն հայրը իւր տղուն այլափոխեալ երեսը  
կը դիտէր:

- Անօթի չե՞ս, Լիւսիէն, հարցուց զարմանօք.
- Ո՛չ, հայր իմ, պատասխանեց յուզեալ ձայնիւ:
- Ուրեմն, տղա՛ս, ընթրած ես, հարցուց մայրը.
- Ո՛չ մայր իմ, կրկնեց հառաչք մը զսպելով:
- Յայնժամ պէտք է որ ճաշես, շեշտեց մայրը:
- Անօթի չէ՛, մրմռաց հայրը, զայն քննելով.
- Արդեօք հիւա՞նդ է, աղաղակեց մայրն դող  
ելած:

— Տակաւին հիւանդ չէ՛, պատասխանեց բժիշկը  
որդւոյն բազկերակը բռնելով, սակայն, ըլլալու  
վրայ է: Զմեզ առանձին թո՛ղ, Քաթէրի՛ն, նոյն-  
պէս դու ալ, Լիւսէ՛թ:

Մայրն ու մատաղահաս աղջիկն հեռացան:

— Նստէ՛ Լիւսիէն, ըսաւ հայրը, եւ խօսակցինք:  
Քանի մը ամիսէ ի վեր դու տխուր ես, չեմ գի-  
տեր թէ ի՞նչ կրնայ պատահած լինիլ քեզ, զայն  
չեմ հարցներ, վստահ լինելով որ եթէ պատիւդ  
կամ կեանքդ ի վտանգի լինէր, հօրդ պիտի գե-  
կուցանէիր զայն, իբրեւ առ վաղեմի բարեկամ:



Պատանին ուղեց ընդ միջել զհայրը .

— Մի՛ պատասխաներ , յարեց հայրն , քիչ մ'ալ մտիկ ըրէ . քսան եւ հինգ տարեկան ես , սիրտդ կը տաղտկանայ , ըստ որում գծադրութիւնը զոր ինչ խոստացաւ քեզ , խոստմունքը չի բռնեց . տարիէ մ'ի վեր քու բարոյական առողջութիւնդ ուսումնասիրելէս հասկցայ թէ դառն կերեւայ քեզի կեանքը . . . դու հիւանդ ես . ուրեմն զքեզ բուժելու միջոցը գտած եմ , պէտք է զքեզ ամուսնացնել :

Երիտասարդը գլուխը ցնցեց :

— Կեցի՛ր , ըսաւ հայրը , նորա շարժման պատճառը հասկնալով . Լիւսէթն է զոր իբր կին կը նուիրեմ քեզ :

— Լիւսէթը , բացագանչեց պատանին , ապշութեամբ հօրը նայելով , որպէս թէ ըսած խօսքը չէր հասկնար .

— Մնչուչաւ Լիւսէթը . . . չեմ կրնար մեկնել թէ ի՛նչ է այդ զարմացումդ . . . ազգականուհւոյդ վերայօք մեղադրելի ի՞նչ ունիս ըսելիք .

— Ճշմարիտն ըսելու համար , ոչինչ , հայր իմ :

— Հիանալի գեղեցկութեամբ , անզուգական բարութեամբ , յոյժ բարեկիրթ . ուսումնական եւ ուշիմ աղջիկ մ'է . ի մի բան , անոր հետ մեկտեղ կրթուած չե՞ս եւ ամեն կերպով չե՞ս ճանչնար զինքը :

— Կը ճանչնամ , հա՛յր , եւ կարծեմ իսկ թէ քիչեր կը գտնուին անոր հետ բաղդատելի :

— Ուրեմն , երբ կ'առաջարկէի քեզ ամուսնանալ նորա հետ , ուստի՞ էր այդ զարմացումդ .

— Ես . . . չեմ սիրեր զնա . հայր իմ . կակաղեց պատանին :

— Չես սիրեր . . . պոռայ հայրն զարմանօք .

ապա ուրեմն խենդ եցե՞ր ես, կամ դու ալ ժամանակիս առասպելական վարդապետութեանց մէջ ընկած ես . . . Միթէ Պ. Տըլաքրուայի դասարանին մէջ այս է քեզ ուսուցածնին : Կուզե՞ս ինձ բացատրել թէ ընդէ՞ր չես սիրեր գեղեցկութեամբ եւ առաքինութեամբ օժտեալ օրիորդ մը, որ իմ անցելոյս, ներկայիս եւ ապագայիս ուրախութիւնն է . տանը պահապան հրեշտակն է զոր քեզ կնութեան կուզեմ տալ, իսկ դու զայն չ'սիրե՛ս . . . :

— Չերմապէս կը սիրեմ զնա, հա՛յր իմ. եթէ նորա կեանքը ի վտանգի լինէր, փոխարէն իմս կուտայի . կը սիրեմ զնա իբրեւ քոյրս, բայց ո՛չ այլ կերպիւ :

— Սակայն, որդեա՛կ իմ . . .

— Հա՛յր իմ, գոչեց Լիւսիէն շուարելով եւ աչքերը խոնարհեցնելով, եթէ ներելի լինէր ըսել . . .

— Գաղտնիքդ չեմ հարցներ քեզ . այլ գէթ կըր նամ պարծիլ, այնպէս չէ՞, զաւակս, թէ հօրդ պատիւը ի վտանգի չէ՛ :

— Ա՛հ, հա՛յր իմ, փութաց գոչել երիտասարդը ձեռքերը կցելով, կարող եմ երդնուլ քեզ . . .

— Հաւաստի եմ առ այդ, ըսաւ բծիշկը երկուքայլ եւս որդւոյն մօտենալով եւ անոր ձեռքը բռնելով, սակայն եթէ քու բարոյական առողջութիւնդ զիս կը վստահեցնէ, Ֆիզիքական առողջութիւնդ ինձ հոգ կը պատճառէ : Իու տենդէ բռնուած ես, զա՛ւակս, ուստի անմիջապէս անկողին մտնելու ես :

— Ո՛չ, ո՛չ հայր իմ, ո՛չ, ըսաւ Լիւսիէն արտասուալից աչօք հօրը նայելով .

— Ուրեմն ի՞նչ ունիս որդեակ իմ, գոչեց հայրը, որդին բազկացը մէջ առած . կուլա՞ս դու, զաւակս, եւ ինչո՞ւ կուլաս . . .

Երիտասարդը հօրը պարանոցին փարած, մանկան մը պէս սկսաւ լալ: Բժիշկը նորա գլուխը ձեռացը մէջ առաւ եւ կաթոգին սիրով երեսը նայելով ըսաւ.

— Ճիղիքական թէ բարոյական, ինչ որ ալ լինի վիշտդ որդեակ իմ, տո՛ւր ինձ նորա գաղտնիքը:

— Հա՛յր իմ, աղաղակեց Լիւսիէն հեծկլտալով, այն՝ զոր կը սիրեմ, պիտի մեռնի՛ . . .

— Բայց ես հոս չե՞մ, սիրելի որդեակս, գոչեց բժիշկն հպարտութեամբ, ապա դառնալով դէպ ի դուռն, ձայնեց. « — Քաթէրի՛ն, Լիւսիէ՛թ, Ժա՛ն, Ժէնրվիէ՛վ, շո՛ւտ, հասէ՛ք. — »

Ձէր հարցուցած որդւոյն թէ զո՞վ կը սիրէր, ի՞նչ հիւանդութենէ բռնուած էր, ո՞րպիսի յատկութիւն ունէր, ի՞նչ էր անունը, եւ ուրիշ շատ մը բաներ, զոր հարցնելու իրաւունք ունէր. նա, զոր տղան կը սիրէր, կը մեռնէ՛ր. ուստի տանը մէջ գտնուողները կը կանչէր աւելի շուտ յօգնութիւն փութալու համար, ըսելով Ժանի՛ որ կառքը լծէ, Ժէնրվիէվի՛ որ վերարկուն բերէ, Լիւսիէթի՛ որ գաւազանը տայ եւ կնոջը՝ որ գլխարկը բերէ: Յետոյ, առանց կնոջն ու քեռաղջկան այս յեղակարծ մեկնման բացատրութիւնը տալու, երիտասարդին հետ տունէն մեկնեցաւ:

Մէկ ժամէն ետքը, կառքը ֆօմարթէն փողոցը բաւական գեղեցիկ երեւոյթով տան մը առջեւ կեցաւ: Իռնապանը տան դուռը կ'սպասէր խիստ յուզեալ: Երիտասարդը կառքէն դուրս նորա բազուկներուն մէջ նետուեցաւ, գոչելով. — Ի՞նչպէս է. —

— Աւա՛ղ, սիրելի պարոնս . . . փութացէ՛ք, խեղճ օրիորդը շատ գէշ վիճակի մէջ է:

— Սիւզա՛ն, Սիւզա՛ն, մրմնջեց Լիւսիէն ցաւագին ձայնիւ, եւ առանց մտածելու իւր հայրը՝ որ

կը հետեւէր իրեն, երեք յարկերէ արագարար  
ելաւ, աղեխարչ ձայնիւ կրկնելով.

«Միւզա՛ն, Միւզա՛ն:»

Երբ սենեակը մտաւ, ինկա՛ւ երկու բազուկնե-  
րու մէջ, զոր աղջիկը առ ինքն կ'երկարէր:

Հազիւ թէ անոր սնարի քովն էր, եւ ահա Պ.  
տը Մէզէննէօվ, որ կատարեալ հայրական արա-  
գափոյթ կերպիւ նմա կը հետեւէր, գրեթէ ա-  
նոր հետ մտաւ սենեակը. սակայն զարմանքէ զար-  
հուրանքէ եւ աչքին առջեւ պարզեալ տեսարա-  
նէն սարսափահար՝ պահ մը կեցաւ:

Ստուգիւ, սենեկին մէկ անկիւնը, բոլորովին  
ճերմակ բեհեզներով պատեալ եւ սպիտակ կուճէ  
առկախեալ զամպարով լուսաւորեալ (մարդ կը-  
սէր թէ Սուրբ կուսի մատուռն է) եւ անկողնոյ  
մէջ աղօտ սպիտակութեամբ, (պիտի ըսուէր պա-  
տանքի մէջ) որոյ սնարին քովիկը Լիւսիէն ծըն-  
րադրած էր, բժիշկը հրաշալի գեղեցկութեամբ  
աղջկան մը կէս-անկենդան երեսը նշմարեց:

Հազիւ տանն եւ ինն գարուններ անցուցած կ'ե-  
րեւէր, եւ թէպէտ մահու հրեշտակը արդէն նո-  
րա ճակտին վրայ իւր ծաղկեպսակին դալկագոյն  
մանիշակներու թերթիկներն թօթափեր էր, թէ-  
պէտեւ նորա շրթունքը մարմարիոնի սպիտակու-  
թիւնն ունէին, թէպէտեւ այտերը երկարաանեւ  
հիւանդութենէն խոռոչացեալ էին, սակայն ով որ  
զինքը այսպէս տեսնէր՝ զարմանահար պիտի մնար,  
վասն զի այն սերովբէն, որ զնա իւր թեւերուն  
տակ առած պիտի տանէր, անշուշտ աւելի խար-  
տիշագեղ խոպոպներ չունէր. այն անսահման տա-  
րածութիւնն, ուր պիտի առաջնորդէին զինքն,  
աւելի երկնակապոյտ շէի՛ն քան զոր ունէր իւր  
աչկունք: Միով բանիւ, գեղեցիկ էր:

Բժիշկը հիւանդին շլացուցիչ գեղեցկութեան

վրայ պահ մը հիացեալ մնաց . ապա , իւր զաւակին հեծեծանքը լսելով , դէպ ի ծաղկահաս հիւանդն առաջացաւ , ականապիշ զայն դիտեց , ձեռքէն բռնեց եւ մեքենայաբար զարկերը համբեց :

Պէտք չունեցաւ երկու անգամ նայելու , մահը՝ նորա աչքերուն մէջ , ճակտին եւ շրթունքներուն վրայ էր , եւ կը թուէր թէ երիտասարդին դալտեանը կ'սպասէր , զաղջիկը աւելի թեթեւ կերպիւ առնել տանելու համար :

— Հայր իմ , պուաց Լիւսիէն աղեկէզ ձայնիւ , ի՛նքն է . . . Սիւզանն է . . . երեք տարիէ ի վերոնը շանածս , կը հասկնա՞ս , նշանածս եւ ո՛չ թէ կինս : Ազատէ՛ զինքը . . . —

Պ . տը Մէլէննէօվ տխրութեամբ դլուխը խոնարհեց :

— Հայր իմ , կրկնեց Լիւսիէն հեծեծագին , ազատէ՛ զինքը — : Յետոյ աշխուժիւ ոտք ելլելով փարեցաւ բժշկին պարանոցը , որպէս զի նորա աչքերուն մէջ լաւ մը ընթեռնու նշանածին կենաց եւ մահու դատակնիքը :

— Մտիկ ըրէ՛ , ըսաւ հաստատամտութեամբ եւ յուսահատ շեշտիւ , ազատէ՛ զինքը կամ սպաննէ՛ զիս . . . ա՛ն այս կեանքն ինձմէ՛ զոր տուիր ինձ . . . ինչի՛ պիտի ծառայէ կեանքն ինձ , առա՛նց անոր :

Հայրը ցաւագին կերպիւ դլուխը շարժեց , առանց նշմարել թուելու այն սիրահարի խորին ինքնասիրութիւնը , որ զաշխարհ համայն պիտի զոհէր սիրեցեալ կնոջը :

Իսկ Լիւսիէն սոսկման ճիշ մը արձակեց տեսնելով յանկարծ բժշկին արդէն այնքան տխրամած երեսին մթագնիլը :

« Սիւզա՛ն , Սիւզա՛ն , » աղաղակեց աղեխարշ ձայնիւ , նորէն գիմելով մատուղատի աղջկան :

Աղջիկը նորա ձայնէն թուեցաւ թէ կը վերա-

կենդանանայ, ուստի գլուխն անոր դարձուց եւ  
երկնադոյն չքնաղ աչքերը կէս մը բացաւ :

— Լիւսիէն, — ըսաւ խանդակաթ սիրով, եւ  
իւր վտիտ փոքրիկ ձեռքը նմա երկարեց :

« Լիւսիէն, » կրկնեց ա՛յնքան անոյշ ձայնիւ, որ  
կարծես արեւելեան հողմոյ շունչ մը դարնան ա-  
ռաւօտ մը կիսաբաց դաշնակի մը լարերը շոյեց :

« Լիւսիէն . . . ձեռքդ . . . մեռնելու համար քե՛զ  
կ'սպասէի . . . »

— Սիւզա՛ն . . . Սիւզա՛ն . . . պուայ Լիւսիէն հե-  
ծեծանօք :

— Հա՛յրդ է . . . շարունակեց հիւանդն, այնպիսի  
մեղմ ձայնիւ, որ հազիւ կը լսուէր. տալա՛ հրեշ-  
տակային աչքերով բժշկին նայեցաւ եւ միւս ձեռ-  
քին առ նա երկարեց :

Պ. տը Մէզէննէօվ նորա ձեռքը իւր շրթանցը  
մօտեցուց :

— Ահա այսպէս, ըսաւ Սիւզան փոփոխակի թէ  
բժշկին եւ թէ երիտասարդին նայելով. ուղեցի  
մեռնիլ, որդիէն սիրուելով եւ հօրմէն օրհնուելով :

— Սիրելի՛ աղջիկս, բացագանչեց բժիշկն, յար-  
տասուս փղձկեալ :

— Սիւզա՛ն, Սիւզա՛ն, գոչեց Լիւսիէն, եթէ  
դու մեռնիս, ե՛ս ալ կը մեռնիմ :

Սակայն Սիւզան չի լսեց :

Որպէս երկու մանիշակ լուսնոյ առաջին շողէն,  
նայնպէս ալ նորա երկու աչքերը գոցուեցան :

Իւր սիրային վերջին խօսքն դողդոջ կերպիւ իւր  
շրթանցը վրայէն անցաւ, նման երեկոյեան զե-  
փիւռի մը, որ շուշանի դաշտի մը վրայէն կ'անցնի :

Մրմնջեց, այնչափ որ չի լսուեցաւ իսկ :

— Կը սիրե՛մ զքեզ : —

Այս եղաւ ամենն :

Լիւսիէն կայծակի արագութեամբ աղջկան կու-

սական մարմինը թեւերուն մէջ առաւ, որոյ հոգին դէպ ի բոցամիայլ ամպե՛րը կը թռէր եւ երկնային դասուց սերովբէք արդէն քոյր մ'ալ կը թռէին մէջերնին: Լիւսիէն չի կրցաւ իմանալ կեանքէ ի մահ փոխանցման զարհուրելի արադու-թիւնն, այլ կարծեց թէ ջղային տկարութենէ մը բռնուած՝ մարած է, երեսը անոր երեսին մօտեցուց. սակայն տենդէ բռնուածի պէս ամբողջ մարմնովը սարսուաց, երբ շրթունքը Սիւզանի մարմարեայ ճակտին ու անշունչ բերնին դպաւ:

Վայրկեան մը կեցաւ նոյն դիրքով, եւ յանկարծ կրակոտ համբոյրներով սկսաւ ծածկել Սիւզանի երեսները, որոյ արտեւանունքը բարձրացան եւ աչաց կապտագոյնն երեւցաւ վերստին:

— Ողջ է, հա՛յր, երեսս կը նայի. — պոռաց հէք սիրահարն, բայց սոսկալով ընկրկեցաւ եւ ինկաւ անկենդան հօրը թեւերուն մէջ, երբ տեսաւ որ աղջկան աչքերը թէեւ բայ՝ այլ անշարժ եւ անճառագայթ էին:

«Շուտով առնենք տանինք», ըսաւ Պ. տը Մէդէննէօվ հիւանդապահին եւ դռնապանին, որ վեր կելնէին:

Եւ երկու կանանց օգնութեամբը Լիւսիէն կառքը փոխադրուելէ ետքը, ձիերը սրարչաւ ճամբայ ելան ի փողոցն Փօնթիէօ, ուր էր բժշկին տունը:

\*  
\*  
\*

Ամիս մը ետքը Պ. տը Մէդէննէօվ իւր տղուն անկողնոյն սնարը նստած, կինն ու քեռաղջիկը քովն ունենալով, աննկարագրելի անձկութեամբ կուսումնասիրէր նոր տագնապին աղբեցութիւններն, ում ենթարկուած էր երիտասարդն:

Պ. տը Մէդէննէօվ, որ տղուն սենեկին կից սենեկի մը մէջ անկողին մը դնել տուած էր, առա-

ւօտ մը երիտասարդին հանած սուր ճիշերէն ընդոտտ արթնցաւ : Զարհուրելով մօտեցաւ որդւոյն , գիտնալով որ , այն հիւանդները , որոց խմացականութիւնը կատարելապէս : խանդարեալ է , անոնք սուր ճիշեր կարճկեն :

Այո , Լիւսիէն , աւա՛ղ , խենդեցեր էր :

Խեղճ հայրը յուսահատեալ , իւր գիտութեան ամեն զօրութիւնները յօգնութիւն կը կոչէր . . . Սակայն վայրկեաններ կան , ուր գիտութիւնը կը լայ համր , կոյր եւ խուլ , եւ ինչ ինչ պարագայի մէջ կը նմանի մահուան : Ահա այս պատճառաւ պատմութեանս սկիզբները ըսինք թէ իւր որդին մահամերձ գտնող բժշկին վիշտը կրկի՛ն էր վասրն զի իբրեւ հայր , կը վշտակրի , եւ իբրեւ բրժիշկ , գիտութեան վրայ կ'երկբայի :

Արդ իւր պաշտօնակցաց երեքը խորհրդակցութեան կանչեց , վասն զի իւր ուղեղն ալ ամսէ մը ի վեր սկսէր էր նոյնպէս շփոթիլ . որովհետեւ բաց ի այն բաղմամբիւ դրաղմունքներէ , ընդ որս խօսեցանք վերեւ . գիշեր ցերեկ տղունքով անքուն կը հսկէ՛ր . ուստի իւր պաշտօնակցաց հռչակաւորներէն երեքը բերել տուաւ : Խորհրդակցութիւնը իւր գիտցածէն աւելի բան մը չի սորվեցուց . միայն թէ տարակուսելու մասին մէկի տեղ չորս եղան . ահա այսչափ :

Ըսինք թէ Պ . տը Մէղէննէօվ երբ Սիւզանի սենեկէն ներս մտաւ , ծաղկագեղ կոյսը տեսնելուն սաստիկ զարմանք մը եկաւ վրան , եւ երբ նորա ձայնը լսեց՝ զարմանքը կրկնապատկեցաւ :

Արդ , ամեն անգամ , սր Լիւսիէն զառանցանացը մէջ Սիւզանի անունը կուտար , հօրը կը յիշեցնէր պատկեր մը , զոր կատարելապէս կը ճանչնար . նորա ձայնը յիշեցնել կուտար ձայն մը , զոր հարիւր անգամ լսած էր , բայց ո՛ւր եւ ե՛րբ . . .



Ամիս մը շարունակ ճգնեցաւ սոյն եղական երեւութիւն մեկնութիւնը տալու : Վերջապէս առաւօտ մը կանուխ արթնցած, երբ պատուհանին առջեւ կեցէր կը մտածէր, փողոցէն գթութեան քրոջ մը անցնիլը տեսնելով, մէկէն ի մէկ իւր երազին մեկնութիւնը, իւր խուզարկած նմանութեան բացատրութիւնը գտաւ :

«Գտա՛յ» պռուաց, իսկոյն պատուհանը գոցելով և հնչակը զարնելով :

Ծառայն ներս մտաւ և հրաման առաւ իսկոյն կառքը լուծելու :

Կէս ժամէն ետքը տօքթօրը իւր հիւանդանոցէն ներս կը մտնէր եւ սովորական այցելութիւնը կընէր երկու սրահներու մէջ պառկած հիւանդներուն : Այս այցելութենէն ետքը գնաց

\* \* \* կարգ քերց միայնարանը, որոնց յանձնած են հիւանդաց խնամքներն :

Մեծաւորուհին խնդրեց :

Աբբասուհին անմիջապէս եկաւ :

Հիւանդանոցի բնակիչք Պ. տը Մէզէննէօվի համար տեսակ մը հաւատք ունէին, իբրեւ բժիշկ կամ իբր փիլիսոփայ : Չկար քոյր մը, հիւանդապահ մը, գործակալ մը, հիւանդ մը, որ երախտապիտութիւն մը չի պարտէր առ բժիշկն : ոմանք իրենց կենաց համար, այլք այն թշուառութեանց համար՝ ուստից փրկեր էր զիրենք : ի մի բան, իւրաքանչիւր ոք բժշկին համար կրակը պիտի նետուէր, եթէ առիթը ներկայանար :

Արդ, երբ արբասուհին ի խօսարան իջաւ, իւր առաջին խօսքը սա եղաւ :

— Տօքթօ՛ր, արդեօք ձեզ ծառայութիւն մը մատուցանելու երջանիկ առիթը եկած է :

— Այո՛, մայր իմ, եթէ այդ առիթը կը փնտրուէք, գտած էք :

— Շուտ ըսէք, տօքթօր, ի՞նչ է խնդիրը .

— Խնդիրը զաւկիս վրայ է, մայր իմ. պատասխանեց բժիշկը տրտմազին .

— Ի՞նչպէս է այսօր, հարցուց քոյրը բուռն հս. դածուծեամբ. երեկէն ի վեր տեղեկութիւն մը առած չեմ, ուստի անձկութեան մէջ էի .

— Շնորհակալ եմ, մայր իմ, ֆիզիքապէս շատ աղէկ է, իսկ մտաւորապէս զիս կը զարհուրեցնէ՛ . եւ ահա այդ բարոյական առողջութիւնը բարւոքելու նպատակաւ է որ կուզեմ ձեզի հետ խօսիլ .

— Առ ի՞նչ բան կրնամ օգնել ձեզ, տօքթօր .

— Ձեզմէ տեղեկութիւն մը պիտի խնդրեմ, եւ թերեւս առնելիք պատասխանէս կախեալ է զաւկիս փրկութիւնը .

— Ի՞նչ կը փափաքիք գիտնալ, հարցուց արբասուհին յուզմամբ .

— Երկու տարի առաջ, իմ սրահներուս միոյն մէջ նորընծայ քոյր մը կը աեանէի ի ծառայութեան, զոր Մարթա կը կոչէին. արդ, քոյր Մարթա դարձեալ ձեր միաբանութեան անդամակից է .

— Այլ եւս քոյր Մարթա գոյութիւն չունի, պատասխանեց մեծաւորուհին .

Տօքթօրին դէմքը փողպատին նման ճերմկեցաւ .

Մեծաւորուհին փութաց շարունակել .

— Քոյր Մարթա այժմ մայր տը Սէն-Րօզօ կը կոչուի. նորա նորընծայութիւնը վեց ամիսէ ի վեր լմնցած է, եւ մայրութեան մտած է. ուստի հազուստը փոխած ատեն, անունն ալ փոխեց .

Տօքթօրին այտերը դունաւորեցան .

— Լաւ ուրեմն մայր իմ, ըսաւ ոգեւորեալ, եթէ զիջողութեամբ թոյլատրէք, միայն մայր տը Սէն-Րօզօ կարող է զաւակս փրկել .

— Ձեմհասկնար մտքերնիդ, տօքթօր, ըսաւ մեղմօրէն արբասուհին. հաճեցէ՛ք բացատրել թէ . . .

— Մտիկ ըրէ՛ք, մայր իմ, ըսաւ տօքթօրը, վըստաս կղիք յիս, եւ թոյլ տուէք ըսել ինձ թէ, կուզեմ փորձել գէթ այժմու գիտութեան ամեխորհրդաւոր մէկ գաղտնիքը :

— Կատարելապէս վստահ եմ ձեզ, սիրելի տօքթօր, սակայն պարզեցէք մտքերնիդ թէ ի՞նչպէս աւելի մայր տը Սէն-Րօզօ կարող է ձեռնտու լինել ձեր որդւոյն փրկութեան՝ քան ուրիշ մը .

— Բայց ճիշդ ահա այդ է զոր չեմ կարող բացատրել ձեզ, մայր իմ. ձեռնարկելիք միջոցիս յաջողութեանը այնչա՛փ կը հաւատամ, որչափ որ մարդ մը կրնայ հաւատալ արեւուն գոյութեանը . բայց պայմանաւ որ ոչ ոք պիտի գիտնայ գաղտնիքս, որպէս զի ձեռնարկիս մէջ զիս չի շփոթէ :

— Ձեմ պնդեր, տօքթօ՛ր, այլ սակայն ըսէք ինձ թէ, ի՞նչ կը խնդրէք որ թոյլատրեմ .

— Սա թէ, մայր տը Սէն-Րօզօ գայ ամիս մը իմ տունս բնակի եւ խնամէ զայն, ինչպէս որ հոս պիտի խնամէր :

— Այդ խնդրածնիդ անկարելի է, տօ՛քթօր, ըսաւ արբասուհին, ըստ որում մեր միաբանութեան կանոնը բացարձակապէս կ'արգիլէ :

— Գիտեմ զայդ մայր իմ, գիտեմ թէ օրէնքը զձեզ յաւէ՛տ կը կապէ այն տեղւոյն, զոր ցոյց տուած են ձեզ : Գիտեմ թէ ոչ ոք ի ձէնջ այս տան դռնէն դուրս չէ ելած, սակայն գիտեմ՝ նա եւ թէ մայր իմ, զաւակս, քրիստոնեայ մը, մա՛րդ մը պիտի մեռնի, եթէ չի գթաք անոր . այո՛, նո-

րա փրկութիւնը ձեր ձեռքն է . . . արդեօք արքեպիսկոպոսը չէ՞ կարող ինձ արտօնել մահամերձ մը փրկելու համար զմայր տը Սէն-Ռօզօն առնել տանելու . . .

— Արքեպիսկոպոսը չէ կարող արտօնութիւն տալ, պատասխանեց արքասուհին :

— Յայնժամ այդ տղան պիտի մեռնի՛, աղաղակեց հայրն, որոյ աչքերէն երկու կաթիլ արտասուք գլորեցան :

— Աստուծոյ բարութիւնը անսահման է, եղբայր իմ, ըսաւ երկիւղածութեամբ արքասուհին, ձեռներն կցելով եւ աչքերը երկինք ուղղելով. ապա յարեց. ինչո՞ւ զայն մայր տը Սէն-Ռօզօյի սրահին մէջ դնել չէք բերեր . . . եթէ նա է որ կրնայ զայն ազատել, տեղը անօգուտ բան չէ՞: Հոս, միայնարանի պարտիզին մէջտեղը փոքրիկ հովանոց մը ունինք, որ ամառուան տոթադին աւուրց խորշակին դէմ ապաստանարանի կը ծառայէ մեր քոյրերուն՝ դբօսանքի ժամերու մէջ :

— Շատ լաւ, մայր իմ, ըսաւ բժիշկը ցնծութեամբ :

— Ուստի, այդ հովանոցը ամբողջովին ձեր տրամադրութեան ներքեւ կը դնեմ, եւ կ'արտօնեմ մայր տը Սէն-Ռօզօյի երթալ իւր բոլոր խնամքները տալ ձեր որդւոյն :

— Ապա ուրեմն ե՞րբ կրնամ բերել զինքը :

— Այս երեկոյ իսկ, եթէ կուզէք: Ժամը վեցին հովանոցը զայն ընդ ունելու պատրաստ պիտի ըլլայ :

— Ո՛հ, մայր իմ, աղաղակեց Պ. տը Մէղէննէօվ, Աստուած հատուցանէ ձեզ յերկինս այն ամեն ե-

րանութիւններն, զոր դուք աստ, յերկրի պիտի  
տաք ինձ :

Եւ մտերմօրէն արբասու հւոյն ձեռքը սեղմելէ  
ետքը, շտապաւ դուրս ելաւ, սրբելով երկու կա-  
թիլ արցունքներ, ոյք աչացը մէջ կեցած էին, սա-  
կայն այս անգամ երջանկութեան եւ երախտա-  
գիտութեան արցունքներ էին :

\*  
\* \*

Պ. տը Մէզէննէօվի որդւոյն բնակելիք հովա-  
նոցը կամ սրահը, միայնարանի հեշտատեսիլ պար-  
տիզին կեդրոնը կը դռնուէր : Գօթաձեւ հնօրեայ  
մատուռի մը կը նմանէր, որոյ պատերը սուրբե-  
րու, հրեշտակներու եւ նահապետներու պատկեր  
ներով զարդարուած էր : Եւ կը յիշեցնէր հին  
դարերու աշխատութիւններն :

Մարդ այս սրբավայրէն ներս մտած ատեն,  
յարգանօք, զարմանօք եւ միանգամայն զմայլմամբ  
կը պաշարուէր : մանաւանդ երբ տեսնէր աջակող-  
մեան որմը զարդարող եւ Քարլօ Տօլչիի հաճոյ  
կերպիւ յօրինուած մէկ նոր պատկերը, որ կը ներ-  
կայացնէր զՍուրբ կոյսն, Յիսուս մանկան գլուխը  
շուշանի մը թերթերը թափելով գրադեալ :

Պ. տը Մէզէննէօվ, ոտքը սոյն հեշտին բոյնին  
մէջ դրած ատեն, — որ իւր որդւոյն սենեկի տեղ  
պիտի ծառայէր — տեսակ մը զմայլում տիրեց վրան :

Սրահին ձախ որմին երկայնութեանը դրած  
էին անկողինը, եւ սնարը դարձուցած էին դրան  
կողմը, վախնալով որ պատուհանին լոյսը հիւան-  
դին աչքին դէշ չի գայ :

Երբ Պ. տը Մէղէննէօվ ամարաստանէն ներս մտաւ երկու հիւանդապահից հետ, որք տղան կը բերէին, գտաւ զքոյրն (Մայր տը Սէն-Րօզօ) անդ, որ ծնդարանին վրայ կ'աղօթէր, եւ անշուշտ երկնային օրհնութիւնը կը հայցէր հիւանդին, զոր իւր խնամոց պիտի յանձնէին :

Բժշկին ներս մտած ժամանակ հանած աղմուկէն քոյրը շտապաւ ոտք ելաւ եւ ետին դարձաւ :

Պ. տը Մէղէննէօվ տեսակ մը ելեքտրական սարսուռ զգաց, կենդանի տեսնելով զՍիւզան, որայ մեռնիլը տեսած էր. վասն զի, դէմքը, գիծը գծին էր : Լայն վարստկալ մը, որ կը ծածկէր մինչեւ յոնքերը, կարգիլէր տեսնել իւր մազերն : Երկնագոյն աչերն, յոնքերուն եւ արտեւանանց քաղցրիկ գոյնն, այտերուն անուշիկ կարմրութիւնն, մորթին նրբութիւնն ու սպիտակութիւնը. ի մի բան ամբողջ երեսին փափկութիւնը մէկ տեսնելով կը ցուցնէին թէ խարտիչագեղ էր :

Բժիշկը յարդանօք խոնարհութիւն ըրաւ, ապա, պաղատանօք, միանգամայն երասխտադ խուսութեամբ լցեալ, ըսաւ .

— Մայր իմ, աւասիկ զաւակնիդ, զոր ձեզ կը յանձնեմ :

Քոյրը դէպ ի դուռը առ աջելով ընդունեց զերխտասարդն, ըսելով. — Օրհնեալ ըլլայ հիւանդը, զոր Աստուած ինձ կ'առաքէ — :

Հիւանդապահը Լիւսիէնն հանուեցնելով յանկողին գրին :

- Ի՞նչ պէտք է տալ այսմ, հարցուց քոյրը .
- Ոչինչ, պատասխանեց բժիշկը .
- Ինչպէս, ոչի՞նչ, ըսաւ մայր տը Սէն-Ռօզօ զարմանօք .
- Բացարձակապէս ոչինչ, կրկնեց տօքթօրը :
- Սակայն եթէ խմելու բան մը ուզէ . . .
- Զուր պիտի տաք :
- Իսկ եթէ խմելիք ուզէ . . .
- Ինչ որ կամիք զայն կուտաք :
- Ուրեմն եւ ոչ մի դարման ընել չպիտի՞ տաք :
- Եւ ոչ մի :
- Յայնժամ, հարցուց կրօնաւորուհին եւս քան զեւս զարմանալով, անոր ապաքինութեանը համար ի՞նչ բանի վրայ դրած էք ձեր յոյսը .
- Աստուծոյ բարութեանը եւ ձեր վրայ, մայր իմ .
- Սակայն անոր օգնելու համար ի՞նչ կուգայ իմ ձեռքէս, ըսաւ մայր տը Սէն-Ռօզօ, որ բժշկին առեղծուածային պատասխանէն չէր գոհացած .
- Քանի մը օրէն պիտի ըսեմ ձեզ, մայր իմ, պատասխանեց տը Մէզէննէօվ : Առ այժմ դուք ոչինչ ունիք ընել, բայց միայն նորա մօտը կենալ : Մի՛ երբէք խռովիք այն խօսքերէն, Քզորս պիտի կարենայ ըսել ձեզ : Նորա վիճակը ծանօթ է ձեզ . ուղեղը թեթեւապէս խանգարեալ է . ուստի չըլլայ երբէք ապշիք իւր զառանցանքէն, այլ ընդհակառակն սպասեցէք որ դիշերն ողջոյն բաղմախոտոր կերպիւ իւր խօսքերը լսէք, զի կը պազատիմ ձեզ, մայր իմ, որ արթուն հսկէք այս

գիշերուան մէկ մասը : Իմ օգնականներէս մին պիտի գայ ձեր տեղը անցնելու , եւ վաղը , արեւածագէն առաջ վերստին սնարը պիտի գաք նրստիք , եւ ինքզինքնիդ սա դիրքով պիտի կեցնէք . կռնակնիդ դրանը դարձուցած , գլուխնիդ գէպի պատուհանին , զի կուզեմ որ առաջին անգամ լոյս ժամանակ զձեզ կիսովին տեսնէ . նա մանաւանդ եռ ալ հոն պիտի լինիմ , զի հիւանդանոցէն չպիտի մեկնիմ : Պ . Վերատեսուչը իւր բնակայարկէն սենեակ մը շնորհեց ինձ . ահա այս կերպիւ , բան մը պատահած ատեն կրնաք ինձ զեկուցանել :

Այս պատուերներէն ետքը , Պ . տը Մէզէննէօվ խորին յարգանօք ողջունեց զկրօնաւորուհին եւ մզկնեցաւ թողլով զնա զարմանահար :

Հետեւեալ օրն , արեւը ծագելուն պէս , բժիշկը ամարանոց կը մտնէր :

Քոյրը հիւանդին սնարը նստեր էր , կռնակը դրան , երեսն ալ պատուհանն դարձուցած , ըստ հրահանգի Պ . տը Մէզէննէօվի :

Բժշկը ի ներքուստ գոհ եւ շնորհակալ եղաւ .  
 Լիւսիէն կը նիրհէր :

Բժշկին խնդրանօքը մայր տը Սէն-Ռօզօ պատմեց այն հաղար ու մէկ անյօդ խօսքերն , զոր ի գիշերի արտասանած էր երիտասարդը , խօսքեր , ոյց միջեւ միշտ կը յեղ յեղէր սա բառերն , «Կը սիրե՛մ զքեզ , Սիւզանն » :

Կրօնաւորուհին գողալով եւ յուզեալ ձայնիւ կրկնեց այս «Կը սիրեմ զքեզ Սիւզանն» խօսքերը :



Բժիշկը նորա այս շփոթութիւնը չի տեսնելու զարկաւ, առանց պատճառը մեկնել կարենալու:

— Այդ խօսքերը, ըսաւ նմա, անդադար պիտի լսէք, վասն զի Սիւզանն անունն չքնաղ աղջկան մը մեռնիլը տեսած է, որոյ հետ պիտի ամուսնանար. այն օրէն ի վեր գրեթէ խելքը կորուսած է, ուստի իւր խօսեցելոյն անունը ամեն վայրկեան միտքը կուգայ: Արդ, ադկէ աւելի բան մը չի պատահեցա՞ւ:

— Ոչինչ կարելոր, պատասխանեց քոյրը, միայն թէ երբ առաջին անգամ հետը խօսեցայ, կիսովին ելաւ նստաւ, աղաղակելով. «Նորա ձայնն է այս, Սիւզանի ձայնն է»: Յետոյ իմ կողմս դարձաւ եւ ակնայեռ երեսս դիտեց, եւ լալով ինկաւ վերստին, ըսելով. «Սիւզանը չէ՛ այս... նա մեռած է, մեռած է»:

— Ուրեմն երեսնիդ չի տեսա՞ւ, մայր իմ, հարցուց բժիշկը յուսակտուր եղանակաւ, որովհետեւ երիտասարդը եթէ քոյրը զՍիւզան չի կարծէր, անբուժելի էր հիւանդութիւնը:

— Չէր կրնար զիս տեսնել, պատասխանեց կրօնաւորուհին, ըստ որում աչքերուն դէշութիւն մը չի պատճառելու մտօք լոյսը մահճակալին ետին պահեր էի:

Բժիշկը շունչ առաւ: Խաղին կէսը արդէն շահեր էր: Նոյն միջոցին հիւանդը անկողնոյն մէջ շարժում մը ըրաւ. բժիշկը շտապաւ դէպ ի դուռը ետ քաշուեցաւ, զի ամա դարձնէ եւ ինչ որ ըսելով, որ աչքերը դէպ ի նմա դարձնէ եւ ինչ որ ալ պատահի՝ տեղէն չի շարժի:

Լիւսիէն երեք չորս անգամ անկողնոյն մէջ դարձաւ, անորոշապէս ամեն կողմ դիտելով, առանց գիտնալու թէ ի՞նչ կը դիտէր: Յանկարծ իւր մուրեալ աչքերը կրօնաւորուհւոյն քաղցրիկ երեսին հանդիպեցաւ, սր իւր վարչամակաւ եւ սպիտակ լանջանոցով լուսաւորուած եւ մեծ սեւաքօղով հովանաւորուած՝ որ մինչեւ ոտքերը կը հասնէր, կը նմանէր այն Տիրամօր պատկերին, զոր գրած էր Հօլպէն եւ ներկած էր Մաւրիլլօ:

Երիտասազը զայն տեսնելով՝ ճիշ մը արձակեց, բայց այս յիմարի մը անյօդ եւ տարտամ ճիշը չէր այս անգամ, այլ մարդկային ճիշ մ'էր, սրտաբո՛ւխ, որ կը նմանէր խաւար սրտի մը յանկարծ լոյս տեսած ատեն երախտագիտական օրհներգին:

Արդ, Պ. տը Մէզէննէօվի բաղդը սոյն ճշէն կախեալ էր. ճակատը քրտնաթոր, աչքերն ի մուլար, բերանը բաց մնացած, դատապարտեալի մը դիրքով, որ կ'երթայ լսել իւր փրկութեան կամ մահու դատակնիքը:

Լիւսիէն վերակենդանութեան սոյն երկար ճիշը արձակելէ ետքը, արմուկին վրայ կռթնեցաւ: Քոյրը դէպ ի նմա դարձաւ, արգիլելու համար որ տեղէն չելլէ, սակայն բժիշկը թեւը երկնցուց եւ աչքով ու՞ղլիսով նշան ըրաւ կրօնաւորուհւոյն որ տեղէն չի խախտի: Քոյրը աշխուժիւ աչքերը պատուհանին դարձուց:

Սիւզանի սիրահարը սիրալիր կերպիւ մայր տը Սէն-Րօզօի երեսը դիտելով, — Դո՞ւք էք, ըսաւ,

այնպիսի խանդակաթ, այնպիսի ողորմագին ձայնիւ, որ զկրօնաւորութիւն սարսափեցուց . դո՞ւք էք, Սիւզա՛ն : Ա՛հ, ո՛րպիսի ահռելի էր այս գիշերուան տեսած երազս . . . դուք մեռեր էիք, իսկ ես կապրէի . կը հասկնա՞ք, ես ողջ մնացեր էի . . . Հայրս զիս կը խնամէր, չեմ գիտեր ի՞նչ հիւանդութեանըս համար . . . մայրս հոն էր, նոյնպէս ալ Լիւսէթ : Ամեն զիս սիրողները շուրջս հաւաքուած էին . . . : Այլ ընդէ՞ր դուք հոն չէիք, եւ ինչո՞ւ ես հիւանդ էի . . . ա՛հ, գիտեմ, երազիս հետեւանքն էր . . . զձեզ մեռեալ կը կարծէի, եւ ես ալ մեռնիլ կուզէի . . . Քիտէ՞ք թէ խենդ ենալիք բան էր այս . . . իսկ այժմ, այլ եւս քովէս չպիտի երթաք, այնպէս չէ՞ . . . սակայն ինչո՞ւ երեսս չէք նայիր . . . Ա՛հ, երեսս նայեցէք, Սիւզա՛ն :

Իսկ քոյրը, պատուէրին հաւատարիմ, տեղէն չէր շարժէր, եւ տեսնելով որ երիտասարդը աղերսարկու ձայնիւ կը կրկնէ «Սիւզա՛ն, Սիւզա՛ն» խօսքերը, տօքթօրին երեսը նայեցաւ :

Պ . տը Մէղէննէօվ գլխովը նշան ըրաւ թէ կըրնար խօսիլ . ուստի մայր տը Սէն-Րօզօ այս տեսարանէն ի դուրս շարժեալ դարձաւ առ հիւանդն և — Ա՛հ, որպիսի՛ գեղեցիկ էք — . գոչեց Լիւսիէն աղերսարկու ձայնիւ :

Կրօնաւորութիւն երեսը հրագոյն այլայլեցաւ, աշխուժիւ դէպ ի բժշկին դարձաւ եւ մեղադրանօք անոր նայեցաւ :

Կ'սկսէր հասկնալ թէ ո՛րպիսի եղանակաւ բժշկե

կուզէր զիւր որդին . բայց բժշկին աղերսագին եւ արտասուակից աչքերը տեսնելուն , որ թեթեւորէն կը խոնարհէր եւ ձեռնամած իրմէ ներողութիւն եւ գթութիւն կը հայցէր , ծանրութեամբ գլուխը դէպ ի Լիւսիէնի դարձուց՝ առանց սակայն զնա դիտելու , թէեւ կ'զգար թէ երիտասարդին սիրատափ նայուածքն յինքն յառած էր , որմէ զարհուրանօք եւ յուզմամբ կը լեցուէր :

Մինչ Լիւսիէն նորա կապուտագեղ աչքերը տեսաւ , ճակատը տակաւ առ տակաւ սկսաւ զուարթանալ , նայուածքն հրեշտակային եղաւ որպէս եւ կրօնաւորուհւոյնն . ուրախութեամբ երկար շունչ մը առաւ , ինչպէս որ մարդ զուարթացմամբ կը շնչէ քնատութեան երկար գիշերէ մը ետքի առաւօտեան թարմ օդը : Ուշադրութեամբ դիտեց զքոյրն , որ Սիւզանի տեղ դրուեր էր , ոչ որպէս սիրատափ տարփածու , այլ իբրեւ ջերմեռանդ մը՝ որ յարգանօք եւ ակնածութեամբ իւր հաւատալեաց մէկ առարկայն կը զննէ :

Իսկ մայր տը Սէն-Ռօզօ տեսնելով այն փրկարար ազդեցութիւնը հիւանդին վրայ , նորա երեսը նայեցաւ անեղբ քաղցրութեամբ : Ս,յն վայրկեանին , կատարելու յաճնառու եղած պաշտօնին նըշանակութիւնը հասկնալ թուեցաւ . եւ այն վայրկեանէն սկսաւ իւր դերը կատարել անեղծանելի գթութեամբ , անբացատրելի համակերպութեամբ , առանց իսկ բժշկին պատուէրին սպասելու :

— Կը կամի՞ք ձեռքերնիդ ինձ տալ , Սիւզա՛ն , ըսաւ հիւանդը հեշտալուր ձայնիւ :

Քոյրը թեթեւակի դողաց, խու՛ն ինչ շիկնեցաւ, վայրիկ մի վարանեցաւ. ապա, ծանրօրէն իւր որոշումը տալով, երկարեց ձեռքը:

Լիւսիէն աշխուժիւ բռնեց զայն, բոլոր ուժովը սեղմեց եւ անգամ մ'ալ քրոջ երեսը նայելով, այնպիսի մեղմ ձայնիւ՝ զոր մայր տը Սէն-Րօզօ չի լսեց կամ հաղիւ լսեց, ըսաւ.

«Կը սիրեմ զքեզ, Սիւզանն»:

Եւ մանկական քաղցրիկ քնով սկսաւ նիրհել. Պ. տը Մէզէննէօվ, քրոջ ըրած նշանին վրայ դէպ յանկողին առաջացաւ ոտից ծայրերուն վրայ կոխելով, եւ մազ մնաց որ ուրախութենէն պիտի խեղդուէր՝ իւր քնացող զաւկին անբիծ եւ խաղաղ երեսը տեսնելով. այն միջոցին աչքին հանդիպեցաւ աջակողմեան պատէն կախուած պատկերը, որ զՍուրբ Կոյսն կը ներկայէր, Յիսուս մանկան գլուխը շուշանի մը թերթերը թափելով զբաղեալ: Որչա՛փ մեծ եղաւ տօքթօրին զարմանքը Ս. Կուսին դեմքին վրայ դտնելով սքանչելի նմանութիւն մը Սիւզանի եւ մայր տը Սէն-Րօզօի երկւորեակ դեմքերուն հետ: Արդ, այս անգամ ինքզինքը կատարելապէս մոգական զօրութեան մը ենթարկեալ կարծեց, սակայն քրոջ սոյն նմանողութեան վրայ տուած բացատրութենէն սիրտը հանդարտեցաւ:

Արդարեւ պատկերհան մը, զոր մայր տը Սէն-Րօզօ տասն եւ ութ ամիս իննամեր էր, ուզելով միաբանութեան քով իւր երախտազ իտութեան

մէկ հաւաստիքը թողուլ, զինքը խնամող կրօնա-  
ւորութեան կենդանագիրն էր շինած :

Արդ, թող ներուի մեղ ըսել թէ, կոյսը նկա-  
րելու համար անկէ աւելի պատիր օրինակ մը չէր  
կարող գտնել :

— Մա՛յր իմ, պուսաց բժիշկը ուրախութեամբ,  
կատարելապէս ազատեցաւ, գէթ այնպէս կը  
յուսամ, ուստի շուտով խեղճ տղուն մտադրու-  
թիւնը այս պատկերին վրայ դարձնելու էք, զայն  
պատէն վար առնել տալով՝ կարելի եղածին չափ  
աչքին մօտը դնել տուէք :

Բժիշկը մայր տը Սէն-Րօզօի այս եւ ուրիշ մի  
քանի պատուէրներ տալէ ետքը, լսելով որ ժամը  
եօթը կը զարնէ, աճապարեց սրահէն դուրս ել-  
լել եւ գնաց հիւանդանոցն այցելել :

••

Տասն եւ հինգ օրէն Լիւսիէնի երեսը գրեթէ  
իւր սովորական արտայայտութիւններն վերստա-  
ցաւ. աչքերն նուազ մոլոր էին եւ բնական գոյ-  
նը տակաւ առ տակաւ երեսին վրայ կը տեսնուէր :

Ենորհիւ անխոնջ հսկողութեան մայր տը Սէն-  
Րօզօի, որ մեղմօրէն հիւանդին միտքը ուղիղ ճամ-  
բու մէջ կը դնէր՝ երբ տեսնէր թէ նա կը փախ-  
ցնէր, ի շնորհս այն արտաքոյ կարգի տիրապե-  
տութեան զոր ունէր հիւանդին վրայ, զոր կըս-  
տիպէր ի հնազանդութիւն, որպէս մայրն առ իւր  
մանուկն, վերջապէս, ի շնորհս այն անսպառ  
քաղցրութեան եւ գթութեան, որ կը կրէր յին-

քեան, եւ որով կողողէր զհիւանդն իբրեւ փրկա-  
րար ջուր, որ ըստ օրէ Լիւսիէնի խելքը գլուխը  
կուգար: Այլ սակայն երբեմն միտքը կը շփոթէր,  
երբ Մայր տը Սէն-Տօղօն իւր գլխուն վերեւ չէր  
տեսնէր. այս մօր տեսքն ու քաղցր խօսակցու-  
թիւնը ա՛յն աստիճան զգալի պէտք մը եղած էր  
իրեն համար, որ նորա բացակայութիւնը՝ աչքին  
առջեւ դրուած պատկերին հակառակ, իւր ամե-  
նադաժան տանջանքն էր: Կրօնաւորուհին մնայուն  
ջրոյ նման խաղաղ կը թողուր զնա, ապա վերա-  
դարձին դետի պէս ալեծուփ կը գտնէր, բայց  
իւր մէկ խօսքը կը բաւէր նորա մուկին յորձան-  
քը կասեցնել:

«Ժպտեցէ՛ք անմիջապէս», կըսէր, եթէ ոչ կ'եր-  
թամ:»

Ասկէ աւելի ոչինչ կըսէր, եւ հիւանդը անմի-  
ջապէս կը ժպտէր:

Լիւսիէն դեռ հասկնալու վիճակին մէջ չէր  
թէ ի՞նչպէս Սիւզան, որոյ մահանալը տեսած էր,  
ողջ էր, եւ ինչո՞ւ կրօնաւորի զգեստ հագեր էր:  
Բայց Պ. տը Մէզէննէօլ զայն համոզեց թէ Արքե-  
պիսկոպոսը արտօներ էր Սիւզանի իր (Լիւսիէնի)  
ժառայութեան մէջ մտնել, պայմանաւ որ միայ-  
նարանի հագուստը պիտի կրէր տարի մը:

Լիւսիէն հօրը խօսքին հաւատաց եւ այս մա-  
սին աւելի բան մը չի հարցուց:

Սիւզանի սիրահարին ապաքինութիւնը ամիս  
մը տեւեց:

Առտու մը տիկին Մէղէննէօվ եւ Լիւսիթ, որ ամեն օր կուգային երիտասարդին քովը երեք չորս ժամ կանցունէին, ամարանոց մտան ճամբորդի հագուստով:

Լիւսիէն, որ քանի մը օրէ ի վեր ոտք ելեր էր, յամրաքայլ դնաց գիմաւորել զանոնք, մայր տը Սէն-Տօզօի թեւին կրթնած:

Մայրը իմացուց որդւոյն թէ Ծամբիէրի իշխանը, մին Պ. տը Մէղէննէօվի վաղեմի բարեկամներէ, յանկարծ հիւանդանալով, կանչել տուէր էր բժիշկը, եւ թէ իրենք ալ միատեղ Նաբօլի պիտի երթային:

Նաբօլին տեսնել, երիտասարդին ամենաքաղցրը երազներէն մին էր:

— Ուրեմն ե՞րբ ճամբայ պիտի ելլենք, հարցուց ուրախութեամբ:

— Այժմ իսկ, պատասխանեց մայրը, ահա կը տեսնես որ պատրաստուէր ենք, եւ քեզ առնել եկանք:

— Ուրեմն մեկնինք, բացառաչեց Լիւսիէն, կրօնաւորուհւոյն երեսը նայելով:

Մայր տը Սէն-Տօզօ գլուխը խոնարհեցուց, սաստիկ յուզեալ էր, ըստ որում սոյն տեսարանին վտանգաւոր հետեւանքներէն կ'երկնչէր. Բարեբաղդարբար բժիշկը վրայ հասաւ:

— Ինչպէ՞ս ըրիք, պատրաստ եմք, ըսաւ խիստ ուրախութեամբ. Նաբօլին այսպէս շուտով տեսնելը մտքէդ չէիր անցունէր, այնպէս չէ՞ զուակրս... օ՛ն ուրեմն, մեկնինք:



— Այո, մեկնինք, բարի հայրս, ըսաւ երիտա-  
սարդը մտաց յափշտակութեամբ: Շուտով պատ-  
րաստուեցէք, Սիւզա՛ն . . . սակայն, ինչո՞ւ տրտում  
կ'երեւաք:

Կրօնաւորուհին ծանրութեամբ գլուխը մէկ  
կողմ դարձուց:

— Արդարեւ տրտմելու ալ բան է, ըսաւ Պ. տը  
Մէզէննէօվ, յուզեալ կեղծելով, որովհետեւ մեզի  
հետ չի մեկնիր:

— Ինչպէ՛ս, պուաց Լիւսիէն գունատեալ, Սիւ-  
զան հետերնիս չի՛ մեկնիր . . . բայց հա՛յր իմ, ի՞նչ  
կուզես որ ըլլամ ես առա՛նց անոր:

Բժիշկը զգալով թէ խնդրոյն վախճանը փու-  
թացնել պէտք էր, աշխուժիւ որդւոյն խօսքն  
ընդմիջեց:

— Նէ չկրնար այսօր մեկնիլ, բայց քանի մը օ-  
րէն պիտի մեկնի եւ պիտի գայ դտնել զմեզ ի  
Նաբօլի:

— Եթէ քանի մը օրէն պիտի մեկնի, մենք անոր  
կ'սպասենք:

— Այդ անկարելի է, զաւակս, մայրդ քեզ չը-  
սա՞ն որ շտապաւ կը մեկնինք, երթալ խնամելու  
Ծամբիէրի իշխանը: Հիւանդութիւնը բժշկին չի  
սպասէր, այլ պէտք է որ բժիշկը նմա ընդ առա-  
ջէ: Օ՛ն, մեկնի՛նք:

— Ապա ուրեմն ինչո՞ւ համար Սիւզան չ'ընկե-  
րանար մեզ:

— Բայց այդ ի՞նչ է, գոչեց տօքթօրն ցասնուլ

կեղծելով . յիշողութիւննիդ կորսնցուցի՞ք . մտքէդ ելա՞ն թէ Սիւզան հոս սա պայմանաւ մտած էր որ տարի մը գթութեան քերց քողը պիտի կրէր :  
 — Ճշմարիտ է, ըսաւ Լիւսիէն լքեալ, բայց այդ տարին ե՞րբ պիտի վերջանայ :

— Քանի մը օրէն :

— Իրաւ այնպէ՞ս է, Սիւզա՛ն . կ'երդնո՞ւք առաջի Աստուծոյ թէ պիտի մեկնիք .

Ապա քիներալին այս խօսքերէն մայր տը Սէն-Ռօզօ շփոթեցաւ, ուստի բժշկին երեսը նայեցաւ աղերսարկու աչօք, որ կը նշանակէր թէ՛ «Ձեր զաւակը ազատելու համար ես իմ կեանքս զոհեցի, ուստի ստերդում մի՛ խնդրէք ինձմէ» . Սակայն Պ . տը Մէդէննէօվ անորին նման աղերսագին ակնարկով մը կուզէր ըսել թէ, «Ի՞նչ որ անոր խելքը գլուխը բերիք, դուք որ զայն վերակենդանացուցիք, այդ կեանքը մի՛ առնուք իրմէ :»

— Սիւզա՛ն, Սիւզա՛ն գոչեց Լիւսիէն, որոյ երեսը քրտամբ եւ արտասուօք ողողեալ էր, կը տեսնեմ որ չէ՛ք երդնուր :

Յայնժամ մայրն ու քեռաղջիկը կրօնաւորուհւոյն մօտեցան, եւ աչքերով ու ձեռքերով իրենց աղաչանքը բժշկին աղերսիցը միացուցին .

Տօքթօրը երկու քայլ մօտեցաւ կրօնաւորուհւոյն, բոցավառ աչօք անոր նայելով, որ սոսկալի յուսահատութիւն կարտայայտէր, եւ խեղդուկ ձայնիւ ըսաւ . «Ապա թէ ոչ պիտի մեռնի, մայր իմ .» յետոյ բարձրաձայն, «Այնպէս չէ՞ Սիւզա՛ն, կ'երդնուք .» յարեց շեշտելով :

— Եթէ չ'երդնու, ամենեւին չեմ մեկնիր, ըսաւ Լիւսիէն հաստատամտութեամբ, եւ արցունքը սրբելով գնաց նստաւ այն աթոռին վրայ, ուր սովորաբար Մայր տը Սէն-Ռօզօ կը նստէր :

—Կերդնո՛ւ, աղաղակեց բժիշկը, ցոյց տալով իւր որդւոյն զկրօնաւորութիւն, որ գող ելլելուն պատճառաւ գլուխը կը խոնարհեցնէր, զոր Լիւսիէն հաւանութեան վերադրեց :

Նոյն վայրկենին ներողութեան հրեշտակը թրուա՛ւ անոր գլխուն վերեւէն :

Երիտասարդը փութաց նորա ձեռքը բռնել :

—Մնաս բարեա՛ւ, ամենասիրեցեալդ իմ Սիւզան, ըսաւ հեծեծանօք, մնասցես բարեա՛ւ, քանի մը աւուր համար... ո՛հ, որչա՛փ երկար պիտի երեւին ինձ... :

Եւ ձեռքը պարանոցին նետեց :

Կրօնաւորութիւն նոյն վայրկենին գողցես արձանի մը կը նմանէր :

Յայնժամ Լիւսիէն զգաստութեամբ եւ խանդակաթ սիրով այտերը համբուրեց :

Մայր տը Սէն-Րօզ տեղէն չ'երերաց :

—Թողութիւն տուէ՛ք, աղաղակեց Պ. տը Մէղէննէօվ, որ քրոջ լուսթիւնն ու անշարժութիւնը տեսնելով սոսկալի ձախորդութիւն մը պատահելէն կ'երկնչէր. ապա, սաստկութեամբ ասդին քաշելով իւր որդին, մղեց զայն մօրը եւ քեռաղջկան թեւերուն մէջ, յոյժ ցած ձայնիւ ըսելով. «Շուտով առէ՛ք տարէ՛ք, ես ձեզի կը համնիմ» :

Այս հրամանին վրայ տօքթօրութիւն եւ Լիւսիէթ Լիւսիէնն առին գուրս ելան :

Իսկ բժիշկը տեսնելով որ կրօնաւորութիւն կը տատանէր եւ տախտակամածին վրայ պիտի լյ-

նար, քովը վազեց, բազկացը մէջ առաւ զայն եւ  
աթոռին վրայ նստեցուց :

Մայր տը Սէն-Տօղօ սպիտակ լանջանոցին պէս  
ճերմկցեր եւ կատարելապէս նուազեր էր :

Պ. տը Մէղէննէօվ գլխուն վրայ պաղ ջրով թըր-  
ջած բարձիկներ դրաւ եւ քացախ շնչեցուց, սա-  
կայն նուազումը այնչա՛փ երկարեցաւ որ ստիպ-  
ուեցաւ ոգեղէն եթերով բազկերակը շփել :

Վերջապէս ուշարեցաւ, աչքերը բացաւ, եւ  
ամեն կողմ ակնարկը պտտցնելով,

«Մեկնեցա՛ւ,» ըսաւ :

Ասոնք եղան բերնէն ելած խօսքերը, սակայն  
այն ձայնն որով արտասանեց «մեկնեցաւ» խօսքը,  
ահա այն ձայնին նշանակութիւնը չպիտի կարե-  
նամք ըսել, որովհետեւ անբացատրելի էր :

Երբ կատարելապէս սթափեցաւ, ոտք ելաւ եւ  
ուզեց մեկնիլ, բայց սենեկին դրանը մէջ տեսնե-  
լով զՊ. տը Մէղէննէօվ, որ իւր առջեւ ծնրադ-  
րեալ էր որպէս սրբուհւոյ մը առաջ, կանկ առաւ :

Եւ տօքթօրը ըսաւ իրեն այնպիտի ձայնիւ, որ  
մինչեւ երկինք պէտք է գացած ըլլայ :

— Մայր իմ, հրեշտա՛կդ գթութեան, յանուն  
կնոջս եւ որդւոյս կ'օրհնեմ զձեզ, եւ ի դին քա-  
ռասնօրեայ տքնութեանց եւ առաքինութեանց,  
ձեր գլխուն վրայ կը կոչեմ Աստուծոյ թողու-  
թիւնն եւ օրհնութիւնը — :

Այս եղելութենէն տարի մը ետքը, ամառուան վերջին մէկ գեղատեսիլ արեւմուտին ատենը, դըրեթէ Մէզէննէօվ ընտանեաց ի Նաբօլի մեկնման տարեդարձին, բժիշկը, ընկերակցութեամբ իւր որդւոյն եւ Լիւսէթի, — Լիւսիէնի կնոջ — կը մրտնէր սոյն կոյս անտառէն ներս, զոր միայնարանի պարտէզը անուանած եմք, յայցելութիւնս սու մայր տը Սէն-Ռօզօ :

Հարկ է ըսել որ հայրն յաջողեր էր համազել զիւր որդին թէ Սիւզան ուխտած էր կրօնաւորուհի մնալ մինչեւ վե՛րջը :

Երբ բժիշկը զմայր տը Սէն-Ռօզօն կանչելու հրամանը տալէն ետքը որդւոյն եւ հարսին հետ ամարանոց մտաւ, կրօնաւորուհին հոն ծնդարանին վրայ ծնրադրեալ գտաւ :

Քոյրը այս անգամ բժշկին ներս մտնելը շիմացաւ եւ ոչ ալ ետին դարձաւ :

Բժիշկը նշան ըրաւ իրեններուն ամենախորին լուութիւնս պահել, եւ ինքն դիտեց զկրօնաւորուհին, որ Համակերպութեան տխրամած արձանին կը նմանէր :

Պահ մը այսպէս թաղուած մնաց իւր աղօթից կամ մտախոհութեան մէջ. յետոյ ետին դարձած ատեն յակամայս խուփեցաւ երբ նշմարեց ճիշդ լուսոյն դէմ զՊ. տը Մէզէննէօվ, եւ անոր քովը գլխուսիէն եւ իւր կիսնն :

Բժիշկն ալ նոյնպէս շփոթեցաւ միանգամայն զարհուրեցաւ, տեսնելով զմիանձնուհին, որուն

այտերը կապտադոյն, շրթունքը կապոյտ, աչքերը նուազեալ եւ այնպէս խոռոչացեալ էին, որ մեռելի գլխու մը պարապ կոպիճը կը կարծուէր. այնչա՛փ այլակերպեր էր Մայր տը Սէն-Րօղօ :

Պ. տը Մէղէննէօվ որդւոյն եւ հարսին երեսը նայեցաւ, որպէս թէ իւր յուզմունքին բաժնեկից ընէ զայնս, այլ ոչ Լիւսիէն եւ ոչ ալ Լիւսէթ չի նշմարեցին այն զարհուրելի փոփոխութիւնը, որ գոյացեր էր քրոջ դէմքին վրայ :

Լիւսիէն տեսնելով որ հայրը լուսթիւն կը պահէր, երկու քայլ առաւ դէպ ի քոյրն ու ըսաւ .

— Մայր իմ, ներեցէք անխորհրդապահու թեանց, մենք եկանք այցելութիւն մը տալ առ մայր տը Սէն-Րօղօ, որ այս սրահին մէջ զիս դարմանեց, ուստի անոր կ'սպասենք :

Լիւսիէն թէեւ երկու քայլ հեռի էր անկէ, երեսը նայեցաւ, սակայն չի ճանչցա՛ւ զայն :

— Մայր տը Սէն-Րօղօն ես եմ, պա՛րոն, ըսաւ միանձնուհին, այնպիսի տկար ձայնիւ, որ շնչոյ կը նմանէր :

Լիւսիէն ապշեցաւ զինքը չի ճանչնալուն համար եւ շնորհակալ եղաւ նորա բարի խնամոցը, զոր չնաշխարհիկ քաղաքավարութեամբ եւ գթութեամբ տուած էր իրեն :

Չքնադադեղ կիներ Լիւսէթ իւր շնորհակալիքը ամուսնոյն երախտադիտութեանցը կցեց : Սոյն պարտքը կատարելէ ետքը տօքթօրին աղաչանացը վրայ այր եւ կին պարտէղ քաշուեցան :

Անոնց հեռանալէն ետքը , Պ . տը Մէզէննէօվ խոնարհութիւն ըրաւ միանձնուհւոյն , եւ գրպանէն նամակ մը հանելով անոր յանձնեց , ըսելով .

—Քոյր իմ , Սրբազնասուրբ Հայրն պաշտօն տուաւ ինձ սոյն ինքնագիր նամակն ձեզ յանձնելու . յանուն կնոջս կը միացնեմ օրհնութիւններս անոնցին հետ , մայր իմ , եւ ներողութիւն կը խնդրեմ որդւոյս կողմանէ , որդւոյս՝ որ ձեր հրաշալի գըթութեամբը աղատեցաւ :

Քոյրը ջերմեռանդութեամբ նամակն համբուրեց եւ ի նշան շնորհակալութեան գլուխը խոնարհեցուց :

—Եւ արդ , մայր իմ , յարեց Պ . տը Մէզէննէօվ , ներեցէք ինձ երկու բան հարցնել ձեզի , զոր չեմ կրնար լուծել առանձինն . թէ ուստի՞ց կուգայ ձեր արտակարգ նմանութիւնը այն մանկամարդուհւոյն հետ , որ Սիւզան կը կոչուէր , եւ ուստի՞ց կուգայ այն շուտափոյթ փոփոխութիւնը՝ որ եղեր է ձեր դեմքին վրայ .

—Սիւզան կոչուող այն աղջիկը իմ քոյրս էր , ըսաւ մելամաղձօրէն մայր տը Մէն-Րօզօ .

Բժիշկը սարսուեցաւ :

—Ամեն անգամ , որ ձեր որդին Սիւզանի անունը կը տար , քրոջս մահուան դառն յիշատակները ուրտս կ'եղեքէին . բայց որովհետեւ մենք մեր կեանքը գթութեան գործոյն նուիրած ենք , ի՞նչ փոյթ անձերնուս տկարութիւնը — . յարեց , եւ գը-

լուխը խոնարհեցնելով խորին մտածմանց մէջ թաղուեցաւ :

— Հրեշտակ գթութեան, օրհնեալ էք դուք ի կանայս համօրէն, ըսաւ բժիշկը արտասուքը սրբելով, որ այտերն ի վար կը գլորէին :

Եւ մինչդեռ այս խօսքերը կը կրկնէր, երիտասարդ որդւոյն բարձրացուցած քրքիչներէն սարսուեցաւ : Բարեպաշտօրէն եւ տեսակ մը պաշտամամբ՝ աչքին առջեւ եղող համակերպեալ եւ գերադոյն արարածը զննեց, ապա, վերստին դառնալով այն կողմն, ուստից քահ քահներու ձայնն առած էր, նշմարեց զիւր որդին, որ սիրատարի կերպիւ մէկ թեւը իւր կնոջ մէջքին փարած էր . «Իսկ նա կը ծիծաղի . . .» յարեց դառնութեամբ .

••

Եւ արդ, սիրելի ընթերցողք ալ անշուշտ համոզուեցան թէ, սոյն հրաշալի բուժման համար երիցս հրաշք մը պէտք եղաւ, կրօնաւորուհւոյ մը գթութիւնը, հօր մը անսահման գորովը եւ բրժիկի մը յամառ խոյզերը :

(Բօլ Պօլմօ)

վ. Բ





## 30

## ՀԱՐՅ — ՊԱՏԱՍԽԱՆԻ

Կնոջ մը առաքինութիւնը անեղծ պահող հա-  
ւատարիմ պահապանը ո՞րն է .

— Տգեղ դեմքը :

Դժուարամարտութեան մատնուելու եւ բժշկի  
կարօտ ըլլալու համար ի՞նչ ընել պէտք է .

— Ազահին հիւր ըլլալ :

Անճնական ազատութիւնը ծախող եւ ինքզին-  
քը գերի ընողին ի՞նչ անուն կուտան .

— Պարտկան :

Մոլութիւն մը անուցանելը քանիի՞ կը նստի  
մարդուս .

— Երկու զաւակ մեծցնելէ աւելի սո՛ւղ :

Աշխարհիս մէջ գիտութենէ աւելի գեղեցիկ  
ի՞նչ կայ .

— Պարկեշտութիւնը :

Ինչո՞ւ համար մարդ ուրիշին աչքին մէջի շիւ-  
ղը կը տեսնայ, իսկ իր աչքին մէջի գերանը չի  
տեսնար .

— Վասն զի աչքն իւր մէջը նայելու դիւրութիւն  
չունի :

Ի՞նչ են կանայք .

— Թէ բարիք եւ թէ չարիք .

— Ինչի՞ կը նմանին .

— Սոխի, որ աչուրներէդ արցունք կը բերէ եւ  
սակայն դարձեալ կ'ուտեն .

## 31

## ԱՐԴԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ամառուան կիւրակէ առաւօտ մը, Սան-Պէնէ-տէթթօ եկեղեցւոյն դրանն առջեւ կարգ մը ծանծաղամիտ պարոններ աղքատներու պէս շարուած, եկեղեցիէն ելլող գեղանի տիկիները եւ օրիորդները աչքէ կ'անցնէին: Ասոնցմէ մին գեղանի տիկնոջ մը մօտենալով, ըսաւ.

— Տի'կին, այսօր հաւատացի թէ եկեղեցին արքայութեան ճամբան է, վասն զի դուք հրեշտակի մը պէս դուրս կ'ելլէք անկից:

Առ այս տիկինը պատասխանեց.

— Պարո'ն, ես ալ այսօր համազուեցայ թէ աշխարհք սատանաներով լեցուն է, ըստ որում եկեղեցիէն հազիւ դուրս ելած՝ ահա սատանաներէն կը պաշարուիմ:

— օ —

## 32

## ԶՈՒՄՐՃԱԽՕՍ ՄԸ

որուն կինը մեռած էր, երկրորդ անգամ ամուսնանալով՝ երկու մէծիտ պսակ-դրամ կուտայ տաներէցին.

— Աս ի՞նչ է օրհնած, կը հարցնէ քահանայն զարմացմամբ, առաջին անգամ որ ամուսնացար, ոսկի մը պսակ-դրամ տուիր, մինչդեռ հիմա...

—Աղէկ ամա, տէր հայր, կը պատասխանէ զը-  
ւարճախօսը, հին հագուստնիս երբոր դերձակին  
նորոգել տանք, նոր առածի չափ ստակ կու-  
տա՞նք մի եա' . . .

— 0 —

## 33

## ՏԱՆ ՄԸ ՄԷՉ

Ճամբորդութենէ վերադարձող մարդ մը ըսաւ  
իւր կնոջ .

— Իմ բացակայութեանս արդեօք որչա՛փ կա-  
րաս կը քաշէիր, թէ ո՛րչափ սիրտդ կը տրոփէր  
զիս յիշելով .

Կինը . — Ահ, սիրելի ամուսինս, այդ կէտը մի՛  
հարցնէր, ամեն անգամ որ սենեկէս ներս մարդ-  
մը կը մտնէր, կարծելով թէ եկողը դու ես, սիր-  
տըս սաստի՛կ կը տրոփէր . . .

— 0 —

## 34

## ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՉ

Մանկավարժը . — Սիրելի մանուկներս, հիմա  
ձեզի բան մը պիտի հարցնեմ. տուն մը կայ, ո-  
րուն դուռը հարուստին եւ աղքատին, երջանկին  
ու թշուառին, արանց եւ կանանց, ծերոց եւ տը-  
ղայոց եւ ամեն չափու հասակի մարդոց համար

միշտ բաց է, (Եկեղեցին կ'ականարկէ) եւ ես կը  
փափաքիմ որ դուք յաճախ այցելէք այն տունը,  
ուր մտնողը կը մխիթարուի եւ գոհ սրտով կը  
մեկնի. օ'ն ուրեմն, ըսէք տեսնեմ այդ տանը ա-  
նունը ի՞նչ է:

Կոչկակարի մը տղան — Ես գիտեմ միւսիւ, ըսե՞մ,  
հէմ ամեն օր հայրիկս հոն կերթայ:

— Ըսէ՛ ուրեմն.

— Գինետուն:

— 0 —

### 35

Կենդանաբանութեան դասատուն.

— Պա՛րոններ, հիմա, որ ակուայ ունեցող կեն-  
դանիները սովրեցանք, կարգը եկաւ ակուայ չու-  
նեցողները ճանչնալ, արդեօք կը գտնուի՞ ձեր մէ-  
ջէն մէկը, որ ակուայ չունեցող կենդանիի մը ա-  
նունը տայ.

Կայտառ աշակերտ մը — Ես կրնամ տալ.

— Ըսէ տեսնենք, այդ կենդանիին անունը.

— Իշթէ մամիկս, Թաթիպլէ խաթունը . . . բեր-  
նին մէջ հիչ ակուայ չունի:

— 0 —

### 36

Հետաքրքիր աշակերտ մը հարցուց կառավա-  
րիչին. — Միւսի՛ւ, ոմանք կըսեն թէ մարդս կա-  
պիկէն սերացած է, արդեօք ճշմարի՞տ է.

Կառավարիչը . — Ո՛չ, պարոն, ո՛չ . մարդս ի ըս-  
կզբանէ մարդ ծնած է . բայց անոնցմէ ոմանք ետ-  
քէն կապիկ կը դառնան :

— 0 —

37

ԿՐԾԱՊԱՆ

(ՔՕՐՍԷ)

Թէեւ ամենքս ալ գիտէինք թէ Քօրսէ կոչու-  
ած կամաւոր բռանկան, զինքը գործածողներէն  
չատերու շնչառութեան գործողութիւնը եւ ա-  
րագ շարժումները արդիլելով, տեսակ տեսակ վը-  
տանգաւոր հիւանդութեանց կը պատրաստէ զա-  
նոնք՝ վաղ կամ անագան, բայց չի գիտէինք թէ  
այդ տանջանաց գործին երբեմն տան մը խաղա-  
ղութիւնը մշտնջենաւորապէս խանդարելու քաջա-  
գործութիւնն ալ կրնայ եղեր ունենալ . որոյ օ-  
րինակն է հետեւեալը .

Ասկէց չորս տարի առաջ, (1885) միջին կարգի  
արհեստաւոր երիտասարդ մը աղքատիկ աղջկան  
մը հետ պիտի ամուսնանար . — աղքատ եւ միջ-  
նակարգ ծնողաց աղջկունք թէեւ այնչափ չեն  
գործածեր Քօրսէն, բայց պաշտօնական օրեր ա-  
տոնք ալ քիչ շատ մէջքերնին վերոյիշեալ տանջա-  
նաց գործիքով սեղմել եւ տասը բարանոց «ԷՖԷ» մը  
ձեւը խոթել կը պարտաւորին . ուստի հարսը  
հազու եյնող բարեկամ օրիորդք, մօտայի կանոն-

ներուն տեղեակ եղող հարսնքուրին հետ խեղճ հարսին քորսէին կապերը իրենց բոլոր ուժովը կ'սկսին քաշել .

Հարսը—Սման , ոտուրնիդ պագնեմ, բէք մի' քաշէք , հիմա ճիյէրս դուրս պիտի իյնայ :

Հարսնքուրը—Չարար չունի , ալըչմիշ կըլլաս . հապա՞ , հարս ըլլալը խօլայ՞ բան է . նայէ՛ , մէշկըդ ի՛նչ աղւոր պիչիմի եկաւ :

—Աղէկ ամա , նստիմ նէ՛ քորսէիս պալէնաները կուշտս պիտի խըխին :

—Պաղտաշ չի պիտի նստիս ա՛ , հոն երթանքնէ սէտիրին մէկ քէօշէն բարձի մը վրայ սանկ իլիշմիշ պիտի ըլլաս քի, կեսուրդ , տալըդ , տագըրդ կնքահարդ ու կնքամարդ օտային դուռնէն ամեն մէկ մանել էլլենուն խօլայ մը օտկի էլլաս . էյէրօր բանի մը պէտք ունենաս նէ՛ ես քովդ եմ, կամացուկ մը ինծի ըսէ :

Այս հրահանգը հարսին տրուելէն մէկ ժամ ետքը, փեսին կողմէն հարսառի կուգան եւ ըստ սովորութեան՝ հարսանեկան ձեւակերպութիւնները կատարուելէ ետքը հարսը փեսին տունը կը տանին : Խեղճ հարսը դիխէն կախուած կէս օխանոց թէլփէչէին ծանրութենէն կորագլուխ , եւ քորսէին պատճառած սրտին ցաւէն ակռաները սեղմելով, կեսրոջ եւ խել մը տիկնանց ձեռքերը ծռելով պագնելէն ետքը մինչեւ որ բազմոցին մէկ անկիւնը կերթայ կը կանգնի՝ մարելիք կուգայ վրան : Անմիջապէս տիկնանց մէջ բարսուքը կ'սկսի :

— Էլմոն հանրմ, իմ աշկիս պերանը քիչ մենծ կերեւայ կոր :

— Պղտիկ չի սեպուիք, քուրուկ, օրթա ալ չէ տէ ի'նչ եմ կըսէ ատանկընա :

— Աճապա Տօմնիցայիս խտար կա՞յ . անիկայ Վարդեվարին երկու շարթի օրը : ԱՅը լմնցուց քսանը մտաւ :

— Քա չէ' դուն ալ . անիկայ տահա էրէկի չօճուխը կը սեպուի, ասիկայ չի ցուցներ կոր ամա ըռահաթ քսան-քսանը մէկը ըլլալու է :

— Ինչ կուզեն 'նէ ըսեն, պիր թիւրլի սիրտս չի սիրեց :

— Ամա ինտո՞ր սա հաճի պէճէրիկսիզը պէճէրեց տէ աղջիկը տեղաւորեց :

— « Էր օլ, պաշ եար » ըսեր են քուրուկ, ամեն պանի ալ թալէհ պէք կէ :

Պահ մը ետքը ճաշի ատեն ըլլալուն, ամենքն ալ սեղան կիջնեն : Խեղճ հարսը քօրսէին պատճառած նեղութենէն դժուարաւ կրնայ նստիլ ի սեղան, եւ ի յարգանս հարսնքուրի ստիպմանց՝ հազիւ կրնայ քանի մը պատառ բան ուտել :

Ամբողջ երկու ժամ հարսը այսպէս տանջուելէ ետքը երբ սեղանէն կ'ելլեն, հարսնքուրին ալանջին կըսէ . — Ամա'ն, ոտքդ պագնեմ, վրաս մարելիք կուգայ կոր, քիչ մը սա քօրսէս թուլցո՛ւ :

— Քիչ մնալ առղաղ սխմէ, պսակէն ետքը կը հանուեցնեմ . հիմա քօրսէիդ կապը թուլցունելու համար թէքմիլ ֆիտտանդ հանել պէք կէ, հէմ

կուստօթ ալ պիտի աւրի . մէշկիդ պիշիմը տես-  
նաս ի՞նչ աղւոր է :

Հէք հարսը հոգին բերանը եկած , զգացած  
ցաւէն երեսին գոյնը մոխիր դարձած , կը պար-  
տաւորի սպասել : Գիշերուան ժամը վեցին պսա-  
կի պատրաստութիւնը կսկսի . հարսը հարսնքուրին  
թեւին կրթնած հազիւ սենեկին մէջտեղը կուգայ  
բայց չկրնալով ոտքի վրայ կենալ , կը մարի .

Տանը մէջ գտնուողք իրար կանցնին , ոմանք ջուր  
կը վազցնեն , ոմանք սրուակներ կը փնտուեն , —  
միայն քօրսէն է որ լռիկ մնջիկ իր տեղը նըս-  
տած է , — իսկ փեսին մայրը կը դռնէ .

— Բա աս ի՞նչ ծուռ էր օր թէփէիս ինձաւ . սա  
մութլախ սիրող մը ունի , սրչել մարեւէն պէլլի  
եղաւ քի սիրտը տղիս վրայ տաք չէ :

Հարսնքուրը — Աս ի՞նչ լախուտներ է անկաճս  
կը հասնին կոր , մեր աղջկան անուներ օխտը ճուր  
վլայ տէ անկէ եքկը պերանդ առ :

— Անանկ է նէ , իլլէթլի է , մարելիք ունի :

— Վրան պարի , ինչո՞ւ ըլլայ իլլէթլի . քօրսէին  
սրխըյութենէն վրան քիչ մը մարելիք եկաւ :

Չերկարենք , խեղճ հարսին խելքը գլուխը բե-  
րելէ , նա մանաւանդ կեսրոջ բորբոքեալ սիրտը  
դժուարաւ հանդարտեցնելէ ետքը պսակը կը  
կատարուի :

\*  
\*  
\*

Թէեւ այս դէպքին վրայ չորս երկար տարիներ  
անցած են , — եւ տակաւին ո՛ր գիտէ որչափ ալ



պիտի անցնին — բայց կեսուրը այն դիշերուընէ  
ի վեր հարսին վրայ սէր չունենալով, շատ անգամ  
անտեղի պատճառներով հարսը կը նախատէ, եւ  
«Դուն իլլէթլի ես, դուն մարելիք ունիս» խօս-  
քերը կը կրկնէ, որով հարս ու կեսուր կը կռուին  
եւ տան խաղաղութիւնը դռնէն դուրս կը վը-  
ռնտեն եղեր :

Ահա՛ քօրսէին քաջագործութիւնը :

— 0 —

### 38

#### ԶԱՐՄԱՆԱԼԻ ԴԱՏ ՄԸ

Նիւ-Եօրքի մէջ օրիորդ մը երիտասարդի մը  
դէմ դատ կը բանայ քսան հազար տօլար տու-  
դանք պահանջելով, ամուսնութեան խոստումը  
չկատարելուն համար :

Երիտասարդն աղջկան ծնողացը դիմելով կըսէ.

— Տէ՛ր իմ, նշանուած ժամանակս դուք միշտ  
դէմ էիք ձեր աղջկան հետ ամուսնանալուս . այժմ  
փոխանակ ուրախ լինելու, դատ բացեր էք ին-  
ծի դէմ, պատճառն ի՞նչ է .

Աղջկան հայրը — Պատճառը սա է որ մեր ընդ-  
դիմութիւնն զգացման հետեւանք էր, իսկ դատը  
առեւտուր է . . . :

— 0 —

## 39

## ՀԻՒԱՆԴ ՄԸ

Տարիներով յանկողնոյ ծառայող հիւանդ մը ունեցած հարստութիւնը բժիշկներու եւ դեղորէից համար վատնելէ ետքը, բժիշկները իրենց վերջին վճիռը կարճակեն թէ «Ա՛լ եւս ազատում չիկայ» : Հիւանդը յուսահատելով, իւր անձնական բժշկին կը հարցնէ . — Տօ՛ղ թօր, մեռնելս հոգ չեմ ըներ, բայց հիւանդութեանս ի՞նչ ըլլալը չհասկնալուս համար շատ մէռագ կընեմ կոր .

Առ այս բժիշկը կը պատասխանէ .

— Ա՛լ մեռնելդ որոշուեցաւ ա՛, դուն անոր նայէ, պօշ տեղը մէռագ ընելով սիրտդ թունդ հանելու ի՞նչ հարկ կայ . . .

— 0 —

## 40

## ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Կինը — Շիտակ ըսէ, սա ես մեռնիմ նէ, նորէն պիտի կարգուի՞ս .

Այրը — Աստուած չընէ՛ որ մէյ մ'ալ ատանկ խենդութիւն մը ընեմ :

Կինը — Վա՛յ, ըսել է որ կարգուելուդ համար զղջացած ես .

Այրը — Չէ՛, կնիկ, չէ՛, ինչո՞ւ զղջամ . . . հէմ վերջին զղջումը ստակ կընէ՞ . . .

— 0 —

## 41

## ՓՈԽ - ՀԱՐԿԱ ՀԱԻԱՔՆ (\*)

Ս.

## ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԹՇՈՒՍՈՒՄԻՒԹԵԱՆ ՄԷՁ

Լիօնի նոր արուարձանին կանաչազարդ կաղամախեաց ներքեւ «Շարրանի» կոչուած աւանը, 1780ին երկոտասնեակ տուներէ միայն կը բաղկանար, որոց մէջ կը բնակէին դործաւորներ: Երեկոյեան ժամասացութեան զանգակին ձայնը աշխատանաց ձայները կը դադրեցնէր եւ աւանին ամեն կողմը զուարթագին շշուկներ կը լսուէր, որք աղքատին տնակին մէջ հանգստեան ժամուն կը կանխեն:

Ընդ հուպ աւանին բոլոր բնակիչները դուրս կ'ելլէին եւ հարաւայնոց սովորութեանը համեմատ իրենց տանց դռներուն առջեւ նստած կամ կծ կտած, ու պնակին ծունգերնուն վրայ՝ ուրախ զուարթ կ'ընթրէին:

(\*) Դար մը առաջ, ի Ֆրանսա հասարակաց եկամուտները աճուրդի դրուելով, «Գլխաւոր Հարկահաւաք» անուամբ քառասուն կամ վաթսուն դրամատերներէ բաղկացեալ ընկերութեան մը կը յանձնուէր. այս ընկերութիւնն ալ հաւաքելիք հարկերուն մէկ մասը ուրիշ շահադիտաց կը ձգէր՝ փոխարէնը կանխիկ ստանալով. ահա այս վերջինք կը կոչուէին «Փոխ-հարկահաւաք»:

Աւանի բնակչաց սոյն կանոնին զանցառութիւն ընողը դարբին մ'էր, որ քանի մը տարիէ ի վեր անդ կը բնակէր. այս մարդուն բազուկը կը թուէր թէ ամենեւին չէր յոգնէր. ըստ որում իւր դարբնոցին կրակը արշալուսին վառելով, արեւամուտէն շա՛տ ետքը կը մարէր. կրնայ ըսուիլ թէ դրացիք ասոր խարտոցին ձայնովը կը քնանային ու կարթննային. այնչա՛փ եռանդուն կաշխատէր. եւ շատ հաւանական էր որ մինչեւ առաւօտ իւր խարտոցին խշրտուքը չի պիտի դադրէր, եթէ իւր միակ ուրախութիւնն եղող աղջիկը չի միջամտէր, որ մութը կոխելուն պէս ոստնելով գործատուն կը մտնէր եւ հօրը թեւէն կախուած՝ կէս մը իբր կատակ եւ կէս մը բռնի շարժումներով զայն դուրս կը հանէր :

Այս պատմութեան սկսած երեկոյին, որ հաղորդութեան տօնի (կիւլ բանայրբը) նաւակատիկն էր, Շարբանի դարբնոյն աղջիկը իւր պարտքը կատարել փութացած ատեն, գործատան դուռը դոց գտաւ. որոյ համար զարմացած՝ երկոցս հայրը կոչեց եւ քանի մը անգամ դուռը բաղխեց, բայց դուռը չի բացուեցաւ եւ ներսէն ոչինչ լքուեցաւ :

Մատաղատի աղջկան դրանը առջեւ կէս ժամ անձկութեամբ սպասելէ ետքը, վերջապէս դուռը բացուեցաւ, եւ ծերունին իւր աղջիկը բազկացը մէջ առած, նորա քաղցրիկ յանդիմանութիւններուն՝ զայն սրտին վրայ սեղմելովը եւ արտասուա-

լից աչօք խնդալներովը միայն պատասխանեց :

Աղջիկը, որ երեք ամիսներէ ի վեր իւր հայրը տըխուր եւ մտահոգ տեսներու վարժուած էր, նորա այս յեղակարծ ուրախութեանը վրայ դարմացաւ :

— Ա՛հ, գուցեց ծեր գործաւորը, իւր դողդոջ ձեռքովը արցունքները սրբելով, աղէկ գուշակեր էի թէ Լուիզօն իմ ուրախութեանս վրայ պիտի դարմանար :

— Ոչ թէ կը դարմանամ, այլ կ'ըմայլի՛մ, հա՛յր իմ, աղաղակեց աղջիկը եւ հօրը պարանոցը նետուեցաւ :

— Սակայն ամենեւին չէիր ալ յուսար, այնպէս չէ՞ .

— Ճշմարիտ է. ժամանակէ մը ի վեր այնքա՛ն տխրադէմ էիր որ . . .

— Բու պատճառաւդ . այո՛, միայն քեզի համար, զաւա՛կս . . .

— Ի՞նչ համար, հա՛յր իմ . . .

— Այո, թէեւ տարիքն ու վշտերը մաղերս ճերմկեցուցին, եւ կը կարծուի թէ սիրտս ալ մեռած է երիտասարդութեանս պէս, թէ բովիս բոցերուն լուսովը միայն աչքերս յստակ կը տեսնեն . սակայն ո՛չ, սիրտս միշտ կը բաբախէ, զաւա՛կս, մի միայն քեզի համար . եւ երբ խնդիրը քու երջանկութեանդ վրայ է, աչքերս այնպէս սրատես կըլլան, որ թօն դեռին յատակը գտնուած գայլախաղները կրնան համբել :

— Ի՞նչ պատճառաւ կըսէք ինձ զայդ, մրմնջեց Լուիզօն, որոյ այտերը թեթեւիկ կարմրութեամբ մը գունաւորեցան :

— Ապացուցանելու համար թէ, շատ լաւ գիտեմ այն հրճուանքը, զոր քու տարիքդ ունեցողները կը գտնեն թէ՛ թ — տ' Օռի անտառը ճեմելով:

— Կ'երդնում ձեզ, հա՛յր, թէ դիպուածը միայն...

— Այո, այդ բարի դիպուածը ամեն կիւրակէ հոն կը բերէ քաղքին այն երիտասարդը, որ իւր բարի մօրկանը հետ կուգայ մեր քովիկը դալարենեաց վրայ կը նստի, վայելելու համար...

— Երեք անգամ հետս խօսեցաւ, եւ այն ալ ձեր ներկայութեա՛նն...

— Այդպէս ըլլալը շա՛տ լաւ գիտեմ, եթէ ուրիշ կերպ եղած ըլլար, խօսքն անգամ չպիտի ընէի. բայց ապահով եղիր, աղջիկս, թէ այդ ստանին հաճոյ թուեցաւ ինձ. բարեհամբոյր, պարկեշտ, խմաստուն. եւ եթէ, ինչպէս որ կը կարծեմ, համեստ ընտանիքէ է, եւ եթէ, ինչպէս որ կը յուսամ, կանոնաւոր կենցաղի եւ աշխատութեան սէր ունի՛ լա՛ւ...

— Լա՛ւ ըսիք, հայր իմ, ըսաւ Լուիզօն, հեղամբանա՛նջ:

— Է՛հ, այո, լաւ ըսի, ա՛ղջիկս... օրիորդ Լուիզօն Լըժանտրը անունը պիտի փոխէ... լմացա՛ւ գնաց...

Յայնժամ Լուիզօն արտասուալից աչօք համբուրեց իւր հայրն եւ կարի ցած ու մեղմ՝ ձայնիւ հարցուց. — Մի՛թէ յոյժ աղքատ չե՞նք մենք, հա՛յր իմ. —

— Երէ՛կ, ճշմարիտ էր, բայց այսօր՝ ո՛չ... այ-

սօր հարուստ ես դու, Լուի'զօն . . . սա երկաթ-  
եայ տախտակը կը տեանե՞ս . . . ահա օժիտդ անոր  
մէջն է :

—Ս,յս երկաթէ տախտակը' . . .

—Գաղտնիք մը կը պարունակէ, որ վաղը երե'ք  
հարիւր Բիսթօլ (3000) ֆրանք պիտի վճարէ ինձ :

—Ուրեմն ադօ՞ր համար էր որ այնչափ աշխա-  
տեցաք . . .

—Եւ եթէ տխրադէմ ու մտահոգ էի, չի յաջո-  
ղելու երկիւղէս էր :

—Ս'հ, բարի հայրիկս, որպիսի' երախտագիտու-  
թիւն . . .

—Երբէք չեմ տարակուսիր ադոր . . . բայց այդ  
ի'նչ է . . . ասոնց վրայ խօսելու դեռ ժամանակ  
կայ, հիմա ընթրի'քս . . . Լուիզօն, արդարեւ լաւ  
չի շահեցայ՞ զայն . . .

Լուիզօն սաստիկ յուզեալ ըլլալուն շկրցաւ պա-  
տասխանել. հօրը թեւէն բռնեց եւ տարաւ զայն  
փոքրիկ պարտէզ մը, ուր աղքատիկ սեղան մը  
դրուած էր : Գարբինը աստեղադարդ կամարին  
տակ զուարթութեամբ ընթրելէ եւ կարճատօտ  
աղօթքով շնորհակալ ըլլալէ ետքը Ս,յնմ, որ եր-  
բէք չի մոռնար զաղքատն, արմուկները սեղանին  
վրայ յենլով, աղջկանն այսպէս ըսաւ .

—Շատ փոքրիկ էիր դու Լուի'զօն, երբ մայրդ  
մեռաւ . յորմէ հետէ թէ եւ 17 տարիներ անցած  
են, սակայն այն վիշտը, զոր իւր կորուստը ինձ  
պատճառեց, հոս սրտիս մէջ դամուած կեցած է

առ աջին օրուան պէս . . . եւ եթէ քեզ համար ապրիլս հարկ անհրաժեշտ չըլլար, հաւանական էր որ Սէնթ Անտէօլի գերեզմանատան անկիւնի կաղամախին տակ այժմ մէկի տեղ երկու տապանաքար պիտի գտնուէր :

Լուիզօն դայս որ լսեց, վաղեց համբուրեց իւր հայրը, որ մեղմօրէն ետ մղելով դայն՝ շարունակեց .

— Լուի'զօն, սիրելի' աղջիկս, ալ եւս խելահաս եւ ուշիմ լինելուդ համար է որ հիմա կիմացնեմ քեզի այս բաները, զոր միայն Աստուծոյ եւ աղջկանս պարտիմ խոստովանիլ : Նախ եւ առաջ դիտցիր թէ, ես սալին վրայ երկաթ ծեծելու համար ծնած չէի . թէ եւ կը պաշտեմ աշխատանքը, որու ամեն բան կը պարտիմ, նոյն իսկ քեզ երջանիկ աննելու յոյսս . սակայն ամեն ճշմարտութիւն կիմացնելու եմ քեզի : Հայրս Սէնդ—Անտէօլի բարեկեցիկ կալուածատէրներէն մին էր . դժբաղդաբար, ուղեց շատ հարստանալ, ուստի պարտք ըրաւ, որոնք ժամանակին հետ մեծցան, եւ եթէ մօրդ օժիտը չըլլար՝ իմ վրաս ծանր բեռ մը եղած պիտի ըլլայիք . մօրդ օժիտը այդ պարտքերը վճարելու սահմանուեցաւ . այն պարտքերէն հազիւ ազատած էինք, ահա ուրիշ ծանր դժբաղդութեան մը մէջ ինկանք, վասն զի, ինչպէս որ կըսէ ժողովրդեան առած մը, «չարիք իրարու կը յաջորդեն» . նոյն իսկ քու ծնած տարիդ էր, մինչ ես ուրախութենէս յիմարացած էի, ահադ ինչ ճը-



մեռ մը մեր երկիրը աւերեց : Թթենիները սառեցան , որ մեր գլխաւոր հարստութիւնն էին . հետեւաբար փոխանակ քաղելու՝ հարկավճարի համար փոխառութիւն ընել պէտք եղաւ : Յաջորդ երկու տարիներն ալ սառնամանիք եւ ողողմունք զիս բոլորովին կործանեցին : Յայնժամ բաժի պարտքը հատուցանելու անկարողութեան մէջ ինկայ եւ հարկահաւաքք անխղճօրէն իմ վրաս նետուեցան . . .

— Ուրեմն շատ վիշտ քաշած ըլլալու ես , ըսաւ Լուիզօն բոլորովին յուզեալ :

— Մեր այս գաւառին Փոխ-Հարկահաւաքը , որ ընչաքաղցութեան , հարստահարութեան եւ խրատութեան զօրութեամբը հարստացած էր , ամենացածօրէն սկսաւ իւր գործին . մեր սեւ բողոքէն այդ մարդը դեմերնիս ելաւ . նա զիս կործանեց եւ ընկճեց . եթէ քիչ մը ժամանակ տար ինձի՝ ազատուած պիտի ըլլայի , սակայն պնդեց , ու մոխրոյ վրայ նստեցուց զիս : Հարկը ծախք ծախքի վրայ ընել տուաւ ինձ , գրաւում գրաւման վրայ . եւ այլ եւս տանս մէջ բան մը չի գրտնելով , ճանկը անձիս վրայ նետեց : Ս,յն օրը քու մօրդ մահուան սահմանեալ օրն էր , զի արդէն հիւանդ էր , եւ զոր շուտով դերեզման դրին սոյն վերջին արկածք : Փոխ—հարկահաւաքի ծառայք վիզս շղթայի զարկած զիս տարին ի բա՛նտ . . .

— Սրիկանե՛ր . պոռայ Լուիզօն աչքերը խոշոր խոշոր բանալով :

— Զանոնք խրկողն, որ անգուժ եղաւ ինձ, Բէ-  
քուա՛լ կը կոչուէր. ահա զիս կործանող մարդը.  
նա էր որ զմայրդ սպաննեց եւ զիս ալ նետեց ի  
բա՛նտ, ուր մաղ մնաց խելքիս պիտի դար, ձեր  
երկուքին վրայ մտածելով: Մի՛ մոռնար այդ ա-  
նունը, աղջիկս, լաւ յիշէ՛ զայն:

— Մի՛ վախնար, հայր, չեմ մոռնար, բայց եւ  
այնպէս պէտք էր որ մոռնայինք, զի ո՞չ ապաքէն  
Սատուած իր դահիճներուն ներեց...

— Այո՛, սակայն Սատուծոյ ընել կրցածը մար-  
դաւս զօրութենէն վեր է. ես ներեմ անոր, քաւ  
լիցի. ընդ միշտ պիտի յիշեմ, զի բանտէն ելած  
օրս մայրդ թաղուած եւ քեզ ալ յանկեւանոցը  
գտայ:

— Եւ ահա այն ատե՞ն էր որ գործաւոր լինե-  
լու քաջութիւնն ունեցաք.

— Այո՛ աղջիկս... քեզի՛ համար...:

Կուիզօն հեղեղի պէս արցունք թափելով հօրը  
գիրկը նետուեցաւ. Գարրինը խանդաղատանօք  
զայն սրտին վրայ սեղմելէն ետքը, ըսաւ.

— Այս ամենը որ քեզի սլատմեցի, սիրտդ հան-  
դարտեցնելու համար էր, որպէս զի մեր երիտա-  
ւարդին նկատմամբ չերկնչիս. ես զինքը լաւ ըն-  
տանեաց զաւակ կը կարծեմ, եւ երբ ատենը գայ,  
պիտի ապացուցանեմ իրեն թէ, ծաղման եւ հա-  
մեատութեան մասին քու ծնողքդ ալ վար չեն մը-  
նար իրեններէն, ոյք եւ ալ լինին, զաւակս:

Բ .

## ԹՇՈՒՍՌՈՒԹԻՒՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Նոյն պահուն, կարի բնական զուգադիպութեամբ, այն տղան, որու խօսքը կընէին դարբինն ու աղջիկը, այն տղան ալ իւր մօրը հետ միեւնոյն նիւթին վրայ կը խորհրդակցէր մեծ եւ գեղեցիկ տան մը երրորդ դասիկոնին մէջ, որոյ պատուհաններէն Մսայլի ծառերուն մէջէն կը տեսնուէր Պէլքուրի հրապարակը :

Երջանիկ դիմագծու թեամբ եւ անկեղծութեամբ նշանաւոր հանդիսացող երիտասարդ մը նստեր էր միջին տարիքով կնոջ մը քով, որ կանուխէն ծերացած եւ գունաթափ եղած էր, զրկողութենէ կամ վշտերէ :

Սոյն բնակայարկը թէեւ ընդարձակ եւ չքնաղ էր, սակայն անոր աչքի զարնող մերկութիւնը, հոն բնակողաց ընկճումն եւ թախծութիւնը կը յայտնէր : Երիտասարդին մայրը սեւեր հագած ըլլալով, ունէր այն խառնուածոյ տարազը շինականաց, որք կուզէին որոշիլ պարզ ժողովրդոց կնիկներէ՝ առանց բարձրագոյն դասու կանանց ալ նմանելու : Արդ, կաղ սեղանի մը առջեւ, մինչեւ չուանները մաշած կանաչ թաւիչէ հին թիկնաթուի մը վրայ նստած, իւր տղուն մէկ բաճկոնակը կը կարկտէր, խոշոր մեղրամոմի մը լուսով : Սոյն աշխատութեան միջոցին երիտասարդը նորա երեսը կը դիտէր յուզեալ եւ միանգամայն այն-

պիսի թախծութեամբ, որ մայրը աչքերը վեր առած անոր նայելու ատեն շփոթեցաւ, ուստի որդւոյն ձեռքը բռնեց եւ երկչոտ ու քաղցր ձայնիւ ըսաւ.

— Ի՞նչ բանի վրայ կը մտածես, սիրելիդ իմ Լուի.

— Կուզէք դիտնա՞լ, մայր . . .

— Եւ միթէ ամեն բան պէտք չէ՞ որ դիտնամ, շարունակեց մեղամաղձոտ ժպտով.

— Ո՛հ, այո՛, մայր իմ, ձեզ համար միշտ բաց պէտք է ըլլայ սիրտս՝ որչափ որ տրոփէ:

— Ուրեմն ի՞նչ բանի վրայ կը մտածէիր.

— Այն մարդուն խստասրտութեանը վրայ, որ մեր կեանքը կը դառնայնէ:

— Եղո՛ւկ, որդեակ իմ, ես վարժուեցայ ադոր, եւ կը ներեմ իրեն ինչ որ ալ ընէ ինձ, միայն թէ կը խոստովանիմ, — եւ եթէ մեղք մ'է, թող Աստուած ներէ ինձ, — կուզէի որ դոնէ քեզի համար նուազ խստասիրտ ըլլար:

— Ճիշդ ես ալ ամեն ատեն այդպէս կ'զգամ, մայր իմ. եթէ ձեզի համար լաւագոյն լինէր, ես ինձ համար այնքան հոգ չպիտի ընէի:

— Այդպիսի յոյս մը, հէ՛ք Լուիս, ցնորք մը պիտի լինէր . . . այս բեռը Աստուած դրած է վրաս, ուստի երկայնամտութեամբ պիտի տանիմ մինչեւ գերեզման:

— Այլ սակայն, որպիսի՛ շար բաղդ, ըսաւ երիտասարդը, մեծաքայլ ճեմելով սոյն դատարկ սենեկին մէջ. անցունել կեանքը ցաւոց եւ թըշ-

ուառու թեանց մէջ այնպիսի դանձերու քովիկը , որք զազիր եւ վատ կրքէ զատ ուրիշ բանի չեն ծառայեր . . .

— Այո , մեծ դժբաղդու թիւն մ'է այդ , թէ եւ մեր ոտից տակ միլիօններ կան , բայց դու տիպուած ես զիս սնուցանելու համար աշխատիլ , եւ ես պէտք է որ զգեստներդ կարկտելու համար այսպէս կէս գիշերներուն արթուն մնամ :

— Անիծեալ հարստութիւն , որ զիս այսչափ կը թշուառացնէ . . . բայց գիտե՞ս մայր իմ , թէ ի՞նչ է իմ գիտաւորութիւնս .

— Խօսէ՛ , սիրելի որդեակ .

— Կուզեմ իրմէ ճամբորդութեան համար պաշար խնդրել , մեկնիլ կղզիներն եւ երթալ հարստութիւն շահիլ , որպէս զի վերջապէս տամ քեզ այն երջանկութիւնը , զոր իւր բոլոր կենացը մէջ զլացաւ քեզմէ :

— Այդպէ՞ս կը մտածես , զիս թողու՛լ , որդեակ , բայց առանց քեզի ի՞նչ պիտի լինիմ ես . վերադարձիդ՝ Փուվրիէրի խոտերուն տակ պառկած պիտի գտնես զիս . դու ալ նոյնպէս ոտկիներ պիտի ունենաս , այլ ոչ եւս պիտի գտնես մայրդ եւ դուցէ ուրիշ անձ մ'ալ :

— Ա՛հ , տանջանքներէս մէկն ալ այդ է , մայր իմ , դու գիտես թէ որչա՛փ կը սիրեմ Շարբանի աւանին այն կո՛յսը . բայց քանի կը յիշեմ զմեզ անջատող խոչնդոտները , գլուխս վեր ի վայր կը յուզի եւ մահառիթ ցուրտի նման բան մը կզգամ , որ սիրտս կը սառեցնէ . . .

— Հա՛յրդ, Լուի՛, աղաղակեց յանկարծ կիներ սարսափահար, ճրագը մարէ՛ ու պահէ՛ . . . Աստուած տայ որ լոյսը տեսած չըլլար :

Նոյն վայրկենին շտապեալ ոտնաձայն մը լսուեցաւ սանդուղին վրայ : Մայր եւ որդի պատուհանին մօտեցած՝ փութացին տարբեր խօսակցութեան մը սկսիլ . սակայն ո՞վ կարող է խաբել ագահը : Իսկուրը մէկէն ի մէկ բացուելով, աչքերը որսի շան մը նման խոշորցուցած մարդ մը բարկութեամբ գոչեց .

— Ձէի սխալե՛ր, ճրագը, զոր նշմարեր էի Պէլքուրէն, նոր մարեր էք . . . Այս ի՞նչ ծախք է ըրածնիդ, ի՞նչ զեղխութիւն, ի՞նչ կատաղութիւն, ասանկ պայծառ լուսնոյ ատեն խոտերու մէջ ասեղ մը ըլլայ՝ կը վերցուի . բայց եւ այնպէս, ճրագնե՛ր պէտք է ձեզի . . . անբանութիւն չէ՞ այս ըրածնիդ . . .

Այսպէս խօսող մարդը կրնար վաթսուս տարեկան ըլլալ . դեմքը ծերացած, գունաթափ եւ խորշումներով ծածկուած էր . ձեռքն ունեցած ցուպը տարուբերելով պահ մը սենեկին մէջ շրջեցաւ, որպէս զի աշտանակը գտնէ եւ զայն դրաւէ՛ ի պատիժ իւր կնոջ անհնազանդութեան . սակայն սոյն խուզարկութեան անպտուղ ելնելէն կրակ կտրած, սկսաւ այնպէս նախատել կիներ, որ որդին միջամտելու համար չկրցաւ ինքզինքը բռնել :

— Հա՛յր իմ, ըսաւ աղեկէզ ձայնիւ, ես էի որ

ձեզի ստեցի . արդարեւ կար վառուած աշտանակ մը , եւ ահա . . .

—Եւ կը համարձակի՞ս ինձ խոստովանիլ զայդ , պոռաց ագահն կատաղութեամբ .

—Այդպէս պէտք է ընել զձեզ հանդարտեցնելու համար , եւ թերեւս ուրիշ կարելոր պատճառի մը համար :

—Ա՛հ , ըսաւ ագահը , քայլ մը ետ երթալով եւ ցուպին վրայ ծանրանալով , դիրք մը , զոր յուր կացութեան մը մէջ դտնուած ատենը կառնուր . չպիտի նեղանամ , երբ իմանամ այդ ըսած կարելոր պատճառդ :

—Ահաւասիկ , հայր իմ , հաճեցէք համբերութեամբ մտիկ ընել զիս , կանխաւ գիտնալով թէ ձեր որդին երբէք չպիտի մոռնայ այն յարգանքը , զոր պարտի ձեզ :

—Կը հաւատամ , եւ չպիտի հանդուրժէի եթէ ուրիշ կերպ եղած ըլլար . բայց յարգանքէն զատ ուրիշ բան մ'ալ պարտական ես ինձի :

—Այո , հնազանդութիւն պարտիմ ձեզ :

—Ուրիշ բա՛ն մ'ալ :

—Սէ՛ր :

—Ո՛չ , բան մը որ նուազ երազական եւ աւելի շոշափելի է . հարկ եւ բա՛ժ .

—Կը խնդրեմ , հայր , բացատրեցէք մտքերնիդ .

—Ամենայն սիրով . ես միտք ունէի որ այս գըլուխը օր մը ձեզի բանամ կարդամ , բայց լաւագոյն է հիմա իսկ , որով ժամանակ ալ շահած կըլ

լամ, եւ թէպէտ շահը քիչ է, բայց ձեզ նման չեմ  
արհամարեր զայն, պարո՛ն անառակ... Արդ,  
դառնանք բուն խնդրոյն. ո՞րչափ ժամանակէ ի  
վեր տունս կը բնակիս.

— Ծնածէս ի վեր, հայր իմ:

— Գիտե՞ս թէ անկէ ի վեր քանի՞ տարիներ ան-  
ցած են.

— Կարծեմ քսան եւ հինգ տարիներ:

— Լաւ. ուրեմն ո՞վ սնոյց զքեզ, պարտկեց,  
հազուեցուց եւ իշխանի դաւկի մը պէս մեծցուց.

— Մայրս, սչատասխանեց երիտասարդը, սիրոյ  
եւ խորին յարախտագիտութեան ակնարկ մը ուղ-  
ղելով հէք կնոջ, որ անկիւն մը կեցած կը դողար:

— Դ՛այդ ալ կերպ մը խօսիլ է, միմուայ ազահը.  
սակայն, մեր ամուսնական դաշնագրոյն համե-  
մատ, ձեր մայրը ինքնին բան մը չունի. հետե-  
ւարար այդ ամենն ընողը ե՛ս եմ.

— Արդեօք կրնամ հարցնել թէ ի՞նչ դիտաւո-  
րութեամբ կը յիշէք զայդ.

— Ինձի ունեցած պարտքերնիդ հաստատելու  
համար:

— Այլ եւս չեմ հասկնար ըսածնիդ, հայր.

— Բայց արեւու պէս յատակ է. դուք ինձի տա-  
րին երկու հազար ֆրանքէն աւելի նստած էք.  
հետեւարար յիտուն հազար ֆրանք կը պարտիք  
ինձ ձեր սննդեան, տան վարձքի եւ զգեստուց  
փոխարէն. առնուազն այդ գումարին քառորդին  
չափ ալ դնենք ձեր ուսման, հիւանդութեանց



եւ այլ մանր մուկն ծախուց համար, — 12500 Փր. — կուսենանք կորուսեալ եկամուտ մը՝ հարիւրին 20 շահով. եւ այնչափ մ'ալ, զոր պիտի շահէի անշուշտ այն հարկէն, եթէ ձեզի համար կորսնցուցած ֆրանքներս հոն դրած ըլլայի... ահա կը տեսնէք, պա՛րոն, թէ հարիւր հազար ֆրանքի կլորիկ եւ ամբողջական գումարի մը պարտականքս էք :

— Ենթադրելով թէ ճիշդ է այդ հաշիւը, ըսել է որ իմ վրաս երկար վարկ մը ունեցած ըլլալու էք, հա՛յր իմ :

— Այդ տեղ կը սխալիք, պա՛րոն. ես ամենեւին փոխատու չեմ. եւ դուք ալ ձեր կարծածէն շատ առաջ, այսինքն այս ամիսը չի լմնցած պիտի վճարէք :

— Բայց դրամը...

— Արդէն գտնուած է :

— Ի՞նչպէս :

— Զքեզ ընկերութեան խոշոր գլխարկաւորներէ մէկուն աղջկանը հետ պիտի ամուսնացնեմ. արդ այս նպատակին համար, փոխ — հարկահաւաքը, իմ պաշտօնակիցս իւր աղջկանը օժիտ կուտայ հարիւր հազար ֆրանք, զոր ես ստանալով, վերոյիշեալ պարտքը վճարեալ պիտի համարիմ եւ անոր ըստացագիրը յանձնեմ ձեզի : Սակայն, որովհետեւ հայր մը միշտ հայր է, թէպէտեւ պարտաւոր չեմ բան մը ընել, պայման դրած ենք որ զձեզ իմ տանս մէջ պահելը շարունակեմ :

— Անտարակոյս նոյն պայմաններով, ըստ երիտասարդը հեզնական ժպտով մը :

— Առանց երկմտութեան, եւ ձեր ապագայ աներոջ ժառանգորդութեան արժէքովը :

— Ձեզ համար սակարկութիւնը լաւ է, պատասխանեց որդին անխռով ձայնիւ, եւ սակայն կը ցաւիմ որ ես չպիտի կարենամ վաւերացնել զայդ :

— Ի՞նչ ըսիք, ի՞նչ, պուայ ազահն ակռաները սեղմելով, աղէկ չի լսեցի, կրկնէ՛ :

— Կըսէի թէ այդ ամուսնութիւնն անկարելի է. վասն զի երբէք չպիտի ամուսնանամ փոխհարկահաւաքի մը աղջկանը հետ, չուզելով ես ինքնին հարկառութեան մէջ մտնել: Սակայն եթէ ձեր յօժար կամօքը ամուսնանալու ալ ըլլամ, կընոջս ներկայութեանը ամօթահար չի մնալու համար օրինաւորապէս պիտի պահանջեմ ձեզմէ առնուազն չորս կամ հինգ հարիւր հազար ֆրանք :

— Չորս կամ հինգ հարիւր հազար կարիճներ խայթեն զքեզ, աւազակ . . .

— Կամ եթէ ոչ ես պիտի ընտրեմ սրտիս համեմատ կին մը՝ որ առաքինութենէ զատ ոչինչ ունենայ :

Երիտասարդին սոյն անվեհեր յայտարարութիւնը ազահին կատաղութիւնը վերջին ծայր հասուց, ուստի ցուպը բարձրացուցած անոր վրան վաղեց եւ անշուշտ ծեծին տակ պիտի սպաննէր զայն, եթէ մայրը չի միջամտէր, որ ամուսնոյն մէջքին փարելով աղաղակեց .

— Բէքուա՛լ, Բէքուա՛լ, կը պաղատիմ, խնայէ՛ զաւկիդ . . .

—Սրիկայ մ'է այն, որոտայ փոխ—հարկահա-  
ւաքը ցասամար. սրիկայ մ'է, որ հարիւր հազար  
ֆրանքս կուղէ յափշտակել . . .

—Պիտի մտածէ՛, կըսէր մայրն, զագահը զսպել  
ջանալով:

Բայց նա եւս քան զեւս կատղելով, կոպտու-  
թեամբ մէկդի հրեց կինն, եւ ամենատխուր տե-  
տարան մը սոյն հէք կնոջ սիրտը խորտակելու վը-  
րայ էր, երբ դրսէն կարծես աղմուկ մը լսուեցաւ .  
ագահը, որուն ձեռքը արդէն բարձրացած էր  
ուժգին հարուածը կշռելու, կանկ առաւ, անձ-  
կութեամբ մտիկ ըրաւ, վազեց սենեկին դուռը  
բացաւ եւ դուրս նետուեցաւ:

—Օրհեա՛լ ըլլայ Աստուած, միմնջեց տիկին՝ Բէ-  
քուալ, ահաւասիկ ազատեցանք. այ չի պիտի վե-  
րագառնայ:

—Ոչ, ըսաւ երիտասարդը գառնութեամբ, իր  
ստակին համար սիրտը վախ մտնելուն՝ այս դի-  
չեր այ ըստ սովորութեան գանձին քովէն չի  
պիտի հեռանայ:

Եւ ճրագը վերստին վառուելով, մայր եւ որդի  
մինչեւ կէս գիշեր նստած հեշտօրէն զբաղեցան,  
մին որդւոյն բաճկոնակը կարկտելով, միւսը Շար-  
բանի ընտանեաց վրայ խօսելով, որու հետ յաջորդ-  
օրը պատարագէն ետքը պիտի տեսնուէին թէ՛թ—  
տ'Օռի անտառին մէջ:

Գ.

### ԳԱՆՁԱՏԱՆ ԴՈՒՌԸ

Հետեւեալ առաւօտ ագահը կանուխ տունէն  
մեկնեցաւ եւ Պէլքուրէն անցնելով, ուղղակի Շար-  
բանի կադամասեաց ներքեւ դարբին Լրժանտրի  
տնակը գնաց: Դարբինը ճամբուն եղերքը փայտէ  
նստարանի մը վրայ նստած՝ տնոր կ'սպասէր:

Բէքուալ իրմէ Շարբանի դարբինը հարցուց .

— Ես եմ, պատասխանեց իր ժամուր :

— Ուրեմն ցոյց պիտի տա՞ք ինձ այն երկաթեայ դուռը, եթէ սակայն լմնցած է .

— Բան մ'ալ պակաս չունի, միմուայ իր ժամուր :

— Ո՞ւր է, տեսնե՞նք, կրկնեց ագահը, անհամբեր .

Գարբինը առանց պատասխանելու, խանութէն ներս տարաւ զայն եւ երկաթեայ դուռը անոր ցուցնելով, ինքը սալին վրայ նստած սկսաւ մըտածել, ամենեւին մտքէն չանցունելով թէ իւր վաղեմի հարստահարիչին հետ էր գործը, ըստ որում այն դուռն ապսպրողը իւր կամքին համեմատ Բէքուալի անունը տուած չէր :

Բէքուալ . — Ս,յս դրան փականքը ո՞ւր է .

— Ոչ բանալի ունի եւ ոչ ալ փականք :

— Ուրեմն ի՞նչպէս կը գոցուի .

— Գաղտնիքով մը, որ ահաւասիկ .

Եւ իր ժամուր իւր մատը զսպանակի մը մէջ պահուած կոծակի մը վրայ դնելովը դուռը գոցուեցաւ երկաթեայ երեք լայն լծակներու միջոցաւ, որք ի միասին մղուելով, մտան շրջանակին մէջ, ուսկից կախուած էր դուռը :

Սոյն գործիքին պարզութիւնը ու ամբուստիւնը զմայլեցուց զԲէքուալ . ագահն այնչա՛փ դո՛հ մընաց, որ ձեւակերպութեան համար միայն սակարկեց, եւ հակառակ իւր սովորութեան, զեղջ մը ձեռք բերելու համար ամենեւին չընդդիմացաւ . անձամբ գնաց սայլորդը կանչեց, որ դուռը պիտի տանէր, եւ անոր մեկնելը տեսնելէն ետքը թեւին տակը պահած կաշիէ քսակէ մը հաղար հատ սկուտ համբեց, հառաչելով . ապա նորէն համբեց, ապահով ըլլալու համար թէ ըրած վստասուն մէջ չէր սխալած, եւ վերջապէս զանոնք դարբինին թողուց, ըսելով .

- Գիտէ՞ք թէ պայման մը մնաց կատարել:
- Այո, պատասխանեց Լըժանտը, խոստացայ որ անձամբ դուռը իր տեղն անցունեմ. խօսքս պիտի բռնեմ:
- Ուրեմն այս երեկոյ . . .
- Համեստ մարդը տօնի օրեր կը հանդի:
- Բայց կարծեմ կէս գիշերին կրնայ աշխատիլ, շեշտեց Բէքուալ կծու եղանակաւ:
- Թող այդպէս ըլլայ: Ուրեմն կէս գիշերին ո՞ւր պիտի սպասեմ ձեզի:
- Պէլքուրի կամուրջին վրայ:
- Լաւ, Սէն — Ժանի ժամացոյցը տասներկուք չի դարկած, հոն պիտի գտնուիմ:
- Բանի մը վայրկեանէ ետքը Լուիզօն գործատուն մտաւ, այլ չի տեսաւ զագահը, որ առանց մնաք բարովի մեկներ էր. սակայն զարմացման ճիշ մը արձակեց, տեսնելով հայրն՝ որ կեցեր ոսկիները կը դիտէր: Լըժանտը բազկացը մէջ առաւ զայն, ուժով մը սրտին վրայ սեղմեց եւ արտասուալից աչօք խնդալով. — Քու երջանկութիւնդ է այս, սիրելի՛ աղջիկս, ըսաւ, այո՛, օժիտդ է, զոր կը տեսնես, թէ եւ քիչ մը սուղի նստաւ ինձի, այլ այժմ հոգ չեմ ըներ, վասն զի երջանիկ պիտի լինիս դու . . . Արդ, այսօր լաւ մը աղւորցո՛ւր դու գրեզ, որովհետեւ նոսիս պատարագի պիտի երթանք, եւ ապա . . .
- Եւ ապա՞, հա՛յր իմ . . .
- Չե՞ս դու շահեր . . .
- Թէ՛թ — տ'Օուի անտա՞՞ռը .
- Այո՛, եւ գրաւ կը դնեմ թէ հոն հասնող ներուն առաջինը մենք պիտի ըլլանք:

Դ.

## ՅԻՇՍՏԱԿ ՄԸ

Նոյն օրը հայր Լըժանտը եւ Լուիզօն պատարագէն ետքը նախաճաշիկնին ըրած, թէ՛թ — տ'Օ-ուի անտառը դացին գտան զտիկին Բէքուալ եւ իւր որդին, որ Լուիզօնը թեւը առած, մարդագետնի մը վրայ կը պտտէր, իսկ Լըժանտը տիկնոջ քովը նստած կը խօսակցէր :

— Տիկին, ներեցէք որ սիրտս բանամ ձեզ, կըսէր դարբինը, մենք աղքատ մարդիկներ ենք, դուք եւս կարելի է այնչափ հարուստ չէք, եւ այս աղոյց ապագայն թերեւս հոգ կը պատճառէ ձեզի :

— Զայդ կը խոստովանիմ, պատասխանեց տիկին Բէքուալ, եւ ձեր անկեղծ համարձակութեանը ես եւս հետեւելով, կըսեմ թէ կարելի է սխալ մը գործեցինք, գործն հասցնելով մինչեւ այն կէտն, ուր կը տեսնեմ զիրենք :

— Երկու անկեղծ եւ ուղիղ սրտերու զիրար սիրելու համար արտօնութիւն տալը սխալ մը չէ : Գէթ իմ կարծիքս այսպէս է :

— Բայց եթէ այնպիսի խոչնդոտք ելնեն, որ մեր աչաց առջեւ յօրինուած սոյն կապերը կամքերնուս հակառակ խոչեն . . .

— Ի՞նչ տեսակ խոչնդոտք կարող են զանոնք անջատել . . . ես իմ կողմանէս հատ մ'ալ չեմ նախատեսեր . . . եթէ ստակի պակասութեանէն է, փառք Աստուծոյ, տղաքնիս այդ կողմէն վախճալու բան մը չունին :

— Ի՞նչ ըսել կուզէք, հարցուց տիկին Բէքուալ, բողոքովին յուզեալ :

— Ըսել կուզեմ որ, եթէ թշուառութիւն մը ունեցած էք, Լուիզօն պիտի կարենայ զայն դարմանել . . . թէեւ իշխանուհւոյ մը օժիտը չունի,

բայց շնորհիւ իւր հօր խնայողութեան եւ աշխատանաց , իւր ամուսնոյն տունը երկու հազար ըսկուտ օժիտ մը պիտի տանի :

Լրժանտրի այս յայտարարութեանը վրայ Լուիի մօր շրթանցը վրայէն աննշմարելի ժպիտ մը անցաւ :

— Այս օժիտը , կրկնեց դարբինն աշխուժիւ , արհամարհելի՞ կը գտնէք արդեօք :

— Ա՛յ , ըսաւ ագահին կինը մեղմ ձայնիւ . սակայն ստակի խնդիրն ինձ այնչափ չի դաչիւր , եւ ես զայն աւելի կատեմ քան կըղձամ :

— Ուրեմն կը վախնաք թէ արհեստիս ստորնութի՞ւնը արդեւք մը լինի . . . բայց ես պարկեշտ ընտանիքէ ծնած եմ , եթէ հրապարակային աւագակ մը , որ զիս մոխրոյ վրայ նստեցուց , դէմս ելած չըլլար , ես ալ մերայնոց նման , պիտի հետեւէի դատաւորութեան արհեստին կամ իմ հողերուս մշակութեամբը պիտի զբաղէի . սակայն այն թշուառական Բէքուա՛լը . . .

— Բէքուա՛լ , ըսաւ կինը շփոթեալ ձայնիւ .

— Այո , տիկին , նա է որ զիս յուսահատութեան անդունդը գլորեց , եւ քանի որ արտասանեմ այդ նզովեալ անունը , արիւնս սիրտս կը վազէ եւ զայրոյթն ալ ճակատս կայրէ :

— Աւելի ցած խօսեցէք , պարոն Լրժանտր , ըսաւ Լուիի մայրը դողահար ոտքի ելլելով , աւելի ցածէն խօսեցէք , զաւկի՛ս համար . . . թերեւս զարմանք պատճառեն ձեզ իմ խօսքերս ու խոսվութիւնս , սակայն որ եւ է կարծիք մի՛ յայտնէք այն նամակէն առաջ՝ զոր Լուի պիտի գրէ ձեզ այս երեկոյ . իսկ արդ ըստնուինք . . . խեղճ տղայ , ի՛նչ դժբաղդութիւն :

Տիկին Բէքուալ արտասուալից աչօք համբուրեց զԼուիիդօն , եւ ժամանակէն առաջ իւր տղան

առնել տանելովը գծերունի գործաւորը զարման-  
քէն արձանացեալ թողուց :

— Հը՛մ, կըսէր մտախոհ, ի՞նչ կը նշանակէ այս .

— Այդ մասին ես ալ բան մը չգիտեմ, հայր իմ պատասխանեց Լուիզօն, ոչ նուազ յուզեալ, երբ դուք մօրը հետ կը խօսէիք, ես ալ այս առտու-  
ան ինձ ըսածներդ Լուիի իմացուցի, բայց փոխա-  
նակ ուրախանալու, տրամեցաւ եւ արտասուեց :

— Ձիս արհամարհած ըլլալու են, մրմուաց Լը-  
ժանտը, այլ սակայն, եթէ այդպիսի դաղափար  
մը ունին վրաս, կերդնո՛ւմ թէ մարդերնին չեն  
ճանչնար . . . ա՛հ, կը տեսնե՞ս Լուիզօնիկս, քեզի  
համար, քեզի համա՛ր է որ միայն պիտի համբը-  
րեմ, եթէ այնպէս չըլլար՝ իսկոյն պիտի մեռնէի,  
եթէ այնպէս չըլլար՝ իրենց ետեւէ՛ն վազելով  
«Թող մէյ մ՛ալ չիգա՛ն» — պիտի պուայի :

Հայր եւ աղջիկ այսպէս խօսելով տխրութեամբ  
վերադարձան իրենց տնակը, ուսկից աւաւօտուն  
այնչափ ուրախ զուարթ մեկնած էին :

Ե .

### ԳԵՏՆԱՓՈՐ ԳՄՆՁԱՏՈՒՆԸ

Կէս գիշեր կը զարնէր Միայն գիշերապահը մերթ  
ընդ մերթ ամայի եւ լռին փողոցներուն մէջ կը  
պտտէր. Լիօն քաղաքն ամբողջ կը ննջէր Սէն-ժանի  
կանոնիկոսի մը նման, այն պահուն՝ երբ Լըժանտը  
Պէլքուրի անտառի կամուրջին վրայ հասաւ :

Բէքուալ, որ արդէն կառքով մը եկեր հոն կըս-  
պասէր, փութաց վար իջնել. յիշեցուց անոր թէ  
ըստ պայմանի պարտաւորուած էր թողուլ որ աչ-  
քերը կապէ, իւր ազահու թեան մտահոգութիւն-  
ներէն պահանջուած երաշխաւորութիւնն էր այս,  
եւ զոր Լըժանտը առանց դժուարութեան թոյ-  
լատրեց. ուստի թանձր կապով մը կուրացած՝



հարկահաւաքին քովի աթոռակին վրայ ելաւ նըստաւ : Ազահը զայն խել մը փողօցներէ անցունելէ ետքը քաղքին ամենէն ծայրագոյն մէկ թաղը տարաւ : Երբ կառքը կեցաւ, Բէքուալ անոր աչքին կապը քակեց : Իարբինը անորոշ վայր մը, ծառերով եւ մացառներով կիսովին ծածկուած տեղ մը գտնուեցաւ : Հոն ազահը թաւաւտներուն մէջէն անցք մը բանալով, դարեր առաջ շինուած կամարապատ նկուղ մը առաջնորդեց զինքը, ապա ճրագ մը վառեց եւ յաջորդաբար կաղնիէ երկու դռներ բացաւ, որ լայնարձակ եւ խորին դետնափոր մը կը տանէր, եւ երրորդ կամարի մը առջեւ պառկեցուցած երկաթեայ դուռը ցուցնելով ըսաւ . — Ահաւասիկ գլաններ, բառնալիք եւ լըծակներ, ուստի ձեր գլուխ-դործոցը ղետեղեցէ՛ք :

Լըծանոր դործի սկսաւ, եւ ազահին օգնութեամբ, որ տարիքին հակառակ ուժեղ էր տակաւին, երկաթեայ դուռը կանգնեցուց եւ զայն ծխնիններուն վրայ հաստատեց : Բէքուալ ուղեց անձամբ գոցել զայն եւ ուրախութեան ճիչեր արձակեց, տեսնելով որ դուռը նախապէս փորուած քարէ շրջանակին մէջ կը պարփակէր եւ որ ահեղ պատուար մը կրնար ըլլալ գողերու ձեռնարկութեանց :

— Զայն տեղէն խախտելու համար ոչ կային եւ ոչ լծակ օգուտ մը չըներ, ըսաւ ցնծութեամբ ձեռները շփելով, ասի կատարեալ դործ մ'է, հարկ եւ տո՛ւրք :

— Ո՛չ, պատասխանեց դարբինը, դեռ կատարեալ չէ՛, պակասութիւն մը կայ, զոր ես դիտմամբ ձգած եմ, որովհետեւ ձեր անունովը զայն ինձ ապսպրող անձը յայտնեց թէ անոր գինը աւելցնել չէք կամիր եղեր դուք :

— Պակասութիւն մը՛, թոթովեց ազահը .

— Չէք կրնար անգիտանալ . վասն զի զայն սըր-  
բագրելու համար պայմանադրեալ զնոյն կրկինը  
կը պահանջէի :

— Ս,յո , հասկցայ , սակայն ստակը յոյժ թան-  
կագին է , չեմ կրնար պատուհանէն դուրս նետել :

— Սակայն , ձեզ տեսնելէս ի վեր դիտաւորու-  
թիւններս շատ ու շատ մեծցան . եւ այս ժամուս  
երեսուն հազարէն վար չի պիտի շինեմ իմ գլուխ  
գործոցիս պակասը :

— Որովհետեւ զիս հարուստ կը կարծես . . .

— Որովհետեւ գքեզ ճանչցա՛յ , Բէքուա՛լ . . .

Ագահը կայծակէ շանթահարեալի մը պէս յետս  
ընկրկեցաւ , ու շագրութեամբ դարբինին նայեցաւ ,  
ապա ինքզինքը ժողուելով հարցուց թէ , — Ի՞նչ  
կը նշանակեն այդ խօսքերը .

— Կը նշանակեն թէ , քու ստակի վատթար ծա-  
րաւդ զիս կործանեց , կինս յուսահատութենէ  
մեռցուց եւ զիս տանն եւ հինգ տարի արհա-  
մարհանաց , վշտաց եւ թշուառութեանց դատա-  
պարտեց , զիս՝ որ երբեմն հարուստ եւ ի պատ-  
ուի՛ էի . . .

— Պա՛հ , պա՛հ , հատուցման անկարող պարտա-  
պան մ՛ էք եղեր . սակայն այդ ամենուն համար  
ձեռքերս կը լուամ եւ դքեզ ամենեին չեմ ճանչնար .

— Զիս չես ճանչնա՛ր . . . ես Սէնթ — Սնտէօլի Լը-  
ժանտրն եմ , զոր քու ծառաներդ վիզը շղթայա-  
կապ տարին ի բանտ , մինչդեռ հիւանդ կինն ու  
զաւակն ալ փողո՛ց ձգեցին . . .

— Պէտք է որ պարտական եղողը իր պարտքը  
վճարէ , ասկէց զատ , այդ ըսածներէդ մէկն ալ  
չեմ յիշեր :

— Բէքուա՛լ , ըսաւ դարբինը շեշտելով , մազերդ  
ճերմկեցած են , մարմինդ հեաղհետէ կը կորանայ ,  
եւ միշտ ողջ չպիտի մնաս . . . փոխանակ երկաթեայ

դռներով գետնափորներ շինելու, որպէս զի կաշառառու թեանց եւ յափշտակու թեանցդ պտուղը անդ պահես, լաւագոյն եւս կարժէ որ քու ծերութեանդ եւ հոգւոյդ համար բարի գործերով եւ զղջմամբ քաւես այն ոճիրներն՝ որոցմով բեռնաւորուած ես դո՛ւ :

— Այդ բաները ամեն կիւրակէ գիւղին եկեղեցին կը քարոզեն. սակայն եթէ Լատիններէն կը հասկնաս՝ պիտի ըսեմ քեզ թէ, ՆԵՒՆՆԻՍ ԵՒՆՆԻՍ ԳԵՆԵՐԻՍ, թող դարբինը միայն իւր խարտոցի՛ն խառնուի :

— Բայց չարիք մը պիտի գայ գլխուդ, Բէքուա՛լ, եւ որովհետեւ այդ գողցած ոսկիներուդ ամեն մէկը թշուառութիւն մը կը ներկայէ, այդչափ յոռի կերպիւ շահուած կուտակաց տակէն ողբոյ եւ անիծից միմուռններ պիտի ելլեն, զոր վրէժխնդիրն Աստուած պիտի լսէ և զքեզ շանթահարէ :

— Եւ փառք յաւիտեանս ամէն : Ահա արշալոյսը կը ծագի, պէտք է մեկնիլ :

— Վերջին խօսք մ'ալ, Բէ՛քուալ, կամ լաւ եւս յետին կարծիք մ'ալ զոր կուտամ քեզ, թէպէտեւ արժանի չես անոր՝ բայց իմ հոգւոյս ուղղութիւնը և անկեղծութիւնը հաստատելու համար կըսեմ, լաւ ի միտ առ այն վտանգն, զոր այժմէն կիմացնեմ քեզի, ամեն անգամ որ այդ դուռը բանաս . . .

— Հասկցայ, հասկցայ, ընդմիջեց ագահը, չի թողլով որ դարբինը «Չըլլայ որ ներսէն գոցես» ի

կարեւոր հրահանգը արտասանէ, այդ իմ գործս է, մի՛ խառնուիր, նորէն քարոզի չսկսինք, երթաս բարով:

Լըժանտը չի պատասխանեց, թողուց որ նորէն իւր աչքերը կապէ, եւ ազահը զինքը տարաւ ձգեց մինչեւ Պէլքուրի կամուրջը:

Զ.

ԱՍՏՈՒԾՈՅ

Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ը

«ԶԲՎՈՒՈՂՆ ԱՊՐԵՐ Ե,  
Վ.Ս.Յ ԶԲՎՈՂ.ԻՆ:»

Այս դէպքին վրայ երկու ամիսներ անցան, և հակառակ տիկին Բէքուալի խոստման, Լուիի նամակը ուշացաւ. որով Լուիզօն սկսաւ հիւժել եւ արտասուել: Ուստի արիասիրտ Լըժանտը օր մը իւր կիրակնօրեայ մոխրագոյն զգեստն հագաւ և միտքը դրաւ երթալ երիտասարդը գտնել ու բացատրութիւն խնդրել, միանգամայն որոշեց մեկնիլ Լիօնէն, եթէ իւր յոյսն ի դերեւ ելլէր:

Այն ինչ Պէլքուրէն կանցնէր, այն վաճառատունը երթալու դիտաւորութեամբ, ուր կ'աշխատէր Լուի, խումբ մը մարդիկ տեսաւ, որք ձեռքով ու ոտքով կը խօսակցէին. մօտեցաւ անոնց եւ գումարման պատճառը հարցուց.

— Բարեկամ, պատասխանեց շինական մը, երեւակայեցէք անգամ մը թէ քաղաքիս մեծահարուստներէ մին երեք շաբաթէ ի վեր անյայտ ե-

ղած է . մէկը չգիտեր թէ ո՞ր սատանին ծակը մը-  
տեր է . արդարութիւնը շուարեր մնացեր , ինչ  
ընելիքը չի գիտեր . եւ անտարակոյս ոճիր մը  
գործուած ըլլալու է , վասն զի ոսկիներով լի սըն-  
տուկներ ունէր , բայց տանը մէջ ստակ մը անգամ  
չե՛ն գտեր . . . միայն իւր սապատող մէկ գերին  
կ'ամբաստանեն , որ տիրոջը հետ այն ալ աներե-  
ւոյթ եղած է :

—Եւ ի՞նչպէս կը կոչուէր այդ պարոնը , հար-  
ցուց կը ժանտր յուզմամբ .

—Բէքուալ :

—Բէքուա՛լ , ա՛հ , ես առաջուց չըսի՞ իրեն . . .

—է , ի՛նչ , տեղեկութի՞ւն մը ունիք ուրեմն ,  
ըսաւ յանկարծ կեղծ ծամով մարդ մը , որ խօ-  
սակցութեան յոյժ մտադիր կ'երեւէր :

—Խիստ վեր ի վերոյ գիտեմ . . . գէթ այնպէս  
կը կարծեմ . բայց փոխ—հարկահաւաքը ընտանիք  
ունէ՞ր արդեօք .

—Հապա՞ , կին մը եւ որդի մը ունէր :

—Կրնա՞ք ինձ ցուցնել նոցա բնակարանը .

—Ինչո՞ւ չէ , ըսաւ սեւ կեղծ ծամով մարդը , և  
դայն ագահին տունը առաջնորդեց :

Երբ կը ժանտր դուռը զարկաւ , դիմաւորեց  
զուրի , որ զարմացման ճիչ մը արձակեց : Իարբի-  
նը , որ կեղծ ծամով մարդուն հետ ներս մտեր  
էր , դուռը գոցեց եւ ըսաւ .

—Զձեզ տեսնելուս՝ սքանչացած եմ , Պարոն

Լուի, ձեզի խօսք մը ունիմ, սակայն նախ տիկին Բէքուալի հետ խօսելու եմ:

Լուի շփոթութենէն առանց պատասխանել կարենալու, զայն մօրը սենեակը տարաւ: Բարի կիներ դարբինը տեսնելով՝ ճիշ մը արձակեց եւ երեսը ձեռուրներուն մէջ պահեց:

Լրժանտը պահ մը լռելեայն զանոնք դիտելով, ամեն ինչ դուշակեց նոցա խռովութենէն, ուստի դողդոջուն ձայնիւ հարցուց.

— Սրդեօք տիկին Բէքուալի՞ հետ խօսելու պատիւն ունիմ.

— Ո՛հ, այո՛, բարեկամս, պատասխանեց տիկիններ ոտք ելլելով եւ անոր ձեռքը բռնելով, մենք զձեզ խաբած եղանք, այլ ոչ չար դիտմամբ, վրկայ է Սատուած այսմ, եւ երկինք պատժեցին զմեզ: Սմուսինս կորուսի... անշուշտ արիւնահեղ աղէտ մը զայն ձեռուրնուս յափշտակեց. եւ եթէ այս դժբաղդութեան մէջ մխիթարութիւն մը կայ, այն ալ մեր ներկայ աղքատութիւնն է, որ ամուսնոյս կենդանութեան ատեն մեր երկու զաւակաց միջեւ բարձրացած խոչնդոտը կը բառնայ:

— Եւ այժմ կուզեմ հասկնալ թէ կարելի պիտի լինի՞ այն ամուսնութիւնը.

— Անշուշտ, ըսաւ տիկինը հաստատամտօրէն. սուղիս վախճանէն ետքը...

— Ձեր կամքն ալ այդպէ՞ս է, Պարո՛ն Լուի.

Երիտասարդը դարբինին ձեռքը այնպիսի բուռն կերպիւ սեղմեց, որ մօրը խօսքերէն աւելի պերճարան էր:

— Թէ որ այդպէս է, ըսաւ Լրժանտը, զձեզ մեծագոյն փորձի մը պիտի ենթարկեմ:

— Ի՞նչ ըսել կուզէք, բարեկամս . . .

— Թէ դուք մի միայն ամուսին մը կորսնցուցած եղաք, որուն ի բոլոր սրտէ կը փափաքիմ որ Աստուած թողութիւն տայ:

Լրժանտըի փողոցին մէջ ըսած խօսքերը սեւ կեղծ ծամով լրտեսին ընկերոջը միջոցաւ իմաց տրուած լինելով Լիօնի ոստիկանութեան, Պարոն Տեղակալը այն միջոցին հոն հասաւ, որուն հրամանաւ դարբինը ամենուն ներկայութեանը իւր դիտցածը պատմեց, եւ երբ լմնցուց՝ Տեղակալը գլուխը շարժելով, ըսաւ:

— Այդ ամենը աղէկ, բայց որովհետեւ աչքերդ կապուած էին, ի՞նչպէս կը յուսաս այն գետնափոր գանձատունը գտնել վերստին:

— Եթէ Պ. Տեղակալը բարեհաճի, ես միտքս դադափար մը ունիմ, զոր կրնանք այժմէն փորձել:

Տեղակալը հաճեցաւ, եւ Լրժանտըի առաջնորդութեամբ Լուիի եւ ոստիկանաց հետ Պէլքուրի կամուրջը գացին: Հոն դարբինը քանի մը ըսպէ ձեռն ի ճակատ՝ միտքը ամփոփելէ ետքը, մտաւ Արքեպիսկոպոսարանի փողոցը, եւ երբ հասաւ Սէն—Ժանի հրապարակը, — Հոս, ըսաւ, ժամացոյցին զարնելը իմացայ, մանաւանդ որ ձայնը ձախ ականջիս կը հնչէր, ուստի այս փողոցէն ետքը Պրէշ փողոցը ձեռք առած ըլլալու ենք, զի

անկէց կ'երլուի նէօվ ճամբուն երկայնութիւնը .  
 իսկ արդ , այսօրուան պէս վստահ եմ, կրկնեց  
 սոյն տեղային ուղղութեամբն հետեւելէ ետքը ,  
 թէ Եզանց շուկային հոտը առի , բայց դժբաղ-  
 դութիւնն հոս է որ , Բէքուալ անշուշտ յիշողու-  
 թիւնս խանգարելու համար խել մը պտոյտները ը-  
 րաւ . մենք երկու կամ երեք անգամ մինչեւ ի  
 Մէնիմ գացինք , սակայն լաւ կը թուի ինձ թէ  
 հրապարակը վերադարձանք եւ վերջապէս աջ կող-  
 մը ձեռք առինք :

Տեղակալը եւ այլք սոյն տեղեկութեանց հետե-  
 ւելով մինչեւ Հռովմայեցւոց վաղեմի թատրոնը  
 գացին : Լրժանտը մի առ մի մացառները քննեց  
 ետ դարձաւ . քանիցս իւր խուզարկութիւնները  
 վերսկսաւ , միշտ Եզանց շուկան կէտ մեկնման բըռ-  
 նելով, եւ վերջապէս յանկարծ կանգ առած , ու-  
 րախութեան ճիշ մը արձակեց .

— Այս Շամբուկի ծառերուն ծաղկանց հոտը  
 առի , ըսաւ վստահութեամբ , հետեւաբար ճամ-  
 բուն վրայ ենք :

Անւոյ հետքեր , որք զգուշութեան համար աւ-  
 րուած էին , ընդ փոյթ երեւցան եւ խուզարկու  
 խուճբը առաջնորդեցին մինչեւ մայրիներու եւ  
 մացառներու թաւուտը :

Լրժանտը առջեւէն կ'երթար , ոստիկանութեան  
 տեղակալն ալ ետեւէն , որոց կը հետեւէին Լուի  
 եւ ոստիկանք :

Թուփերու մէջէն անցան մինչեւ առաջին կա-



մարը . Կաղնիէ երկու դռները բաց էին , սակայն երկաթեայն իւր անշարժութեամբն ահեղատեսիլ էր . այնպիսի լաւ գոցուած էր , որ տեղակալը յուսահատելով գոչեց . — Պարա՛ւ պ ուղեւորութիւն մը ըրած եղանք — : Բայց երբ լքժանտը գաղտնի կոծակին վրայ կոխելով դուռը կրնակի վրայ բացուեցաւ՝ իրենց աչքերուն ահուելի տեսարան մը պարզեց :

Աստ անդ տեսնուած ոսկւոյ կոյտերու վրայ արեան բիծեր կերեւէին , եւ կէս մը պարպուած ոսկւոյ սնտուկի մը առջեւ քով քովի երկու դիակներ կը հոտէին : Իւր շագանակագոյն զգեստէն եւ անմազ գլխէն կը ճանչցուէր փոխ—հարկահաւաքն , իսկ սապատող գերին ժագէն , հակառակ դիակին փքունքին , իւր տձեւութենէն կորոշուէր : Տեղակալը հարցաքննեց զլքժանտը , որ իմացուց թէ երբ դուռն անգամ մը գոցուէր , այլ եւս ներսէն չէր կրնար բացուիլ . արդ , Բէքուալ ամեն բանի մէջ խիստ խնայողութիւն ընել վարժուած ըլլալուն , մեքենայն կատարելագործելու համար դարբինին պահանջած գինը չէր վճարած , որով իւր անդարմանելի ագահութեան զոհ լինելով կը կորսուէր :

Արտաքին տեղեկութիւնք դարբինին կեանքը ազատեցին . ստուգուեցաւ թէ գիշեր ատեն ագահը իրեն եղած նոյն անծանօթ գետնին տակը շինուած նկուղը կը տեղափոխէր ոսկւով լի սրնտուկները , որպէս զի կարենայ տանը մէջ հան-

դիտար քնանալ : Գտան նաեւ որ, սապատողն, որոյ համար տիկին Բէքուալ ըսաւ թէ ամեն ատեն իւր տէրը կողոպտելու շարժումներ կունենայ եղեր, այդ ուղեւորութեան միոյն ատեն իւր տէրը կողոպտելու կամ թերեւս սպաննելու դիտմամբ նմա հետեւէր եւ դոցեր էր այն դուռը, որ իրենց դիակներուն առջեւ պիտի բացուէր :

••

Այս սոսկալի դէպք, ընդ որս Լիօն տեսաւ Աստուծոյ դատաստանը, մարեց Շարբանի դարբնոյն բովը եւ Լուիզօնի արտասուքները ցամքեցուց. վասն զի Լուի իւր հօրմէն շատ տարբեր բնաւորութեամբ, աւելի կըսիրէր երջանկութիւնը քան զոսկին, եւ հաւատարմութեամբ իւր խօսքը բռնեց : Ուստի Լիօնը թողուցին եւ հաստատուեցան ի Բարիզ, ուր երջանկութեամբ ապրեցան եւ ունեցան միայն աղջիկ մը, որ ամուսնացաւ նախնի արքունեաց Ա. զօրավար Պրօկլի դըբսոյն հետ :

Իսկ Լըթանտը, որ իւր կենաց մնացորդը աղջկան քովիկը անցուց հանգստութեամբ, միշտ փառք կուտար Աստուծոյ եւ սա խօսքերը կը կրկնէր. «ՋՐԿՈՒՈՂՆ ՍՊՐԵՐ Է, ՎՍՅ ՋՐԿՈՂԻՆ» :

(Մտի Լ֊ֆօն)

Վ. Ք.

## 42

## ՔՍԱԿԱՀԱՏ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՄԸ

Անցեալները հարուստ մարդ մը Բարիզու Սէն-Ժագ փողոցի ատամնարոյժերէն մէկուն դիմելով, կըսէ .

— Պա՛րոն , երեք օր է ակուսա կը ցաւի , սաստիկ կը տանջուիմ , ուստի կը խնդրեմ , դեղ մը դնէ՛ք վրան , որ ցաւը դադրեցնէ :

Ատամնարոյժը անմիջապէս թեւերը սոթտելով , մարդուն ցաւած ակուայն լաւ մը զննելէն ետքը կը պատասխանէ .

— Պա՛րոն , այս ակուան փտտած է , ուստի զայն պէտք է հանել , բայց որպէս զի ցաւուն կարենաք դիմանալ , զձեզ *trépan*-ով պիտի թմրեցնեմ :

Յաճախորդը զգացած ցաւէն ազատուելու համար այս գործողութեան կը հաւանի :

Ատամնարոյժը կ'սկսի գործողութեան , եւ մարդուն ակուան քաշելէն ետքը , ամենայն ճարտարութեամբ ձեռքը անոր դրպանը խոթելով , հինգ հատ 1000 ֆրանգնոց պանդնօթ պարունակող թղթապանակը կը դողնայ , ապա , հանած ակուային տեղին ցաւը թմրեցնելու համար վրան դեղ մը կը դնէ եւ զարթուցիչ դեղով մը մարդը կարթնցնէ , ըսելով թէ , « Այլ ազատեցաք , ուրիշ դեղ գործածելու պէտք չի մնաց » :

Յաճախորդը ըստ սովորութեան ատամնարոյժին վարձքը տալու համար ձեռքը դրպանը տա-

ներով երբ կը տեսնէ թէ թղթապանակը չի կայ, ափ ի բերան կը մնայ, կը շուարի եւ առանց բան մը ըսել կարենալու, խանութէն դուրս կելնէ, ամօթահար:

Քանի մը օրէն ետքը նոյն անձին բարեկամներէն մին այս դողուժեան դէպքը լսելով, կը հասկնայ թէ ատամնարոյժին կողմանէ ի գործ դրուած էր, ուռտի իւր ալ ցաւած ակռան հանել տալու համար վերոյիշեալ քսակատ-ատամնարուժին կը դիմէ:

Մեր վարպետը ըստ իւր բարի սովորութեան, ուրախութենէն ձեռքերը շփելով, նորա ակռան եւս ուշադրութեամբ գննելէ ետքը, իւր աւուր պատշաճի նագարաթը կը կրկնէ, թէ «Ակռան շատ փտտած լինելով, պէտք է զայն հանել, բայց որպէ՞ս զի պարոնը ցաւուն կարենայ գիմանալ, *բարձրօ՞ճով պիտի թմրեցնէ զինքը:*»

Յաճախորդը ատամնարոյժին այս առաջարկին չի հակառակիր, բայց նորա գործողութիւնն ըսկսելու վայրկենին, գրպանէն քսակը հանելով, պարունակութիւնը կ'սկսի համրել:

Ատամնարոյժը կարծելով որ յաճախորդը իւր վարձքը կանխիկ վճարել կը պատրաստուի. «Ի՞նչ կրնէք, պարոն, կըսէ շնորհալի ձեւով մը, հաշիւը վերջէն ալ կրնանք տեսնել... Ի՞նչ հարկ կայ անապարելու...»

Առ այս յաճախորդը անտարբերութեամբ կը պատասխանէ. — Ներեցէ՛ք, տէր ատամնարոյժ,

ստակը կանխիկ տալու համար չէ որ կը համրեմ, այլ զիս թմրեցնելէդ առաջ քսակիս մէջ ո՞րչափ ստակ գտնուիլը հասկնալ կուզեմ :

Այս յայտարարութեան վրայ քսակահատին թեւին օժուղ պաշէն ցաւը բռնելուն, այն օրէն ի վեր, ձեռքը մինչեւ յաճախորդաց գրպանները երկննալու չափ ոյժ եւ կարողութիւն չունի՛ եղեր :

— 0 —

### 43

#### ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

Աշխարհագրութեան դասատուն . — Պարոն Արմենակ, այս երկրորդ անգամն է կը հարցնեմ քեզի թէ, Հիւսիսային բեւեռի ցուրտին աստիճանը ո՞րչափ է .

Աշակերտը . — Միւսի՛ւ, այն սարսափելի ցուրտին աստիճանը երբ միտքս կը բերեմ, տալիք պատասխանս մինչեւ լեզուիս ծայրը կուգայ, բայց հոն կը սառի կը մնայ կոր . . . ասկէ կրնաք հասկրնալ ինչ աստիճան ըլլալը :

— 0 —

### 44

Կառավարիչ մը կայտառ աշակերտի մը ըսաւ .

— Մարդս կենդանիներուն վրայ անգամ գուր

եւ կարեկցութիւն ունենալու է . զոր օրինակ , եթէ հայրդ թռչուն մը ծախու առնէ եւ ապա զայն ազատ թողու , ի՞նչ ըրած կըլլայ .

Աշակերտը . — Ի՞նչ ըրած պիտի ըլլայ , ամենամեծ տխմարութիւն մը դործած կըլլայ :

— 0 —

## 45

### ԳԵՂՋՈՒԿ ՄԸ

Մի քանի ծանծաղամիտներ գեղջուկի մը հետ խնայով , կառաջարկեն որ դաշտին մէջ եղները ու կովերը կանչելու համար սուլածին պէս իրենց առջին ալ անանկ ձայն մը հանէ , որպէս զի զուարճանան : Խեղճ գիւղացին ամչնալով , կամացուկ մը կը սուլէ , բայց պարոնները դո՛հ չեն ըլլար :

— Չէ՛ , ատանկ չըլլար , պէտք է սր ամուր սուլես , որպէս զի . . .

— Բայց պարոններ , կը պատասխանէ գեղջուկը , երբոր անասունները մօտիկ ըլլան , մենք այսպէս կամաց կը սուլենք :

— 0 —

## 46

### ՍԱՊԱՏՈՂ ՄԸ

Քանի մը իմաստակներ սապատող մը շրջապատած , զայն կը ծաղրէին եւ իրարու կըսէին .

—Տեսէ՛ք, իրաւցնէ Եզովբոսին շի՞ նմանիր . —

Առ այս սապատողը պատասխանեց .

—Այո, իրաւցնէ Եզովբոսին կը նմանիմ, ըստ որում ես ալ Եզովբոսին պէս կենդանի անբաններ գլուխս ժողուած՝ կը խօսեցնեմ:

Այս պատասխանէն իմաստակ.ք՞ գոհ եղած, անմիջապէս կը հեռանան:

— 0 —

47

### ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Գաղիոյ թագաւորներէն կարողոս Ե. օր մը իւր առաջին թիկնապահին շինել տուած բնակարանը աչքէ անցուցած պահուն դարմանօք կը հարցնէ թէ, — Ինչո՞ւ համար բնակարանը մեծ բայց խոհանոցը շատ պզտիկ շինել տուէր է .

Թիկնապահը . — Վասն դի, Տէր արքայ, եթէ խոհանոցը մեծ լինէր, այս բնակարանն ալ այսչափ մեծ չէր կրնար շինուիլ:

• •

(Թիկնապահին այս պատասխանը, որ շուայնեքուն ուշադրութեանը արժանի է, կը յիշեցնէ մեզ տաճկական սա սքանչելի առածը. «Իշտէն արթմազ, տիշտէն արթար» .)

— 0 —

## 48

## ՆԱՄԱԿԱՏԱՐ ՈՍԿՈՐԸ

Ճիօրէնցայի գիշերօթիկ ազնկանց վարժարաններէն միոյն մէջ 14 տարեկան աշակերտուհի մը, վարժարանին մէջ եփուած մսեղէն կերակուրներուն սնամէջ ոսկորները ժողուելով կը պահէր եւ մերթ ընդ մերթ առ իւր սիրահարն գրած նամակը պլորելով, նոյն ոսկորներէն միոյն մէջ տեղաւորելէ ետքը, զայն ցերեկը վաքանսի ժամանակ անպատճառ վարժարանի փողոցէն անցնող իւր միւսիւին կը նետէր. սիրահար պարօնն ալ իւր պատասխանները որոշեալ տեղ մը ծառի մը տակ կը դնէր, որով երկուքն ալ այս անկուտի թղթատարներուն միջոցաւ շաբաթը մէկ երկու նամակ կը փոխանակէին. Բայց վերջապէս «Զիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեացի.» վերջերս օր մը, օրիորդը ըստ իւր սովորութեան նամակը ոսկորին մէջ տեղաւորելով փողոց նետածին պէս, շուն մը զայն կը յափշտակէ ու կը փախչի. սիրահար պարօնը կրակ կտրած՝ կ'սկսի շունը հալածել բայց դժբաղդարար անցորդը շատ եղող փողոցի մը մէջ ոտքը սահելով, կկոխայ. Մէկ քանի անցորդներ «Թերեւս շունը կարելոր բան մը յափշտակելէ», ըսելով, ձեռքերնին ունեցած դաւազաններով կ'սպառնան, բայց երբ շանը բերնէն ոսկոր մը կոխալը կը տեսնեն, կ'սկսին բարձրաձայն ծիծաղիլ. Իրենցմէ հետաքրքիր մը ոսկորը զննելով,



մէջէն հետեւեալ նամակը դուրս կը քաշէ . իսկ սիրահարը օձիքը ձեռք տուած ըլլալուն վստահ եղած՝ կծիկը կը դնէ :

Ահաւասիկ նամակին պարունակութիւնը .

Ի սրտէ սիրեցեալդ իմ .

«Ճարաթէ մ'ի վեր նամակ չի տալուս պատճառը սնամէջ ոսկոր չի դտնուիլն էր , թէեւ ամեն ցերեկ դպրոցին առջեւէն անցնիլդ կը տեսնէի , բայց ի՛նչ օգուտ , նամակս ներկայ՝ այլ սնամէջ ոսկորը բացակայ էր . ալ ճարահատեալ սուտ հիւանդ եղայ եւ խաշած միս ուղեցի , որուն սընամէջ ոսկորին միջոցաւը այս նամակս ալ կը խըրկեմ : Վաղն իրիկուն , եթէ օդը ներէ , աշակերտուհիքս խմբովին Սնիէռի պարտէզը պիտի երթանք զրօսներու . ուրեմն թէ նամակիս պատասխանը եւ թէ ինձ նուիրելիք մանիշակագոյն կանթերս ոչ թէ աքացիայի՝ այլ կաղամասի ծառին տակի քարին ներքեւը դնելու ես :

Կ'սպասեմ քեզի ,  
Մի' մոռնար ինձի .

\*\*\*

Սակայն ամիսս՝ ուր պարոնը սոյն նամակին պարունակութենէն անգէտ լինելուն , չէ կրցեր անոր պատասխանը եւ ձեռնոցները ծառին տակը տեղաւորել :

Քանի մը օրէն ետքը վերողբեալ նամակը վարժարանի տնօրէնին ձեռքը կը հասնի, որ ի վարձատրութիւն նամակագիր օրիորդին, կը հրամայէ աշակերտուհեաց ընդհանուրին ներկայութեանը բարձրաձայն կարդալ իւր սոյն գրած նամակը :

Կրսե՛ն թէ, օրիորդը իւր նամակը կարդալէն ի վեր սնամէջ ոսկորներ փնտռելներուն վերջ է տուէր :

— 0 —

## 49

### ՏԱՆ ՄԸ ՄԷՉ

Ա. յը եւ կին.

Կինը . — Ինձի նայէ Տիրատուր աղա, հիմա կերթա՞ս կոր .

Ա. յը . — Հա, կերթամ կոր . նորէն ի՞նչ կայ . բա՞ն մը պէտք է .

— Անանկ է եա՛, սա չի կայ նա չի կայ, հէլէ քէօմիւր՝ տիրէ՛մ չի կայ . . .

— Քա կնի՛կ, առտու մըն ալ բան մը չեմ ուզեր բռնս նէ չըլլար .

— Ի՛նչ պօշ լախուտըներ կընես, ճա՛նրմ՝ Տիրատուր աղա, ուզածներս քի չես բերեր կոր, հապա չուզեմ նէ հալըս ո՞ւր կերթայ . . .

— 0 —

## 50

## ՏՐԱՄԱԲԱՆ ԱՂՔԱՏ ՄԸ

Աղքատ մը իւր արհեստակիցներէն մէկուն կը գանգատէր թէ, — Կիրակոս ախպար, իշթէ ճըմեռը եկաւ, ի՞նչ պիտի ընեմ չիցտեմ, սա պատուած բանթալոնէս ու կտոր կտոր եղած բալթօէս զառ: վրաս բան մը չունիմ:

Ընկերը. — Պէտք է այդ վիճակէդ ալ գոհ ըլլաս, Մարկոս ախպար, վասն զի ծնած ատեննիս հարուստն ալ էսնաֆն ալ, դուն ալ ես ալ հիմակուան ունեցած վիճակնէս աւելի աղքատ էինք:

— Աւելի՛ աղքատ էինք մի՛... .

— Անանկ է եա՛, որովհետեւ մերկ ծնանք:

— օ —

## 51

## ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՁ

Թուարանու թեան դասատուն.

— Արմենա՛կ, դասերուդ մէջ միշտ ետ կը մնաս կոր. տունը եղբայր մը չունի՞ս.

— Ունիմ:

— Ուրեմն աղաչէ անոր որ իրիկունները դասդ սովորեցնէ:

— Ան չի սորվեցներ, մի՛ւսիւ.

— Ինչո՞ւ.

— Որովհետեւ տահա ութն ամսու է:

— օ —

## 52

Ուսուցիչ մը կը հրամայէ իւր աշակերտաց թէ իւրաքանչիւրը «Ծուլութեան» վրայ մէյ մէկ բան գրեն: Աշակերտներէն մին ծուլութիւնը գործնականապէս հասկցնելու համար՝ ամենեւին չի գրուած պարապ տետրակ մը կը ներկայացնէ ուսուցչին ըսելով. — Միւսիւ, ահա ծուլութեան ինչ ըսել ըլլալը:

— 0 —

## 53

## ԱՆՄԻՏ ՄԸ

Գինետան մը մէջ երկու գինեմուլք կուլի բըռնուեր են. մարդ մը ասոնք հանդարտեցնելու համար կը միջամտէ, բայց կուտողներէն մէկուն գէպ ի հակառակորդն նետել ուզած ջուրին գաւաթը ճամբէն խոտորելով, միջամտողին գլխուն կուգայ եւ զայն կը վիրաւորէ: Հոն գտնուող Բաքոսի խնկարկուք վիրաւորեալը կը շրջապատեն եւ կըսկսին վերքը զննել, ըսելով թէ՛ — Աճապա պէյնինէ պիր զարար օլտո՞ւ մու.

— Բի՞մ պիլիր, ախպար, պէօյլէ շէյլէրէ եիւրէիմ տայանմազ քի պագայլմ:

— Պէնիմ տէ եիւրէյիմ տաեանմազ ամա՛ տուրըն պիր տէֆա քէնտիսինէ սօրայլմ. էյ, Մաթէ աղա, կէչմիչ օղա, աճապա պէյնինէ պիր զարար օլտո՞ւ.

— Գարտա՛շ, պէյնիմ եօզ ըտը քի, օնա զարարը  
տօզ անսըն, կը պատասխանէ վիրաւորեալը, իւր  
անմտութեանէն յուշաբերելով, էկէր պէյնիմ օլմուշ  
օլսայըտը, իքի սէրհօշուն արասընա կիրէ՞ր մի  
խտիմ . . :

— 0 —

54

### ՏՆՏԵՍԱԳԷՏ ԽԱԹՈՒՆ ՄԸ

Սմենայն վստահութեամբ կըսենք թէ, մեր  
մէջ կը գտնուին այնպիսի խաթուններ, որք թէ-  
եւ իրենց ժամանակին վարժարան չեն գացած,  
բայց արդի ուսումնաւարտի ճոխ վկայականներով  
բեռնաւորեալ կարգ մը տիկիներէ շատ աւելի  
տնտեսագէտ են, եւ որոց միայն կը վայլէ ՏՄՆ-  
ՏԻԿԻՆ պատուանունը տալ :

Ի հաստատութիւն մեր այս ըսածին, հետեւ-  
եալ խօսակցութիւնը հրատարակելով կը բաւա-  
կանանանք .

— Ինձի նայէ, Աշոտ, ըսաւ Երկուշաբթի առա-  
ւօտ խաթուն մը իւր թոռանը, ՚որ շուկայ եր-  
թալու համար մեկնիլ կը պատրաստուէր . չորս—  
հինգ դրշ . ձգէ քի՛ քանի մը կտոր պախըռները  
խալայի պիտի տամ :

— Մամի՛կ, կէնէ՞ մի խալայ, աս ամիսը հեզ մը  
խալայի բարա տալուն վերջը չպիտի՞ դայ .

— Ի՞նչ ընենք երազում, ֆայտա ունի՞. ժանդոտ ամանին մէջը կերակուր չեփուիր եա՛ :

— Քեզի բան մը ըսե՞մ, սա պախըռնեցուն վուճուտը տունին մէջէն պիտի վերցնեմ :

— Զահէր հողէ պուտուկի մէջ պիտի եփենք, ան ալ չաթ չութ կը կորեի, աստաւը եիւզինտէն բահալը օլուր :

— Զէ՛, հողէ ամանի մէջ չպիտի եփենք. հիմա նոր մօտա, տէմիրէ ու մէջը դուրսը շինի մինէլի մութվախի թախըմներ ելեր է, հէմ աժան հէմ էօլմէղ օղուլ բաներ, խալայի ալ պէտք չունին. թամահքեարէնց Անտիրեասը աուեր է, տունէն բէք խօշնիթ են եղեր, ես ալ անանկ պիտի ընեմ :

— Վույ սախըն հա՛, Տըլլայենք ալ նոր աուած հարսերնուն խօսքին նայելով աուեր են ամա, մարմարա շիրասիի պէս երեր են :

— Հարսերնին ինչէ՞ն գիտէ կոր .

— Զիւնքի եէնի-եէթմէներէն է եա՛, նիքօնօմիաճի է եղեր, դաղէթային մէջը կարդացեր էրկանը աունել տուեր է. իրաւ, տէմիր, մէջը դուրսը շինի մինէլի է եղեր ամա, էյ մարդ ես, խաղայով ծառքէդ ձգելուդ պէս չըթ տէյի մինէն կը կորեի՝ տէմիրը մէյտան կելլայ, արթըխ խալայն ալ ֆայտա չըներ. արինայի աման կըլլայ. ամա պախըռը իյնայ ծուի պիլէ նէ՛ խալայճին պէտէհավա մը կը շտկէ հէմ խալայն ալ չի թափիր :

— Էյ սա խալային համար վերա բարա կը արուի՞ մի եա՛ .

— Պայտա ունի՞ եավրում, պախըռը կէնէ պախըռ է, փարա կընէ . արատա պիր խալայի տանքնէ կերակուրները համով կ'եփէ . ատ ըսած տէմիրէ թէնճիրէիդ սըռը թափելէն ետքը ինչի՞ փայտա կընէ, լէպլէպլիճին պիլէ չառներ կոր եղեր . հէմ, ուճուղ էթին չորպասը տատարդ օլուր, կըսեն :

— Ատ իրաւ ես, մամիկ :

— Հա եա եավրում, հէմ խոստովանք մնայ, բէք օր նեղի կաս նէ, պախըռը կընաս ծախել : Հիմակու թախըմ մը եէնի եէթմէները մեղի չեն հաւնիր, նիքօնօմեա կիտենք կըսեն ամա, սա ամեն նոր տեսած ինթիրիլփաէն բաները առնել տալերնուն համար չէ՞ քի էրիկներնուն էրկու եախան մէկ չի դար կոր :

— Խելքս սլաուկեցաւ, մամիկ, ըսաւ Պ . Աշոտ, նորա լայատրութենէն դոհ մնալով . եւ հինգնոց մը յանձնելէն ետքը մեկնեցաւ :

— օ —

## 55

### ՏԱՆ ՄԸ ՄԷՉ

Ա.յր եւ կին .

Ա.յրը . — Աւրիշներուն զաւակացը վրայ նայելով կըմայլեմ, չգիտեմ թէ ինչո՞ւ մեր զաւակները այսչափ անկիրթ կը մեծնան . արդեօք քեզմէ՞ թէ

ինչով է կը սովորին . . . թող թէ ինչով է չի սորվել  
նուն քաջ համոզուած եմ :

Կինը . — Այդ համոզումնիդ սրբագրեցէք , սի-  
րելի ամուսինս , ըստ որում ձեզով է կը սովորին , եւ  
ասոր ապացոյցն ալ սա է որ , մինչեւ ցարդ ձեր  
անկրթութիւններէն եւ ոչ մէկին պակսիլը տե-  
սանք :

— 0 —

## 56

### ՀԻՒՄՆՈՒՀԻ ՄԸ

Վաճառականի մը շինել տալու վրայ եղած մը-  
թերանոցին մէջ աշխատող հիւաներէն մին հաւա-  
սարակչութիւնը կորսնցնելով տանիսէն վար կեյ-  
նայ եւ կը մեռնի : Վաճառականը այս ցաւալի  
դէպքէն խիստ զգածեալ , նորա ընտանեացը հա-  
րիւր դահեկան ամսական կը կապէ : Առաջին ամ-  
սականը տանող գրադէիրը հիւանուհւոյն չափէ  
աւելի ուրախանալը տեսնելով կը զարմանայ եւ  
պատճառը կը հարցնէ :

Հիւանուհին կը պատասխանէ .

— Ի՞նչպէս ուրախ չըլլամ եւ չի խայտամ , պա-  
րոն , տեսնելով որ հանգուցելոյն հետ ամուսնա-  
ցած օրէս ի վեր այս առաջին անգամն է որ տու-  
նէս ներս հարիւր զրուշ կը մտնէ ,

— 0 —



## 57

## ՍՊԱՍՈՒՀԻ ՄԸ

Ագահ մարդ մը իմանալով որ ութը տարիներ իւր տան մէջ ամենայն հաւատարմութեամբ ծառայող սպասուհին պիտի ամուսնանայ, անոր իբր օժիտ պօլ քէսէէն 200 դահեկան կը նուիրէ, եւ քանի մը շաբաթ անցնելէն ետքը տուած պախշիշը յիշելով, սպասուհւոյն ամուսինը տեսնել կը փափաքի. երբ սպասուհին իւր այրը կը ներկայէ ագահին, սա յանդիմանական ձայնիւ կըսէ.

— Աղջիկ, աս ի՞նչ տգեղ մարդ է որ ընտրեր ես, առաջուց չի տեսա՞ր.

Սպասուհին. — Տեսայ, աղաս, բայց ի՞նչ ընեմ, քու ինծի պարգեւած 200 դրուշովդ ասկէ աղէկը չկրցայ առնել:

— 0 —

## 58

Մարդ մը կը հարցնէ բժշկի մը թէ,

— Տօ՛քթօր, թունաւոր սունկ մը ի՞նչպէս կը ճանչցուի.

Բժիշկը. — Շա՛տ դիւրութեամբ. պէտք է զայն կերցնել զոքանչին եւ յետոյ սպասել արդիւնքին:

— 0 —

## 59

## ԳԻՆԵՄՈՒ ՄԸ ԵՒ ԻՒՐ ԿԻՆԸ

Կինը . — Քա մա՛րդ , աս ի՞նչ է քու բռնած  
ճամբադ , երէկ իրիկուն նորէն մէխանայէն դուրս  
ելլալդ տեսեր են :

Ս.յըը . — Ի՞նչ պօշ լախուտըներ կընես , կնիկ ,  
չելլալս տեսնելնի՞ն կուզես :

— Քա հապա անցած իրիկուն թէօպէ ըրիր քի  
մէյ մնալ չպիտի խմեմ տէյի .

— Էյ ի՞նչ ընեմ , օրուան քսանը չորս սահաթին  
մէջ թօփը երկու սահաթ թէօպէս կաւրեմ կոր ,  
տահա լախըուտը՞ կընես :

— 0 —

## 60

## ԵՐԿՈՒ ԴՐԱՑՈՒՀԻՔ

Քա Յուդիտայ տուտու , բան մը խմացանք , էյ  
դուռ դրացին բէք շատ խնդացինք . տալըդ ալ  
ջիկը նշանե՞ր էք եղեր :

— Պէլի , տառօսը չիֆթէներուդ . փեռացունիս  
քիչ մը էվելօք տարիքօտ ալ էր նէ , աշվընիս դոցե-  
ցինք գործը լմնցուցինք :

— Բէք աղէկ էք ըրեր , պաղի պաղի անանկ  
պիչիմսիդ բաներուն աչք դոցելու է :

— 0 —

## 61

## ԿԷՍ ԼՐԱԳԻՐԸ

Իրիկուն մը, Ոսկեղջիւրի վերջին շողենաւուն մէջ միջահասակ եւ ակնոցաւոր մարդ մը, ձեռքը ունեցած կէս օրաթերթը, առաստաղէն կախուած՝ բայց մարելու մօտ եղող լապտերին լուսովը կարդալ կ'աշխատէր. կրնայ ըսուիլ թէ տասը տող բան չէր կարդացած, երբ լապտերին ճրագը իւր վերջին շունչը արձակեց, եւ մարդն ալ լրագիրը ծալլեց գրպանը դրաւ: Նոյն միջոցին բարեկամ մը իրեն մօտենալով հարցուց.

— Բարի իրիկուն, կարդացած լրագիրդ այսօրուա՞նն է.

— Այո:

— Էյ ատոր կէսը ո՞ւր է, այսինքն երրորդ եւ չորրորդ երեսները ի՞նչ ըրիր.

— Յաճախորդիս մէկուն ծախած ապրանքս ա՛նոր մէջը փաթտեցի:

— Տէր ողորմեա . . . մեղքը չէ՞.

— Ինձի ալ մեղք է, եղբայր:

— Քեզի ալ մեղք է մի՛ . . . բայց ի՞նչ պատահեցաւ որ . . .

— Որովհետեւ, ինչպէս յայտնի է, Գ. եւ Գ. երեսները ազդարարութեանց յատկացեալ են, եթէ լրագիրը իւր ամբողջութեամբը տուն տանիմ, մեծ ու պզտիկ լուրերը մեկ կողմ կը ձգեն, մինակ

ազդերը կը կարգան եւ կ'սկսին միաբերան  
ԿՈՒԶԵՄ բայը խոնարհել . զոր օրինակ , Աղջիկս ,  
«Հա'յրիկ , սա մարմինը միշտ թարմ պահող թէն-  
կըլ—Վուտի փօշիէն եւ Օբալինի Օ տը դօլօնէն ես  
ալ կուզեմ» կըսէ . Մայրն ալ , «Կուան Ռապէի մա-  
ղազաէն Քիստանցու մըն ալ ես կուզեմ» կը պա-  
տասխանէ . անդիէն տղաս ալ , «Ծնունդին ան-  
պատճառ Գարլըմանի ազդարարութեան պատկե-  
րին պէս կըճըռը վրան խաթ մը լաթ կուզեմ» կը  
գոչէ . անդամալոյծ մամիկնին ալ , «Քա օրթտի ,  
սա սինիրներուս խուվէթ մը ըլլալու համար Սօ-  
գօթօգօսի շալակովը տանող մարդուն պալըխին  
եաղէն ուզեցի , մարդուն կրնակի պալըխը պէլքի  
հոտեցաւ՝ տահա իմ եաղս չեկաւ .» ըսելով գլու-  
խըս կը տանին կոր . ուստի ասոնց առաջքը առ-  
նելու համար կէս լրագիրը տուն կը տանիմ :

— Է՛յ , գոնէ օգուտ մը տեսա՞ր .

— Հապա՞ , երկու ամիս է շատ հանգիտ եմ .  
ԿՈՒԶԵՄ բայը անցան , ՀԱՄԲԵՐԵՄ բայը կը սեր-  
տեն կոր :

— օ —

62

### ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեք զաւակաց հայր գրաչարի մը տանը մէջ ,  
իրիկուն մը հետեւեալ խօսակցութիւնը անցեր է .

— Հա'յրիկ , վաղը ինձի այնինչեան թուարա-

նու թիւն մը պիտի առնես . գինը 5 դրշ . է եղեր :

— Ինչո՞ւ , վաքանցայէն առաջ հասա մը առինք  
նէ , անիկայ լմնցուցի՞ր , չէ նէ մի պատուտեցիր .

— Ո՛չ , հայրիկ , չի լմնցուցի , նորզնոր դրած է :

— Ուրեմն ինչո՞ւ չես կարդար .

— Քու առած ատենդ մեր կարգէն չորս տղայ  
ալ առեր էր , մեկալները չունէին . հիմա դասա-  
տունիս ըսաւ քի , ամենքդ ալ այս թուարանու-  
թեան երկրորդ տպագրութենէն պիտի առնէք  
սր դասերնուդ սկսիմ :

— Թամա՛մ . . . Իուն վաղը վարժապետիդ բա-  
րեւ ըրէ ըսէ որ , քու ունեցած առաջին տպագ-  
րութենէդ դասդ տայ :

Այս հրամանին վրայ տղան կը տրտմի , եւ որ-  
պէս օրէն է , մայրը կը միջամտէ .

— Քա ճանրմ , ինչո՞ւ չօճուխը պօշ պօշընա ին-  
թիստակ կընես սիրտը կը կոտրես . գիրք կուզէ  
կոր տէյի չի խնդա՞ս , ուրախ սրտով վաղը երի-  
կուն առ տէ բե՛ր .

— Վէսէլամ , վճիռդ սիրեմ . . . ասանկ բանե-  
րուն քու խելքդ չի հասնիր , դուն նայէ որ կե-  
րակուրդ ջուրը չի քաշէ :

— Մեղայ , 5 դրու չի համար չօճուխին սիրտը կը  
կոտրես կոր :

— Գործը 5նոցին վրայ չէ , կը հասկնա՞ս . եր-  
կու ամիս առաջ՝ ուղուած թուարանութենէն ա-  
ռինք , հիմա անիկայ տահա չի կարդայած պա-  
թալ ըրեր , երկրորդ տպագրութենէն կուզեն կոր :

— Պէլքի աւջինին մէջ պակաս բան մը կար . . .

— Պակաս կար նէ, ինչո՞ւ առնել տունն . հէմ հիմա ամենը սովբեցաւ տէ մինակ ադ պակասը մնաց :

— Մայրիկ, իմ գրքիս մէջ հինգ հինգ ալ տասը կընէ գրուած էր, նորին մէջ անանկ բան չի կայ, երեք եօթն ալ տասը կընէ ըսեր է :

— Տեսա՞ր մի, արեւուն մեռնիմ, չօճուխս պիլէ ֆարխին կերթայ կոր . հէլպէթտէ բան մը կայ քի առէք տէյի ապսպրեր են :

— Ամէն : Ծօ Արմենակ, վաղն իրիկուն այդ Բ . տպագրութենէն առնող դասնկերներէդ մէկուն գիրքը առ ինծի բեր որ նայիմ :

— Հայրիկ, մեր քովի տունին Գառնիկը առեր է, կուզես նէ հիմա երթամ բերեմ :

— Հայտէ գնա ա՛ռ բեր :

Տղան կերթայ դրացւոյն տունէն գիրքը կը բերէ :

Հայրը առաջին ապագրութիւնը երկրորդին հետ լաւ մը բաղդատելէ ետքը, հետեւեալ նամակը կը գրէ առ ուսուցիչն :

«Մեծապատիւ դասատու էֆէնտի

Թուարանութեան

«Նկատելով որ այնինչեան Թուարանութեան երկրորդ տպագրութիւնը առաջին տպագրութենէն միայն երկու հրահանգ աւելի կը սյարունակէ, հանդերձ գօֆտիղմասիօնական յառաջաբա-

նով մը, ուր ըսուած է թէ «Խիստ կարճ միջոցի մէջ Ա. տպագրութիւնը սպառեցաւ.» (°.)

«Նկատելով որ Ա. տպագրութիւնը չի ծախուելէն, նորա հարիւրաւոր օրինակները սնտուկներու մէջ չի մգլտեցնելու եւ կամ նպարավաճառին չի ծախելու համար անոր մինակ մէկ երկու ֆերձին կրկին տպագրութիւնը հարկ տեսնուած է, որոյ նախագուռին վրայ Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ քառերը տասն-երկու Բ. խոշորութեամբ կը փայլին, իսկ մնացեալ ֆերձները — մելանէն — Առաջին տպագրութիւն կը հոտին ,

«Նկատելով որ այս վարպետութիւնը արհեստէն քիչ շատ տեղեակ եղող գրաշար մը միայն կրնայ հասկնալ, որպէս զանարժանս ,

«Նկատելով որ գր.քին հեղինակին խիստ մը տերիմ բարեկամը կամ Բարձրակամը ըլլալու է այն դասատուն , որ երկու հրահանգի պակասութեան համար գիրքը փոխել կը հրամայէ ,

«Եւ վերջապէս նկատելով որ ստորագրեալս այս անգամ չի պիտի կարենամ համակերպիլ ձեր այդ (մջմոմ) հրամանին ,

«Կառաջարկեմ որ , տղուս դասը երկու ամիս առաջ ձեր հրամանաւր առնուած դասագրքէն աւանդուի , իսկ եթէ անպատճառ Բ. տպագրութեանէն կը պահանջէք , հաճեցէք Առաջին տպա-

գրեալը որդւոյս ձեռքէն առնելով հեղինակին դըր-  
կել, իմացնելով իրեն որ պակաս շինած գիրքը զա-  
ւակաց հայրերուն ստակովը սրբագրելու ելելը,  
մե՛ծ անիրաւութիւն է:

Զոր ինչ գրեցի, գրեցի:

Քիւլ եուտմազ է հայրն Արմենակի:

Սոյն նամակը Արմենակ հետեւեալ օրը իւր դա-  
սատուին կը յանձնէ, որ քանի մը անգամ ուշի  
ուշով կարդալէն ետքը, կը գոչէ:

— Պարո՛ն Արմենակ, դուն քու սենեցած դա-  
տագրքէդ սերտէ, եւ երբ կարգը պակաս հրա-  
հանդներուն դայ, դասնկերիդ գրքէ՛ն օրինակէ:

— 0 —

## 63

### ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷԶ

Ուսուցիչ մը իւր աշակերտացը տալիք կընճ-  
ռոտ մէկ դասը երկար բարակ բացատրելէն ետքը,  
(մինչդեռ անոնք ալ ձանձրացած սկսեր էին մը-  
րափել) — Պարո՛ններ, ըսաւ, հիմա այս խնդրոյն  
վրայ խելքերնիդ պառկեցաւ, այնպէս չէ՞:

— Միւսիւ, իմ խելքս, պառկելէն զատ քնա-  
նալ իսկ սկսած է, պատասխանեց փոքրիկ՝ այլ  
ուշիմ աշակերտ մը: Հ. Լ.

— 0 —



## 64

Գննութեան օր մը քննիչ դասատուն ուշիմ եւ ճարպիկ աշակերտ մը շուարեցնելու մտօք կը հարցընէ .

— Ամեն կենդանի կրնայ յատակը իր պոչովը ծածկել, եւ սակայն այժը ինչո՞ւ չկրնար .

Առ այս աշակերտը պզտիկ չի մնալու համար կը պատասխանէ .

— Որովհետեւ, երբ Ադամ օր մը կը քնանար, այժը գնաց անոր զգեստի տեղ ծառայող տերեւները կերաւ, նոյն միջոցին Ադամ արթնցած իւր մերկութիւնը տեսնելով, այժն անիծեց, թէ — Ինչպէս որ դիս մերկացուցիր, դու ալ մինչեւ վերջը մերկ մնացի՛ր :

— 0 —

## 65

## ՄՈՒՏ ՄԵՌԵԱԼԸ

Չորս զաւակաց հայր խեղճ Գաղիացի մը, Սիմոն անուն, տեսնելով որ սպառելու վրայ է ձեռքն ունեցած դրամագլուխը, զայն նորոգելու համար հետեւեալ խորամանկութիւնը ի գործ կը դնէ .

Կիւրակէ օր մը իւր կնոջ եւ զաւկներուն սուղի հանդերձներ հաղցնելէն ետքը, ինքն ալ դադաղի մը մէջ մտած՝ վրան դոցել կուտայ եւ իբր մեռեալ՝ Սէն — Բօլ եկեղեցւոյն բակը կը տարուի :

Անցորդք խեղճ կնկան եւ տղայոց արձակած ողբերէն ի գուժ շարժեալ, կ'սկսին առատ առատ ողորմութիւն տալ եւ մխիթարելու համար կը շրջապատեն զանոնք, որոց սոխ քսուած աչքերէն անդադար ջուր կը վազէր:

Անցորդներէ մին, դադաղին քովիկը նստած սուտ մեռեալին կնոջը մօտենալով կըսէ.

— Սիրելիս, անհոգ եղիր, մխիթարուէ՛, ամուսինդ թաղելնէս վերջը ես զքեզ երջանիկ պիտի ընեմ, կարծեմ 50,000 ֆրանգի եկամուտ մը կը բաւէ մեր երկուքին:

Սուտ մեռեալը, որ այս խօսքերն լսած էր, իբր թէ բարկացած՝ դադաղին ծածկոյթը մէկդի կը նետէ, գոչելով.

— Ա՛խ, պա՛րոն, ողջ ըլլալու էի որ, այդ խօսքերուդ ծանրութիւնը քեզի հասկցնէի:

Հոն խռնուած բաղմութիւնը, Սիմոնին խորամանկութեանը վերահասու եղած, կսկսի ծափահարել եւ աւելի կը վարձատրէ զայն:

Հարկ է ըսել թէ 50,000նոց պարոնը, որ իւր խեղճ ընկերներէն մին էր, եւ որ վարձքով ձեռք մը նոր հագուստ հագած էր, բաղմութիւնը խրոնուած ատեն այնպէս խօսելու հրամանը առաջուց առած էր սուտ մեռեալէն:

Քանի մը օր վերջը, Բելի Ժուրնալի մէջ հետեւեալ ազդը կը կարդացուէր.

«Մայիս 16 կիւրակէ օրը, Սէն—Բօլ եկեղեցւոյն բակը ունեցած ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆՍ զուտ հասոյթը եղած է 357 ֆրանք:» Սէն

## 66

## ԳԱԻԱԹ ՄԸ ՕՂԻՆ 10 ՓԱՐԱ

Աշնան երեկոյ մ'էր : Թիֆլիզի Կօլօշ Ինստի Պուս-  
տե+ր կոչուած քաղաքային ծառուղին հինգ վայր-  
կենի մէջ պարպուեցաւ , վասն զի յանկարծ եր-  
կին քը սեւ ամպերով ծածկուեր եւ սաստիկ անձ-  
րեւի մը առաջնորդներն համարուող մի քանի խո-  
շոր կաթիլներ սկսած էին ի յնալ :

Այս միջոցին , քսան տարեկան , երկայնահա-  
սակ , կոկիկ հագուած , կլոր ու սև մօրուքով , ոլո-  
րուն պեխերով , ի մի բան՝ ա՛լա Բառիզիէն շէ+ ե-  
րիտասարդ մը քայլերը կը կրկնապատկէր , աչքե-  
րըն ուղղելով իրմէ 50-60 քայլ հեռաւորութեամբ  
յառաջացող դեռատի կնոջ մը , որ նոյնպէս անձ-  
րեւանոցը բացած՝ կ'աճապարէր ի տուն :

Երբ երիտասարդը 5-6 քայլի չափ տիկնոջ մօ-  
տեցաւ , քայլերը պղտիկցուց : ու երբ տիկինը  
անգամ մը ետին դարձաւ , պարոնը վաճառատանց  
մէջ վառուած լոյսերուն շնորհիւ տեսաւ նորա  
հիանալի գեղեցկութիւնը , ուստի քայլ մը եւս ա-  
ւելի մօտեցաւ :

— Ո՛հ , որչա՛փ երջանիկ կը լինէի , եթէ թեւ  
թեւի տուած շրջէի եւ կամ իւր տունն առաջնոր-  
դէի սա հրեշտակաց դասուն վերաբերող տիկինը ,  
ըսաւ կամաց ձայնիւ :

Տիկինը, որ այս խօսքերը լսեր էր, ոչ միայն չի պատասխանեց, այլ ետին անգամ չի նայեցաւ :

— Տէր Աստուած, ի՞նչ հասակ, ի՞նչ քառուածք եւ ի՞նչ գեղեցկութիւն, շարունակեց պարոնը աղերսագին ձայնիւ . ո՛րպիսի երջանկութեամբ կը ծնրադրէի մի այսպիսի գեղեցկութեան . . . որպիսի՛ անձնուրացութեամբ կեանքս կը զոհէի սորա ամենաչնչին մէկ քմահաճոյիցը . . . ա՛հ, եւ սակայն, եթէ այս հրեշտակին ծանօթանալու պատւոյն չարժանանամ, յուսահատութեանէս կը յիմարանամ, այո՛, անպատճառ պիտի յիմարանամ :

Յայնժամ տիկինը ետին դարձաւ, եւ

— Աւելորդ է յիմարանալ, պարոն, ըսաւ ժրպտեղով, կրնաք ծանօթանալ :

— Ա՛հ, ի՞նչ երջանկութիւն, պոռաց երիտասարդը ուրախութեամբ, եւ մօտեցաւ տիկնոջ, արդէն կը յուսայի թէ չպիտի ուզէք իմ թշուառութեանս պատճառ ըլլալ :

Զայս ըսելէ ետքը տիկնոջ ձեռքը սեղմեց, որ իրեն երկնցուցած էր, եւ որ ըստ սովորութեան նորա անունը հարցուց :

— Պարոն Գ. Գիթեանց :

— Տիկին Զ. Վերջակէտօֆ :

— Տուներնիդ կ'երթաք, այնպէս չէ՞, տիկին :

— Անշուշտ, զի կը տեսնէք որ անձրեւն ըսկսած է :

— Ուրեմն պատիւ պիտի ունենամ ուղեկցել ձեզ մինչեւ ի տուն .

— Ինչու՞ չէ . . . եթէ այդքան բարի լինիք :

Եւ հինգ վայրկեանէ ետքը տիկինը գեղեցիկ տան մը դրան առջեւ կանգ առնելով,

— Ահաւասիկ մեր տունը հասանք, ըսաւ :

— Երջանի՛կ բոյն, ուր պաշտելի թռչնիկ մը կը բնակի, մրմուռաց երիտասարդը :

Տիկինը առանց պատասխանելու, դուռը զարկաւ, զոր սպասուհի մը անմիջապէս բացաւ :

— Ներս հրամմեցէք, պա՛րոն, եւ հաճեցէք քանի մը ըսպէ սպասել դաւթին մէջ, ըսաւ տիկինը եւ աճապարանօք իւր առանձնասենեակը գնաց :

Երիտասարդը տիկնոջ այս մեկնումը թրջուած շրջազգեստը փոխելով վերադառնալու վերադրեց, ուստի ուրախ եղաւ եւ իւր ալ թրջուած կրկնոցը հանեց պատէն վար կախեց :

Սպասուհին ալ փողոցին դուռը գոցեց եւ աչքին ծայրովը լաւ մը երիտասարդը չափելէն ետքը, տիկնոջն հետեւեցաւ :

Երեք վայրկեան ետքը դուռ մը բացուելով, բարձրահասակ, գիւրուկ եւ խոժոռ նայուածքով խոհարար մը դուրս ելաւ, ձեռքը ամսէ մը բրունած, որուն մէջ դաւաթ մը օղի եւ պատառ մը աղով հաց կար :

— Տիկինը խնդրեց որ հրամմեք, ըսաւ, ամսէն պարոնին ներկայացնելով .

Երիտասարդը իւր յուսացածին հակառակ այս հիւրնկալութենէն եւ իբրեւէն բոլորովին շփոթեցաւ, բայց վայրկեան մը ետքը յուշաբերեալ, օղին խմեց, պատառ մը հացը բերանը դրաւ եւ գրպանէն տաս փարանոց մը (2 գարիք) հանած՝ փսխէին՝ մէջ նետեց, ըսելով.

— Զայս կը տանիս տիկնոջը կուտաս, եւ կըսես որ 10 փարայէն աւելի չա՛րժեր . . . :

— Բայց եթէ դու ք ասկէ աւելի արժէիք, տիկինն Ռոտիկանապետուհիս ալ անշուշտ ըստ այնմ պիտի վարուէ՛ր . . . պատասխանեց խոհարարը, տասնոցը իւր գրպանը նետելով :

Կ'երեւի թէ այս «տիկինն Ռոտիկանապետուհի» անունը բաւական եղաւ անփորձ երիտասարդը իր անխոհեմութենէն արթնցնելու, որուն լեզուն կապուեցաւ եւ կրկնօցը առնելով անմիջապէս կըծիկը դրաւ . . . :

— 0 —

67

### ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՉ

Մանկավարժը 5 տարեկան նորեկ աշակերտի մը կը հարցնէ. — Ի՞նչն ըոէ նայիմ, Գա՛ռնիկ, սա մեր գիւղին դիմացը տեսնուած այն գեղեցիկ անտառները ո՞վ ստեղծեց .

—Իրաւոր չիյտեմ վարժապետ, մենք տահա շարաթ մըն է որ այս գիւղը կրուեցանք:

— 0 —

68

Փրանսերէնի ուսուցիչ մը իւր աշակերտներէն մէկուն ըսաւ.

—Ի՞նչ աստիճան բթամիտ տղայ ես եղեր, որ ամեն ատեն իգական բառերուն արական յօդ կը դնես.

—Ի՞նչ ընեմ, միւսի՛ւ, պատասխանեց ուսանողը, ինքզինքը արդարացնելու մտօք, բառերը ոչ պէիս ունին եւ ոչ ալ մօրուք, որ արու կամ էգ ըլլալնին հասկնամ:

— 0 —

69

### ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՒՆ ՄԸ

Բարիդի մէջ մարդ մը ամուսնալուծութիւն խնդրելու համար դատարան կը գիմէ. կինն ալ փաստարանի մը երթալով՝ խնդիրը հետեւեալ խօսքերով կը բացատրէ.

—Պարոն փաստարան, ամուսինս իմ վարուցա ու բարուցս դէմ գանգատելով ամուսնալուծութիւն կը խնդրէ. բայց իւր գանգատանաց որչա՛փ անիրաւ ըլլալը կարծեմ իր մտերիմ բարե-

կամներէն կրնայ ստուգուիլ, որք իմ բնաւորութենէս յանչա՛փս կախորժին :

Փաստաբանը . — Ահա՛, տիկին, բուն գանգատին պատճառն ալ իր այդ բարեկամներուն քեզմէ ախորժելնին է եա՛ — կը պատասխանէ :

— 0 —

## 70

### ՀԻՒԱՆԴԱՊԱՀՆ ՈՒ ԴԵՂԱԳՈՐԾԸ

Հիւանդապահ կին մը սաստիկ դող ելած՝ դեղագործին կը դիմէ, գոչելով .

— Ա՛հ, պարոն դեղագործ, սխալեցայ, գինիին տեղ դդալ մը մելան տուի հիւանդիս, բժիշկն ալ հոս չէ, հիմա ի՞նչ ընեմ .

— Հող չէ, ֆսաս մը չի պատճառեր :

— Ի՞նչպէս հող չէ, անպատճառ սօքթօրը գտնելու է :

— Եթէ հոս գալու ըլլայ՝ ձեզի կը դրկենք :

— Բայց մինչեւ որ բժիշկը գայ, ի՞նչ ընելու եմ, կաղաչեմ ըսէք, ապա թէ ոչ՝ չեմ մեկնիր :

Դեղագործը ճարահատեալ . — Աւրեմս թերթ մը ծծուն թուղթ կըլլեցուցէք հիւանդին . . .

— 0 —



## 71

## ՏԱՆ ՄԸ ՄԷՉ

Ամսուան մը նոր հարս ու փեսայ .

— Սիրելի ամուսինս, այս իրիկուն վերադարձիդ, ադամանդներս պահելու համար Մէղօն տը Միլ-Վիլէն պղտիկ պայուսակ մը բերէք .

— Գլխուս վրայ, սիրունիկս :

— Կեցէք, մի՛ մեկնիք . ցուրտերը կոխեց, օժիտ բերած մուշտակս ամեն օրուան չի հազնուիր, պարզ տեսակէն մուշտակ մը կուղեմ :

— Բան . . . մը . . . կրնենք . . . :

— Աղէկ միտքս եկաւ, սեղանատան պատուհաններուն վարագոյները տպածոյ ըլլալէն տրգեղ կերեւան, ուրեմն երկու թօփ ճերմակ առնելու էք որ վարագոյրները փոխուին :

— Կ'առնենք :

— Կեցէք, պիտի մտնայի, սպասուհւոյն համար բրդեղէն ֆիստանցու մը առնելու էք . սաղ տեսակէն չըլլայ .

— Աղէկ կըլլայ :

— Կուղէք նէ մատերնիդ կապեմ որ չի մտնաք, ինծի համար ալ մէջը ֆանէլայով նոր տեսակ բանթօֆ մը պէտք է .

— Գլխուս վրայ, բայց սիրունիկս, իրիկուն եղաւ, մենք տակաւին շուկայ պիտի երթանք և . . .

— Կ'երթաս, դեռ չի լմացուցի, հիւրանոցին քովի պղտիկ ոենեկին համար գօնցօլ մը ու հա-

յելի մը պէտք է, անպատճառ այսօր առնելով,  
միւս ապսպրածներու հետ իրիկուան դրկելու  
էք:

— Քեզի բան մը ըսե՞մ, սիրունիկս, գօնցօլն ու  
հայելին եւ միւս ապսպրածներդ համենքն ալ յա-  
տուկ բարեւ ըրեր, «այս գիշեր չենք կրնար գալ»  
ըսելով՝ ներողութիւն խնդրեր են:

— Տէր ողորմեա, այդ ի՞նչ տղայական խօսք է,  
միթէ կարասին կը խօսի՞...

— Մի՛ գարմանար, հողիս, երբեմն երեսս չի  
բռնելուն, իմ տեղս անոնք կը խօսին:

— օ —

## 72

### ԲԺԻՇԿՆ ՈՒ ԳԻՆԵՄՈՒԸ

Բժիշկ մը գինովութենէ հիւ անդացած մէկուն  
հետեւեալ խրատը տուաւ.

— Բարեկամ, ալ հիմա վտանգը անցուցիր,  
բայց բոլորովին առողջանալէդ ետքն ալ ջուրէն  
զատ՝ ոգելից ըմպելիք չպիտի գործածես.

— Աղէկ կըսես ամա, տօ՛գ թօր, այն ատեն ալ  
բոլորովին առողջանալս ի՞նչ ֆայտա կընէ...

— օ —

## 73

## ԿԵՂԾ ՀՍՄՐՈՒՀԻՆ

188\* տարւոյ մեծ բարեկենդանի հինգ շաբթի գիշերը, Բերայի նոր թատրոնն արտաքուստ եւ ի ներքուստ շքեղապէս զարդարեալ էր, զի մեծ պարահանդէս մը պիտի տրուէր :

Երբ ժամը Յին թատրոնին դուռը բացուեցաւ, դրանն առջեւ անհամբեր սպասող երկու սեռէ գիմակաւոր եւ անդիմակներու հոծ բազմութիւնը իրարու նախանձողներու պէս մէկզմէկ հրմշարկելով, կաճապարէին պարասրահն ու օթեակները գրաւել :

Պարակից (դամ) չունեցող երիտասարդք սրահին պատերուն տակ սպասող անտէր գիմակաւորուհեաց կը դիմէին, իրենց թեւերը ներկայելով ի պար . անոնցմէ ոմանք կը յաջողէին եւ ոմանք կը մերժուէին, վասն զի, պարահանդիսական օրինօք, գիմակաւոր լուացարարուհի մը իսկ ազատ է խրոխտարար մերժել ընկերութեան պատուաւոր դասուն անգամ պատկանող երիտասարդին թեւը, եթէ սա ըստ իւր քմաց վայելուչ դէմք չունենայ, եւ երիտասարդն ալ այդ մերժման վրայ առանց ցաւ մը դդալու, ընդհակառակն ներողութիւն խնդրելով պիտի հեռանայ եղեր անոր քովէն եւ երթայ ուրիշ մը բնտուել :

— Յաջողակ պարոն մը ըլլալուդ վրայ միշտ կը պարծիս, ըսաւ անդիմակ պարոն մը իւր ընկերին,

որու հետ թատերաբեմն ելլելու փոքր սանդուղին առջեւ կանգնած՝ օթեակները աչքէ կ'անցնէր, տեսնե՞նք, պիտի կարենա՞ս թիւ 20 օթեկին մէջ առանձինն նստող, դիմակաւոր՝ այլ նրբակազմ կնոջներկայանալով, անոր հետ վալս մը դառնալու :

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց քսանամեայ խրոխտ երիտասարդը, ակնարկ մը ուղղելով դէպ ի այն օթեակը, ուր խիստ զարդարուն «օճիւցով մանկամարդուհի մը օթեկէն դուրս կախուած, կարծես այս երկու սյարոնները կը դիտէր, ինչո՞ւ չէ, քանի որ տօմինօ հագեր է, անշուշտ պիտի պարէ, եւ ես ալ մեղք մը գործած չպիտի ըլլամ զայն հրաւիրելով ի պար :

Զայս ըսելէ ետքը, կրակ ու բոց երիտասարդը առիթը ձեռքէ չի փախցնելով՝ գլխովը բարեւեց կինը, որ շնորհալի կերպիւ նոյնպէս գլխովը պատասխանեց :

Կ'երևի թէ պարահանդիսական օրինօք բարևի այս փոխանակութիւնը բաւական էր երիտասարդին համարձակութիւն տալու, որ բազմութիւնը ձեղքելով, սլացա՛ւ, դնա՛ց օթեկին դուռը զարկաւ : Դիմակաւորուհին, որ երիտասարդին ճամբայ ելլելը տեսնելով, նորա ընկերոջը իւր շնորհակալութեանը յայտարար նշան մը ընելէն ետքը ներս քաշուեր էր, առանց «Մտէ՛ք» ըսելու, նիգը քաշեց եւ դուռը բացաւ :

Նոյն պահուն առաջին վալսը սկսուած էր :

— Ներեցէք, աղնիւ օրիորդ, ըսաւ երիտասար-

դը շունչը կտրած, ապրեօք այս գիշեր ի միասին պարելու համար մեր թեւն ընդունելու պատիւը պիտի շնորհէ՞ք :

Գիմակաւորուհին ինչան հաւանութեան մեղմիկ մի գլուխը շարժեց :

— Յաւիտեան երախտապարտ եմ ձեզ, նազելիդ գեղաշնորհ, շարունակեց երիտասարդը, ուրախութենէն ոտքը գետնէն կտրած, ուրեմն աճապարե՛նք, զի վալսը լմնալու վրայ է :

— (Վալս չի գիտեմ,) պատասխանեց գիմակաւորուհին համրի պէս նշանացի կերպով :

— Խիստ բարի, բայց վալսէն ետքը բօլքա պիտի խաղանք, պիտի ընկերանա՞ք մեզ :

— (Էհ, այո՛ :)

— Շնորհակալ եմ, եւ եթէ կը հաճիք, թողունք այս տաք օթեակը ու Պիւֆէ երթանք, ուր կրնաք քիչ մը հանգիստ առնուլ եւ զովանալ :

— (Թող այնպէս ըլլայ,) պատասխանեց համրուհին նոյն ձեւով :

Անհնար է նկարագրել երիտասարդին զգացած ուրախութիւնը, որ յաղթանակ տանողի մը պէս գիմակաւորուհին թեւն առած, ուղղակի Պիւֆէն տտրաւ եւ անմիջապէս շիշ մը Շամբանեա բերել տուաւ : Հազիւ թէ առաջին գաւաթը լեցուցեր էր, ահա իւր ընկերը տեսաւ, որ իրենին պէս գիմակաւորուհի մը թեւն առած՝ Պիւֆէն կը մտնէր :

—Ի՞նչ ըրիր, միւսիւ Վահրամ, յաջողեցա՞ր, հարցուց այս վերջինը, անհամբեր հետաքրքրութիւն մը կերճելով.

—Ահա կը տեսնես, պատասխանեց Վահրամ, խրոխտարար, եւ յաղթական ակնարկով մը պարակիցը անոր ցուցուց:

—Է՛յ պռավօ, արդարեւ ճարպիկ ես եղեր:

—Բայց կ'աղաչեմ, սիրելի բարեկամս, ըսաւ մեր պարոնը ընկերոջը մօտենալով, չըլլայ որ բերնէդ ֆալցօ խօսք մը փախցնես, զի կերեւի թէ պարակիցս աղնուական ընտանիքի մը կը վերաբերի:

—Անհոգ եղիր, այնչափ կոշտ մէկը չեմ... գոնէ ով ըլլալը հասկցա՞ր.

—Գեռ ոչ... մինչեւ ցարդ հարցումներուս գլխով ու ձեռքով պատասխանեց, եւ արդեօք դէ՞մքն ալ չի պիտի ցուցնէ.

—Անհոգ եղիր, քանի մը դաւաթ Շամբանեա խմելուն պէս, լեզուն ալ կը բացուի դէ՞մքն ալ:

Զայս ըսելէ ետքը ընկերը հեռացաւ:

Տասը վայրկեանէն Բօլքաի նշանը արուելուն, Պիւֆէն հաւաքեալ բաղմութիւնը կրակէ փախչողներու պէս զիրար հրմշտկելով պարասրահը լեցուեցան եւ սկսան կաքաւել:

Քսան վայրկեանէն դադարի ատեն էր եւ Պիւֆէն ըստ առաջնոյն խառնիճաղանճ բաղմութեամբ պիտի լեցուէր.

Պ. Վահրամ, առանց սպասելու Բօլքաին վերջաւորութեան, պարակցին հետ Պիւֆէն եկեր

բազմեր էր, ուր դարձեալ իւր բարեկամին հանդիպեցաւ :

— Է, ի՞նչ ըրիր նայինք .

— Ոչինչ . մինչեւ ցարդ շիշ մը Շամբանեա խըմեցինք, բայց հակառակ այնչա՛փ աղաչանացս կուռքի պէս նստեր է :

— Քի՞տէն բռնող տեսակէն չըլլայ, ետքը կը խաշուիս, բայց չեմ յուսար, այն կարգի կանանց գործածած ձեւերը չունի կարծեմ :

— Ի՞նչ կըսես եղբայր, ազնուական բան է, պարելու միջոցին ձեռքն անդամ չի թողուց որ ձեռքիս մէջ առնեմ, հազիւ թոյլատրեց բթամատին ծայրէն բռնել . այն աստիճան նուրբ եւ էթիքէթ բան մ'է որ չեմ կրնար պատմել, ասկից զատ, շատ չի պարեր, երկու անգամ դառնալէն ետքը հանդարտ նստիլ կուզէ :

— Ուրեմն Գօնեաք բերել տուր, որ շուտ մը լեզուն ալ կը դարձնէ, խելքն ալ :

— Աղէկ ըսիք, ուրեմն դուք հեռացէք .

— Յաջողութիւն մաղթելով, ահա կը հեռանանք :

— Սիրուն օրիորդ, Գօնեաք կախորժի՞ք .

— (Ո՛չ :

— Ուրեմն քանի մը հատ ոստրէ բերել տանք որ Շամբանեան շարունակենք .

— (Դուք գիտէք :

— Կա՛ռսօն, մեզի տուղինա մը ոստրէ բեր .

— (Կէս տուղինան բաւական է :

— Ա՛, պա՛հ, եւ արդէն ընկուզի խաշորութեամբ բաներ են :

—(Լաւ։)

—Ի՞նչպէս գտաք ոսարէն։

—(Շատ աղւոր։)

—Տուղինա մ'ալ բերել տա՞նք։

—(Դուք գիտէք։)

—Քեզի բան մը ըսե՞մ, շիշ մը Շամբանեա եւս բերել պիտի տամ։

—(Ալ չուզեր։)

—Տէր ողորմեա, թող բերէ՛.

Կարսօնը, որ առաջին նշանին հրացանին բերնէն դուրս նետուելիք կապարին նման պատրաստ կեցած պարոնին կը նայէր, այս հրամանին վրայ անմիջապէս բերաւ երկրորդ շիշը, որուն բերանը պայթմամբ բացուեցաւ։

—Արդ աղնիւ օրիորդ, ըսաւ երիտասարդը դաւաթները լեցնելով, առանց դէմքերնիդ ցուցնելու, գոնէ չի պիտի՞ բարեհաճիք ձեր քաղցրալիւ ձայնն լսելի ընել ինձ։

—(Աւա՛ղ, ոչ։)

—Բայց այդ շնորհալի ձեւերով որ կը պատասխանէք, վարպետ համրագէտ մը ըլլալնիդ կը յայտնէք, ո՛հ, եթէ խօսիք, որչա՛փ քաղցր պիտի իջնէ հոգւոյս մէջ ձեր դայլայլիկը եւ հանդարտեցնէ սրտիս փոթորիկները։

—(Ի՞նչ ընեմ, չեմ կրնար խօսիլ։)

—Ձեա կրնա՛ր . . . գոնէ բառ մ'ալ չպիտի՞ արտասանես։

—(Ետքը։)



— Ո՛վ ուրախութեանս, կենացս ամենէն երջանիկ վայրկեանը պիտի ըլլայ այն, երբ արժանանամ լսել ձեր դայլայլիկը. ուրեմն խմենք եւ ֆատրիլի պատրաստութիւնք, զի ՍԿԵ՛ւը տուաւ. Եկո՛ւր կառսօն: Ի՞նչ է պարտքերնիս.

— 2 տուղինա ոստրէ եւ 2 շիշ Շամբանեա՝ 226 դահեկան:

— Չնչի՛ն գումար մը . . . առէ՛ք:

— Շնորհակալ եմ պարոն:

— Օ՛ն, երթանք . . . քատրիլն սկսաւ:

— (Շնորհակալ եմ, չեմ փափաքիր:)

— Ըստ որում նրբակազմ եւ դիւրազգած հըրեշտակ մը լինելնուդ, շուտ կը հողնիք:

— (Ի՛նչ ընեմ:)

— Շատ աղէկ, չենք պարեր, միայն բարեհաճէիք իմացնել թէ, ե՞րբ պիտի լսեմ ձեր գեղգեղանքը:

— (Թուղթ գրիչ ունի՞ք.)

— Հապա՞. ահաւասիկ.

Եւ հապճէպով թղթապանակը անոր ներկայեց. Դիմակաւորուհին գողգոչուն ձեռօք հետեւեալը՝ գրեց.

«Երբ ասկէ մեկնելով կառք մը նստինք, այն ատեն պիտի լսէք իմ ձայնս, ուստի կը խնդրեմ որ այս մասին այլ եւս չի պնդէք. կը խնդրեմ նաեւ որ այլ եւս ինձ համար ծախսեր չընէք, ապա թէ ոչ պիտի պարտաւորիմ ցաւ ի սիրտ բաժնուիլ ձեզմէ:»

— Ո՛վ երջանկու թեանս . . . դուք ձեր սեռին անգին մարգարիտներէն էք եղեր, որ այսպէս կը խնայէք ինձ . ուրեմն թոյլ տուէք որ ձեր վարսից երկայն հիւսուածքը համբուրեմ:

Դիմակաւ որուհին թողլով որ պարօնը իւր այս փափաքը կատարէ, ինքը դրելը շարունակեց

«Եթէ կը հաճիք, հիմա մեկնինք, զի ժամը ծղարկաւ:»

— Մեկնի՛նք, այո, մեկնի՛նք, աղաղակեց պարօնը ուրախու թենէն խելքը գլխէն գացած:

Եւ սրահէն անցնելով, թատրոնին դրանը առջեւ սպասող կառքերէն մէկուն մէջ նետուեցան:

Ձիերը սրարչաւ ճամբայ ելան:

— Հիմա, սիրելիս, ըսաւ դիմակաւ որուհին, (լեզուն բացուելով, բայց բնական ձայնը չի մատնելու համար մեղմ եւ բարակ ձայնիւ կը խօսէր,) շատոնց ի վեր կուզէի հետդ տեսակցիլ եւ վերջապէս գոհ եմ որ այս գիշեր յարմար առիթը գտայ: Ինձ համար խենդեցաք, վարսիցս հիւսուածքը համբուրեցիք, եւ փոխարէն 226 դահեկան տուժեցիք . . . եթէ ձայնս առնէիք եւ դէմքըս տեսնէիք, թերեւս հինգ ոսկի ալ վատնէիք, այնպէս չէ՞ . . . եւ ահա ձայնս կը լսէք:

— Եւ դէմքերնի՞դ:

Դէմքս ալ պիտի տեսնէք, երբոր տուն հասնինք:

— Բայց ո՞ւր կը բնակիք, ըստ որում ձեր տան թիւը ու փողոցը կառավարին չիմացուցիք:

—Կառավարը արդէն գիտէր :

Գիմակաւորուհւոյն այս պատասխանէն երիտա-  
սարդը դողաց եւ սկսաւ մտածել :

Արդեօք քսակահատ մ'էր պարակիցը , որ գիմա-  
կաւորեալ եւ կնոջ ձայն կեղծելով զինքը կողոպ-  
տել կը տանէր , կամ արդեօք վաթսուն տարեկան  
բաղդախնդիր կի՞ն մ'էր , որ կառավարին հետ  
խօսք մէկ ըրած զինքը այսպէս յաղթանակաւ  
քաշէր կը տանէր իւր ո՛րջը :

Քանի մը վայրկեան այս տեսակ մտածմունքներ-  
ով միտքը պաշարուելէ ետքը՝ սթափեցաւ կնոջ  
ձայնէն , որ շարունակեց .

—Գուք ունիք մի միայն մայր մը , որ ըստ բաւ-  
ւականին խելքը գլուխը կին մ'է , իսկ հայրերնիդ ,  
աւա՛ղ , ասկէց չորս տարի առաջ մեռաւ , որոյ  
ձգած ժառանգին տոկոսովը կ'ապրիք :

Երիտասարդը դողահար՝ հազիւ կրցաւ սախօս-  
քերը կակազել .

—Բայց ո՞ւսկից գիտէք . . .

—Կեցիք , հիմա պիտի ըսեմ , եթէ իմ տեղս ու  
ըիշ մը ըլլար՝ այս գիշեր բաւական ծախսի դուռ  
մը կը բանար ձեր գլխուն . բայց ես գիտէի թէ  
գրպաննուդ մէջ ընդ ամենը երեք ոսկի ունէիք ,  
զոր ձեր մօրմէն թախանձանօք ստացաք , եւ հա-  
կառակ իւր կամաց պարահանդէս եկաք . խեղճ  
կինը երեք շաբաթներէ ի վեր չկրցաւ զձեզ հա-  
մոզել պարահանդէս չի գալու , դուք յամառե-  
ցաք եւ մինչեւ իսկ յայտարարեցիք որ , ե-

Թէ երեք ոսկի ձեզի շտար, դուրսը պարտք պիտի ընէիք եւ պարտկաննիդ մօրերնուդ վրայ պիտի դրկէիք. արդ, կը տեսնէք թէ ո՞րչափ կը սիրեմ զձեզ որ...

— Բայց ո՞վ էք դուք, որ այսպէս իմ գաղտնիքներս ճշդութեամբ կը պարզէք, գոչեց երիտասարդը, զարմանքէն ահարեկեալ.

— Հիմա կիմանաք, եւ արդէն շատ ճամբայ չունինք, երբ տուն երթանք եւ սենեակնիս առանձնանանք, շա՛տ բաներ պիտի պատմեմ քեզի, վասն զի, յանչա՛փս կը սիրեմ զքեզ:

Երիտասարդը չափազանց հետաքրքրութեամբ սկսաւ այս ձայնին որ ո՞ւնը ըլլալը մտածել. թէ եւ անգամ մը ուզեց կնոջ դիմակը քաշել վար առնուլ, բայց խորհելով որ կառավարին ներկայութիւնը կրնար աւելի վտանգաւոր ըլլալ, ուստի ճարահատեալ եւ յուսահատ ինքզինքը բաղդին յանձնեց:

Հինգ վայրկեանէն կառքը տան մը առջեւ կեցաւ: Իմականորուհին կառքին դուռը բանալով, մէկ ոստմամբ վար իջաւ, իսկ երիտասարդը յապուշ կըրթեալ՝ տեղէն երերալու չէր համարձակէր:

— Տիկինը գրպանէն բանալի մը հանեց եւ փողոցին դուռը բանալով. — Մտի՛ր, սիրելի վահրամբս, ըսաւ դիմակը վար առնելով, մտի՛ր... մի՛ վախնար, ոչ թէ օտարականի մը՝ այլ քու հօրդ տունն է... իսկ քեզի ներս մտնել հրամայողը

մայրդ է, որ քու համբուրած շինծու սեւ մազին  
 եւ տօմինոյին տակ ծածկելով իւր քառասնամեայ  
 տարիքը, այս գիշեր, թերեւս իրեն տարեկից  
 կնոջ մը շուայտու թեանցը զոհ երթալիք զաւակն  
 ազատեց...» Եւ որդւոյն դողդոջուն ձեռքէն  
 բռնած, զայն սենեակ տանելէն ետքը յարեց.  
 «Քու մտերիմ ընկերդ, որ դիս պարահանդիսին  
 մէջ ցոյց տուաւ քեզի, նա օժանդակեց ինձ այս  
 գիշեր այսպէս վարուելու, անոր հետ այս խաղը  
 պատրաստեցինք, որու համար յանհունս շնորհա-  
 պարտ եմ իրեն: Պարահանդէսներու մէջ կարգ  
 մը դիմակաւոր կանանց քեզ նմանները քթէն  
 բռնելու համար ինչ ձեւեր գործածելնին փոր-  
 ձառու անձինքներէ տեղեկացայ. ի՞նչպէս, լաւ  
 կատարեցի՞ դերս... ուրիշ կերպով չի պիտի կա-  
 րենայի դքեզ համոզել... եթէ ըսէի թէ, զա՛ւա-  
 կըս, դիմակը կրնայ 16 տարեկան օրիորդի մը  
 պէս ցուցնել վաթսունամեայ կինը եւ քեզ նը-  
 մանները խաշել, պիտի ըսէիր թէ «ես չեմ խաբ-  
 ուիր.» եթէ ըսէի որ դէմք մը ցուցնելու եւ հե-  
 արդ խօսելու համար 226 դահեկան տուգանքի  
 մը կարելի է դատապարտուիս, «անկարելի՛ է,  
 չեմ խաբուի՛ր», պիտի պատասխանէիր. բայց ա-  
 հա, սիրելի զաւակս դարձեալ կը հաստատուի  
 սա ճշմարտութիւնը թէ՛ արանց խորագ խտութիւ-  
 նը չկրնար կանանց հնարագիտութեանը գերա-  
 զանցել... Ո՛հ, արդեօք քանինե՛ր ձեզ նմաննե-  
 րը կառքերնին առած եւ շուայտու թեան լարիւ-

ըինթոսներու մէջ տարած ձգած են . քանինն՝ րարդեօք ձեզ նման երիտասարդներու դերերգմանները պեղած են մէկ գիշերուան մէջ . . . Հիմա , դաւակս , գրկէ՛ դիս , որ քաջութիւն ունեցայ այս գիշեր խիստ դժուարութեամբ կատարել այս գերը , մի միայն քու սիրո՛յդ համար . . .

Երիտասարդը մօրը գիրկը նետուեցաւ ու չի կարենալով խօսիլ , դէմքը ձեռացը մէջ առած՝ սկսաւ լալ :

Իւր արտասուքները զղջում կը նշանակէին :

— 0 —

## 74

### ԴԻՄԱԿԱԻՈՐԵԱԼ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Շատ անգամ, ինքզինքնին «Քաղաքավար, Բանգէտ եւ Տանտիկին» ծախելու գոռոզի դերն ըստանձնող ընտանիքներէ ոմանք այնպիսի այսպանելի վարմանց մէջ կը գտնուին , որ Խօրօլի մը չափ խելք չունենալնին կը հաստատեն :

Հետեւեալ դէպքը իբր նմոյշ (Ֆախուրա) յառաջ կը բերենք .

Առաւօտ մը , հոյակապ տան մը մէջ բնակեալ եւ քաղաքավար դասէն հռչակեալ տան տիկին մը Բա մը եռացեալ ջուրը փողոցին վրայ նայող պատուհանէն վար կը թափէ , որ դժբաղդարաւր նոյն միջոցին անկէ անցնելու վրայ եղող շուկացի Է-

նա՞քի մը գլխուն հանդիպելով, մարդուն վրան  
գլուխը թրջելէ զատ, դէմքն ալ կէս մը կը խա-  
շէ: Խեղճը յանկարծակիի կուգայ եւ մտածելով  
որ իւր վիճակը ու ժամանակը չեն ներեր նոյն ըն-  
տանեաց հետ չափուելու, անխօսուկ մը իւր տու-  
նը կը վերադառնայ:

Կինը մտածելով որ օդը անձրեւոտ չէ, բայց ա-  
մուսնայն վրան գլուխը թրջուած է, զարմանօք կը  
հարցնէ.

— Այդ ի՞նչ է, ծո՞վս ինկար, ի՞նչ եղար... ե-  
րեւոյ ալ կարմրեր ու ուռեցեր է.

Երբ մարդը գլխուն եկածը կը պատմէ, կինը  
կը պատասխանէ.

— Ես այդ ընտանիքը քաղաքավա՛ր կը կարծէի:

— Այդ կարծիքդ սրբագրելու ես, զի հասկը-  
ուեցաւ թէ անոնց քաղաքավարութիւնը դիմա-  
կաւորեալ է եղեր.

— Է՛ ի՞նչ ըրիր այդ անուշադիր թշուառական-  
ներուն:

— Ի՞նչ կրնայի ընել, ինքն իրենս շնորհակալ  
ըլլալով հեռացայ:

— Շնորհակալ եղար մի՛... .

— Այո, մտածելով որ միայն տաք ջուրը թա-  
փեց ու դէմքս կէս մը խաշեց, բայց եթէ Աստ-  
ուած մի՛ արասցէ Քա՛ր ձեռքէն իյնար, գլուխս  
պիտի կոտրէ՛ր... .

## 75

## Ի ԶԵՂԽՈՒԹԵՆԷ Ի ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹԻՒՆ

Վրան գլուխը թէեւ կոկիկ՝ բայց գրպանները պարապ մուրացկան մը սրճարան մը մտնելով, հոն քովէ քով նստած երկու պարոններու կը մօտենայ :

— Բարի եկար . մանրուք չի կայ :

— Բայց վայրկեան մը մտիկ ըրէք ինձ , ազնաւասի՛րտ պարոնս , ես հասարակ մուրացկան մը չեմ . ժամանակաւ հարուստ էի , հօրս տանը դուռը միշտ բաց էր , ուր ամեն իրիկուն հիւրերը անպակաս ըլլալով , միշտ ուրախութիւն եւ զուարճութիւն կը տիրէր , ո՛հ , այն ժամանակները որչա՛նի շուտ անցան . . . եւ ես թէպէտ այսպէս ըլլալու չէի , բայց ի՞նչ ըսեմ այն ճակատագրիս . . .

Պարոններէն մին , որուն համբերութիւնը հատած էր , ընդմիջեց .

— Ինչո՞ւ ճակատագիրդ կը մեղադրես , ժամանակդ այդ աստիճան ղեղխութեամբ անցունելէդ ետքը կը կարծէիր թէ Ռօչի՛լտ մը պիտի ըլլաս . . . Ահա տե՛ս , հիմա կը տուժես :

— Ըսենք թէ այդպէս ըլլայ , հիմա դուք չի պիտի՞ ողորմիք ինձ .

— Մանրուք չի կայ ըսինք ա՛ :

— Բայց դուք Գրիատոնեայ չէ՞ք .

— Ընդհակառակն չկարծածէդ շա՛տ աւելի Գրիատոնեայ ենք , եւ Աւետարանին սա պատուէրը ամենէն աւելի կը բռնենք . « Ինչ որ չես ուզեր քեզի ընեն , մի՛ ըներ դու ալ ուրիշին . » էյ ես չեմ ուզեր որ մէկը ինձի սղորմութիւն տայ :

— Գոնէ սիկարացու մը թիւթիւն տուր :

— Ես չեմ տար , դու ալ մի՛ խմեր որ խնայողութիւն սովրիս :



## 76

## ՏԱՆԵՐԷՑՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Աշկդ լոյս տէր հայր, արթըխ սօնըդ եկաւ, լըսեցի որ Շմէնտըֆէռին առջի թիւը քեզի է ելեր, աճապա ասլը կա՞յ .

— Ո՞ւրկէ լսեցիր օ՛րհնած .

— Պաճանախս կազէթան կարդացեր է տէ՛ մէջը տեսեր է :

— Մի՛ հաւատար օրհնած, իլլէ կազէթաները գրեւէն ետքը, բոլորովին սուտ է :

— Ճա՛նըմ, մէյ մը թահգիգ ըրէ, պէլքի խաղայով աս հավատիսը շիտակ տուած են :

— Ան իմ բաղդէս չէ եավրում, հէմ շիտակ հավատիս մ'ալ տան նէ՛ շըմէնտըֆէրի, բարեգործութեան եախօտ կտակի ըասթ չի գար, եա մեռելի ըասթ կուգայ եա կրակի :

— օ —

## 77

## ՏԱՆ ՄԸ ՄԷՉ

Այր եւ կին իրարու հետ կը վիճէին .

Այրը (Պաղ արեամբ) — Ըսի եւ դարձեալ կը սեմ, թէ պարապ են քու կասկածներդ, թէ անիրաւ տեղը կը բարկանաս ինձ դէմ :

Իսկ կինը, բորբոքեալ, կը պատասխանէր . — Երբէ՛ք, անիրաւ չեմ, աշխարհք մէկ տեղ դալու

այ ըլլայ, դարձեալ չի կրնար զիս համոզել, զի մտիկ չեմ ըներ, կը հասկնամ . . .

Նոյն միջոցին տիկինը անխոհեմ շարժում մը ընելով՝ թեւը կրակարանին կը մօտենայ եւ հագուստը կը բռնկի :

Այրը առանց խռովելու, անմիջապէս կնոջը թեւը կը մարէ՝ ու կըսէ .

— Տեսա՞ր կնիկ, ահա այսպէս պարապ տեղը միշտ կը բռնկիս :

— 0 —

## 78

### ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՔ

Հարիւր ոսկի դրամօժիտով նոր ամուսնացեալ մէկը օր մը իւր կինը թեւը առած փողոցէ մը անցած միջոցին դիմաւորեց իւր նախկին բարեկամներէն մին, որոյ հետ շատ մտերիմ էր . այս վերջինը տեսնելով որ բարեկամը խիստ գէշ ընտրութիւն մը ըրած էր, չկրցաւ համբերել եւ անոր ականջին մօտենալով ըսաւ .

— Ե՛ղբայր, աս ի՞նչ է, գացիր եկար աւելի տգեղ մը չի գտա՞ր .

Առ այս բարեկամը առանց նեղանալու պատասխանեց .

— Մի՛ վախնար, բարձր խօսէ, ականջն ալ չի լսե՛ր . . .

— 0 —

## 79

## ԱՆԽՈՋԵՄ ԱԶԴ ՄԸ

Ամերիկայի լրագրատեսերէ մին, օր մը իւր թերթին ճակատը մեծ տառերով հետեւեալ ազդը կը հրատարակէ .

«Թերթիս բաժանորդ ըլլալ փափաքողք փոխարէնը անպատճառ դրամ վճարելու պարտաւորեալ չեն . այլ իրենց պատրաստած կամ ծախելիք ապրանքներէն մաս մը (բաժանորդագնոյն արժէքին հաւասար) խրկող արհեստաւորք կամ խանութպանք ալ բաժանորդ կընդունուին, ամենայն սիրով :»

Այս ազդարարութեան յաջորդ օրը նոյն խումբագրատունը փառաւոր դագաղ մը կը տարուի կը ձգուի, եւ մեր խմբագիրը անոր մէջէն հետեւեալ տոմար կը գտնէ .

«Ազդերնիդ կարդացի, շա՛տ ուրախացայ . արհեստս դագաղ շինող է .»

Քանի մը վայրկեանէ ետքն ալ բրիչ մը եւ թի մը կը բերուի, որոց միոյն կոթին վրայ փակցուած թուղթը սա խօսքերը կը պարունակէր .

«Պատիւ ունիմ իմացնել ձեզ թէ, արհեստով գերեզմանափոր եմ եւ միշտ ձեզ ծառայելու պատրաստ .»

Ասոր վրայ մեր Պ . խմբագիրը խելքը տուն կը

կանչէ եւ գրաչարապետին քովը կը վազէ, գու-  
չելով .

— Շո՛ւտ, շո՛ւտ, այդ թշուառական ազգը վեր-  
ցուեցէ՛ք . հիմա ուր որ են քահանաներն ալ կու-  
գան :

— 0 —

80

### ՃԱՐՏԱՐ ՀՆԱՐԲ ՄԸ

Անգամ մը Եւրոպական Ռուսիոյ մէկ գաւառին  
մէջ երեւան կելլեն ահագին խոշորութեամբ գաշ-  
տային մուկեր, որք արտերը կ'աւերէին . այս ա-  
ւերմանց առաջքը առնելու համար գաւառապե-  
տը կը ծանուցանէ գիւղացւոց թէ, սպաննուած  
մէն մի գաշտային մուկին համար այսչափ կ'ուե-  
վարձատրութիւն պիտի ստանան . ուստի իբր ա-  
պացոյց, պարտին սպանեալ մկանց պոչերը ներ-  
կայացնել : Եւ ահա գիւղացիք կ'սկսին անհամար  
պոչեր տանիլ գաւառապետին եւ խոստացեալ  
վարձատրութիւնն ստանալ, բայց զարմանալին  
սա էր որ, մկանց թիւը չէ՛ր պակսեր :

Յայնժամ գաւառին կալուածատերներէն մին  
կը պարտաւորի այդ աւերիչ անասունները բռնե-  
լու համար որոգայթներ լարել, եւ որչա՛փ մեծ  
կըլլայ իւր զարմանքն, տեսնելով որ լալոր բռնուած  
մուկերը անպոչ էին . ասով կը հասկցուի գիւղաց-  
ւոց խորամանկութիւնը, որք բռնած մուկերնուն

պոչերը կտրելով գաւառապետին կը ներկայացնեն, վարձքը կ'ստանան, իսկ անպոչ մուկերը դարձեալ դաշտին մէջ կը թողուն եղեր, որպէս զի բազմանան եւ ասով եկամուտի մշտակայ աղբիւր մը ունենան օղի եւ ծխախոտ գնելու :

Ուստի գաւառապետը կը հրամայէ որ յետ այնորիկ մկանց ոչ թէ պոչերն, այլ գլուխները իրեն ներկայացուին :

Եւ ահա 'ի շնորհս այս վերջին տնօրէնութեան, մէկ շաբաթուան մէջ գաւառին դաշտերը այդ աւերիչ կենդանիներէն մաքրուեր են, զի այս անգամ գեղացիք 10,000 մուկի գլուխներ բերեր էին :

— 0 —

## 81

### ՏԻՄԱՐ ՄԸ

Սրճարանի մը մէջ երկու անձինք խնդրոյ մը առթիւ կը վիճարանէին, ինքզինքը բանի տեղ դնող տխմար մը զանոնք հանդարտեցնելու համար միջամտեց եւ իւր այլանդակ իրաւարարութենէն վիճարանողք աւերի բորբոքած սկսան կռուիլ, այն ատեն անկիւնը նստող ծեր մարդ մը զանոնք հանտարտեցնելէ ետքը, խօսքը միջամտող տխմարին ուղղելով, ըսաւ .

— Ի՞նչն ինչո՞ւ համար քիթդ մէջը խօթեցիր եւ կռիւք բորբոքեցիր .

— Որպէս զի, զիրենք հանդարտեցնեմ, պատասխանեց տխմարը գոռողութեամբ, ինչպէս որ ճրարագը մարելու համար հով մը պէտք է . . .

— Բայց պէտք է գիտնաս թէ, ընդմիջեց ծերը, երբեմն այդ լոյսը մարող հովը կրնայ հրդեհ մը պատճառել, ինչպէս ձեր միջամտութիւնն ալ վրտանդուոր կուիւ մը յարուցանել :

Մերունւոյն այս պատասխանը ներկայից ծափահարութեանն արժանացաւ, իսկ տխմարը անշուշտ առած դասը սերտելու համար՝ անխօսու կ'մը առաւ քալեց :

— 0 —

## 82

### ՓՈՔՐԻԿ ԾՈՅԼ ՄԸ .

Փոքրիկն ծոյլ Վահրամ թէեւ առաւօտները կանուխէն կարթննար, բայց վարժարան չերթալու համար աչքերը դոց, արթուն անկողնէն չէր ելլէր : Մայրը որդւոյն խորամանկութեանը վերահասու ըլլալով՝ զայն անկողնէն հանելու մտօք, առաւօտ մը յանկարծ դոչեց .

— Վա՛հրամ. ե՛լ կայնէ . վարժարանն իդ կայրի կո՛ր . . .

Իսկ խորամանկ ծոյլը առանց աչքերը բանալու պատասխանեց .

— Է՛ ի՞նչ ընեմ, վարժապետն ալ մէջը երե՞ր է . . .

— 0 —

## 83

## ԴԵՐԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՓԱԲՈՂ ՄԸ

Օր մը թատրոնի մը տնօրէնին կը ներկայանայ .  
Տնօրէնը . — Ի՞նչ կը խնդրեք , պարոն .

Պարոնը . — Դերասան ըլլալ կուզեմ , ուստի  
փորձեցէք զիս :

— Հարկ չի կայ փորձել , ըստ որում ձեր վրայ  
դերասանական յարմարութիւն չեմ տեսներ :

— Ինչպէ՛ս . . .

— Որովհետեւ ոչ պեխերնիդ ածիլուած է եւ  
ոչ ալ դիտարկ կը դնէք :

— Ուրեմն մնայք բարեաւ . եթէ գիտնայի որ  
դերասանական հանճարը ածելիին ծայրը եւ դըլ-  
խարկին մէջն է , փոխանակ ձեզի դիմելու , սափ-  
րիչի մը եւ գլխարկավաճառի մը կը դիմէի ու  
վայրկեանի մը մէջ առաջին կարգի կատակախօս  
մը կըլլայի :

— 0 —

## 84

## ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՁ

Կառավարիչը . — Պարոններ , հանդարտ նստե-  
ցէք . մարդիկ միշտ հնազանդութիւն պարտին  
իրենց մեծերուն . ուստի դուք ալ պարտաւոր  
էք ձեր վարժապետին հրամանացը հնազանդ  
գտնուիլ .

Հետաքրքիր տղակերտ մը կամացուկ մը քովի  
ընկերոջը . — Եղբայր , կուզեմ հասկնալ թէ՛ երբոր  
մենք մեր կառավարչին պիտի հնազանդինք , ու-  
րեմն կառավարիչնիս որո՞ւ պիտի հնազանդի :

Ընկերը . — Վա՛յ ապուշ վայ , այդ ալ չի գիտ-  
նալիք բա՞ն է , ան ալ իր կնկանը պիտի հնազանդի :

— 0 —

## 85

## ԴՍՏԱՊԱՐՏԵՍԱԼԻՆ ԱՂՋԻԿԸ

## Ա.

Դեկտեմբեր ամսոյ մէջ օդը ցուրտ է, և դիշեր-  
ներն ալ խիստ երկար կը լլան:

Բարիդի Սիւֆլօ փողոցի տան մը գեղեցիկ ճա-  
շակով կահաւորեալ սենեկին մէջ երիտասարդ մը  
և օրիորդ մը նստած էին վառարանին դէմը, որոյ  
վրայ դրուած մեծ հայելին իւր առջև դանուող  
երկու ճրագներու լոյսը կը ցոլացնէր:

Օրիորդը, որ թաւշապատ թիկնաթուի մը վրայ  
տարածուած էր աչքերը խոնարհած, կը թուէր  
թէ ասեղնադ ործեալ առարկայի մը հետ կը խա-  
ղար, իսկ երիտասարդը արմուկը թիկնաթուին  
կը թնցուցած՝ սիրարորութեամբ նայուածքով զօրիորդը  
կը դիտէր:

Զպիտի նկարագրենք աղջկան զմայլելի գեղեց-  
կու թիւնը, միայն պիտի բաւականանանք ըսել թէ՛  
պարզ՝ այլ ճաշակաւոր կերպիւ հագուած էր,  
և իւր սպիտակ ձեռքերը որ ծնդացը վրայ դրած  
էր՝ շատ սրտեր գրաւելու և մինչեւ իսկ իւր սե-  
ռէն շատերուն նախանձը գրգռելու չափ գեղե-  
ցիկ էին:

— Տխո՛ւր ես, Սիւզա՛ն, ըսաւ երիտասարդը,  
գարմանօք. եւ վայրկեան մը մտածելէն ետքը  
յարեց, աւա՛ղ, այդ ակորու թեանդ պատճառը՝



զուր կը մնտուեմ ինքնիրենս, մասն զի տակաւին  
աչքերդ ինձ չի դարձուցիր և սիրոյդ յայտարար  
բառ մը չ'արտասանեցիր:

Սիւզանի շրթանցը վրայէն բռնադբօսիկ ժպիտ  
մը անցաւ, դլուխը վեր առաւ և առ երիտա-  
սարդն ուղղեց այնպիսի ակնարկ մը, որ սէր եւ  
երախտադիտութիւն կը նշանակէր:

Երիտասարդը շարունակեց.

— Զքեզ այսպէս միշտ տխուր եւ մտախոհ տես-  
նելով՝ աատիկ կը վշտանամ, ժամանակէ մ'իսկեր  
սրտիդ խորը պահած դադտնիք մը ունիս, վիշտ  
մը, զոր պարտիս բսել ինձ... ա՛հ. Սիւզա՛ն.  
Ե՛րբ պիտի կարենամ դքեզ երջանիկ տեսնել:

— Երջանի՛կ... աւա՛ղ. մրմնջեց օրիորդը:

— Սրդեօք քու յանդիմանութեանցդ արժանի  
վարմո՞ւնք մը ունեցած եմ:

— Ա՛հ, ո՛չ, ո՛չ, կերդնո՛ւմ թէ դու բարձր ես,  
բաւ Սիւզան, խանդադատանօք երիտասարդին  
ձեռքը սեղմելով:

— Ուրեմն ի՞նչ բանի կը բաղձաս, նոր գոհա-  
րեղեններ եւ կամ աւելի դեղեցիկ շրջազգեստ-  
ներ կուզես... ուզածդ գնէ՛, եւ ես փոխարէնը  
պատրաստ եմ վճարել, եթէ հետիտան երթալը  
դքեզ կը յողնեցնէ՝ կառքս քու տրամադրու-  
թեանդ ներքեւ կը դնեմ:

Սիւզան տխրութեամբ դլուխը թոթուեց, եւ  
արտաւանայը վրայ առաւօտեան ցողին պէս փայ-  
լող երկու կաթիլ արցունքը իւր բարակ մատնե-  
րուն ծայրովը սրբելէն ետքը, բաւ:

— Ժօ՛րժ , մի՛թէ աղամանդներով հիւսուած պը-  
սակ մը կրնա՞յ զարդարել եւ ծածկել ճակատ մը՝  
որու վրայ սեւ աղտ մը դրոշմուած է . մի՛թէ կը  
կարծես թէ մետաքսեայ շրջազգեստին տակ կրնա՞յ  
ծածկուիլ խղճի ձայնը՝ որ բարձրարարաւ միշտ  
իւր տէրը կը մաշեցնէ . եւ մի՛թէ գեղեցիկ կառ-  
քով մը ճամբորդելը կրնա՞յ ծածկել այն նախա-  
տալի ծիծաղները՝ զոր ամբոխն անցնելու ատենս  
ինձ կուղղէ . ա՛հ , կը մտնա՞ս թէ ես քու հո-  
մանի՛դ եմ . . .

— Եւ ի՞նչ փոյթ ինձ , օր մ՛ալ կինս պիտի ըլլաս .  
այսպէս չե՞ս ուզեր . . . քաջ գիտես թէ աղատ եւ  
անկախ մէկն եմ . գիտես նաեւ թէ դքեղ կը սի-  
րեմ . . . գոհ չե՞ս արդեօք .

— Ըսածս չկրցի հասկցնել , ժօ՛րժ , խղճի խայ-  
թեր ունիմ , սակայն չեմ կրնար բաղձանքներ ու-  
նենալ , կրնամ ՚ի զղջում դառնալ , այլ յուսալ՝  
ներելի չէ՛ ինձ : Հետս ամուսնանալու խօսք կրնես ,  
բայց չես գիտեր թէ անկարելի՛ է :

— Եւ ինչո՞ւ , գոչեց երիտասարդը զարմանօք .  
ի՞նչու . մի՛թէ ես իմ կամացս տէրը չե՞մ . արդէն  
երեսուն տարեկան եմ . . .

— Բայց դու որ հարուստ եւ երեւելի ընտանիքի  
մը կը՛ պատկանիս , ի՞նչպէս պիտի ամուսնանաս թըշ-  
ուառ աղջկան մը հետ , զոր փողոցէն դանելով  
տունդ ընդունած ես . մտածէ՛ ժօրժ , աշխարհք  
պիտի ըսէ թէ՛ «այդ աղջիկն , որ իւր ցնցոտի հա-  
գուստներով աւելի մաքուր եւ պարկեշտ էր ,

այժմ իւր ճոխ արդուզարդուցը տակ խիստ թար-  
 շամեալ եւ անպատուութեա՛լ է .» եւ արդէն դու  
 'ի գին իմ կորուսեալ պատուոյս ոսկիներ եւ գո-  
 հարներ տալով՝ բաւական վճարում մը ըրած չե՛ս :  
 — Չէ՛ . Սիւզան , չէ՛ . այդպէս մի խորհիր . ես  
 այդ տեսակ նախապաշարմունքները առ ոչինչ կը  
 համարիմ . թէ եւ հարուստ եմ եւ դու աղքատ  
 ես , բայց իմ սէրս անկեղծ եւ ճշմարիտ է . ո՛վ  
 ինչ կուզէ թող ըսէ , կը հասկնա՞ս Սիւզան . . . ես  
 չա՛տ բան պարտիմ քեզի . գքեղ ճանչնալէ առաջ  
 յոգնած եւ ամեն բանէ ձանձրացած էի , 'ի մի  
 բան , կեանքը խիստ դառն կերեւար աչքիս , բայց  
 դու քաղցրացուցիր իմ կեանքս , քու քաղցրալիր  
 խօսքերդ եւ անուշաբոյր շունչդ կեանքն ինձ պաշ-  
 տելի ըրին , ուստի այս երջանկութիւնս երկա-  
 րատեւ վայելելու համար կը բաղձամ որ դու իմ  
 կինս ըլլաս .

— Զգուշացիր բարեկամս , ես այդպիսի բան մը  
 չեմ պահանջեր քեզմէ , եւ առաւել քան զայս ,  
 երբէք չեմ հաւանիր որ ժօրժ տը Պրույէր Պա-  
 բոնը իւր հոմանուհւոյն հետ ամուսնանայ .

— Բայց ես կը սիրե՛մ զքեզ , եւ հոգիդ մարմի-  
 նէդ աւելի կը պաշտեմ . երբ վաղը ինձ հետ ա-  
 մուսնանաս , պիտի տեսնես թէ զքեզ արհամարող-  
 ները քու մէկ ժպիտդ իբրեւ ողորմութիւն պիտի  
 խնդրեն :

Սիւզան չպատասխանեց , այլ գլուխը սրտին վրայ  
 ինկած՝ սկսաւ մտածել :

Իսկ երիտասարդը նորա գլուխը ձեռացը մէջ  
առած՝ զայն ջերմ համբոյրներով կը ծածկէր :

Յանկարծ Սիւզան գլուխը երիտասարդին ձեռ-  
քէն ազատեց եւ հատկելեալ ձայնիւ ըսաւ .

— Ա՛հ , այս իրիկուն գլխու ցաւ մը ունիմ :

— Գիտեմ , կը տառապիս , սիրեցեալդ իմ Սիւ-  
զան , ուստի հանգստացիր , ահա ես կը մեկնիմ :

Զայս ըսելէ ետքը դէպ 'ի դուռը ուղղուեցաւ .

— Ժօ՛րժ , ըսա՛ւ Սիւզան , շփոթեալ .

— Ի՞նչ կը հրամայես Սիւզան .

— Հրամա՞ն . . . ա՛հ , ոչ . այլ կը խնդրե՛մ . . .

— Ի՞նչ բան .

— Գերձակուհւոյս հաշիւը մաքրելու համար քիչ  
մը ստակի պէտք ունէի . . .

— Ա՛հ , տղա՛յ . . . ինչո՞ւ կը քաշուիս .

Եւ քանի մը հատ Լուի ոսկի վառարանին վրայ  
դնելէն ետքը դուրս ելաւ :

Բ .

Կէս ժամ ետքը քողարկեալ և մեծ վերարկուի  
մը մէջ փաթտուած մանկամարդուհի մը գահավէժ  
ընթացքով Պուլվար տը Սէն—Միշէլէն և Սէն—  
Սէրվէն փողոցէն անցնելէն ետքը Լահարը փողոցի  
մէկ անկիւնը տան մը առջեւ կանգ առաւ . Ետե-  
ւէն եկող կամ զինքը դիտող մը չգտնուիլը ստու-  
գելու համար վայրկեան մը դարձած՝ չորս կողմը  
դիտեց , ապա մէկ ոստմամբ դրան առջեւի երկու  
աստիճաններէն վեր ելաւ , և տան երկու յարկե-

րէն անցնելէն ետքը երրորդ յարկի սենեակներէն մէկուն դուռը կամացուկ մը զարկաւ :

— Մտէ՛ք, ըսաւ ներսէն նուաղեալ ձայն մը :

Երբ մանկամարդուհին սենեակէն ներս մտաւ, վառարանին մէջ վառուած մէկ երկու կտոր հանքածխոյ վերջին կայծերուն արձակած լուսովը հազիւ նշմարեց անկիւնը կծկտած կնոջ մը վտիտ դէմքը :

Այս կինը կը նմանէր անոնց, որ հակառակ իրենց տարիքին՝ երկարատեւ տառապանքներէ ու նեղութիւններէ շուտ մը կը ծերանան :

— Բարի իրիկուն մայրիկ, այսօր ի՞նչպէս ես, հարցուց մանկամարդուհին երեսին քողն ու վերարկուն մէկդի նետելով :

— Կը մտի՛մ, սիրելիդ իմ Սիւզան, պատասխանեց դժբաղդ կինը :

— Աւասիկ տաքնալու համար քեզի ստակ :

Եւ ժօրժէն առած ոսկիներէն երկուքը խեղճ կնոջ ձեռքը դրաւ :

— Ոսկի՛, գոչեց կինը զարմանահար. ոսկի՛ . . . :

— Այո՛, մայրիկ :

Մանկամարդուհին սոյն երկու բառերը այնչափ դժուարութեամբ արտասանեց՝ որ կարծես կոկորդը կայրէր, բայց ինքզինքը ժողուելով՝ յաւելցուց .

— Նա տուաւ ինձ զայն . . . :

Պառաւ կինն յանկարծ ոտք ելնելու շարժում

մը ըրաւ, բայց չ'կարենալով նորէն ինկաւ ու  
ցած ձայնով մը ըսաւ .

— Տե՛ս, ի՞նչ աստիճան նուաստացեր եմ, որ  
ստիպուած եմ կամ անօթութե՛նէ եւ ցուրտէն  
մեռնիլ եւ կամ աղջկանս անպատուութեամբն  
ապրիլ . . . ա՛հ, ի՞նչ սոսկալի կեանք է այս . . .  
Ո՛վ ինձ պէս Գլէրմօնի կեդրոնական բանտէն  
նոր ազատուող կնոջ մը գործ պիտի տար, ո՞վ ա-  
ռանց զգուանաց պիտի կարենար դիտել իմ խան-  
գարեալ կերպարանքս, առ սէր դթութեան ո-  
ղորմութիւն մը իսկ պիտի տայի՞ն ինձ . . . Ի՞նչ դա-  
ռն եւ անտանելի կեանք է այս . . . ուտելիք պա-  
տառ մը հացս պարտիմ ստանալ աղջիկէս, որ իւր  
մարմինը ծախել ստիպուեցաւ դատապարտու-  
թեամբ նսեմացեալ մայրը անօթի չի մեռցնելու  
համար :

Սիւզան ակնկոր, լուռ կեցեր էր : Իսկ հէք կի-  
նը, որ զայս ջրսելէ ետքը արտասուքը խեղդել  
կաշխատէր, իւր աղջկանը դառնալով շարունակեց .

— Սիւզա՛ն, երբոր այդ մարդը ձանձրանայ քոյ  
գգուանքներէն ու ժպիտներէն, այն ատեն զքեզ  
պիտի տանի ձգէ փողոցին այն անկիւնը՝ ուրկէ  
գտած էր, ոհ, այն ատեն ի՞նչ պիտի ըլլաս դու,  
եւ ի՞նչ պիտի ըլլամ ես . . . :

— Ո՛հ, մայր իմ, գոչեց Սիւզան փղձկեալ ձայ-  
նիւ, եթէ ճանչնայիր դու զինքը, այդպիսի կաս-  
կած մը չպիտի ունենայիր անոր վրայ . խիտտ բա-  
րեսիրտ է նա, կը սիրէ՛ զիս, եւ նոյն իսկ հետս  
ամուսնանալ կառաջարկէ .

— Գու ալ կը հաւատա՞ս իւր խօսքերուն . շատեր այդպէս կըսեն բայց ապա կը լքանեն .

— Ես ատոր հակառակին համոզուած եմ .

— Գնա՛ բանդ . . . ո՞վ կուզէ ամուսնանալ տասը երկար տարիներ բանտարդելութեան դատապարտուած կնոջ մը աղջկանը հետ . . .

— Բայց նա չի դիտէր թէ . . .

— Սակայն պէտք է որ դիտնայ, Սիւզան, կը հասկնա՞ս, պէտք է որ դիտնայ :

Զայս ըսելէ ետքը երեսը դէպ 'ի պատուհանին դարձուց եւ սկսաւ լալ : Սիւզան արտասուք յաչրս, փորձեց զայն մխիթարել, եւ ապա մեկնեցաւ :

## Գ.

Գատապարտեալ կինը որ տիկին Մօրէլ կը կոչուէր, պաշտօնակալի մը կինն էր . ժամանակաւ գեղեցիկ էր, ու թէեւ իւր ամուսնոյն բարեկամներէն շատերը կը քծնէին իրեն, այլ ինք երբէք եւ ոչ մէկուն կարեւորութիւն տուած էր :

Ս, յսպէս նա երջանիկ կապրէր իւր հազիւ ութամեայ Սիւզան անուն աղջկանը հետ, երբ շարաքաստիկ աղէտով մը իւր ամուսինը երկաթուղւոյ արկածի մը զոհ տուաւ : Տիկին Մօրէլ այն միջոցին իւր երկրորդ զաւակովը յղի էր, եւ դժբաղդ դէպքին իրեն պատճառած ցաւը այն ատիճան սաստիկ եղաւ՝ որ պահ մը կարծուեցաւ թէ պիտի խելագարէր :

Ս, յս դժբաղդ դէպքին և անագորոյն ցաւերուն

վրայ երկու ամիս չանցած՝ յաշխարհ բերաւ տղայ մը, որ յաջորդ օրը մօրը անկողնոյն մէջ մեռած գտնուեցաւ :

Իրացի տղեղ կնիկներ, կասկածելով որ վաղը կրնար տիկին Մօրէլ իւր դեղեցկութեամբը հըրապուրել իրենց ամուսինները, անոր ձեռքէն ազատուելու համար բարեպատեհ առիթ համարեցին զինքը ոստիկանութեան մատնել իբր որդեսպան, եւ բժիշկք, առանց ուշադրութեան առնելու թէ խեղճ կինը ցաւերուն կամ տենդին սաստկութենէն պահ մը մոռնալով իւր նորածինը, քունին մէջ կրնար մէկ կողմ դառնալով մանկան վրայ իյնալ, որդեսպան հռչակեցին զայն, որով տասը տարի բանտարդելութեան դատապարտուեցաւ :

Սիւզան մինակ մնաց երկրիս վրայ, եւ վանք մը դրուելով, կարել ու ձեւել սորվեցաւ : Երբ 15 տարեկան եղաւ, դերձակուհւոյ մը քով մտաւ, որ գէշ խորհուրդներն և մանաւանդ գէշ օրինակները չկրցան իւր ազնիւ բարուցը վրայ ազդեցութիւն մը ընել, եւ իւր ընկերուհիք տեղեկանալով որ դատապարտեալի մը աղջիկն էր, սկսան զինքը նախատել, որով ստիպուեցաւ մեկնիլ վաճառատունէն :

Խեղճ Սիւզան ամեն կողմէ լքեալ եւ որ եւ է օգնութիւն մը դտնելէ անյոյս, ստիպուեցաւ ծաղկավաճառութիւն ընել. փողոցներուն մէջ, պուլվարներուն վրայ եւ 'ի Շանդ—էլիզէ,



Օր մը, Պ. տը Պլանեաք անուն հարուստ թափառաչընիկ մը տեսաւ այս լքեալ աղջիկը, որ իր ցնցոտի հագուստին տակ իսկ գեղեցիկ եւ հաճոյ կերեւէր. ուստի զայն իւր հետը տուն տարաւ, հաղուեցուց, պէտք եղած հոգածութիւնն ըրաւ եւ քիչ մը ժամանակ ետքը ուզեց զնա իւր համանուհին ընել:

Երբ որ գեղեցիկ զգեստներ ցուցուցին Սիւզանի, խնդաց, երբ իւր մերկ ու փոքր սենեակը թողլով այսպիսի լաւ բնակարանի մը մէջ հաստատուեցաւ, հիացա՛ւ, ու երբ լաւ կրակի մը ու ճոխ սեղանի մը առջեւ գտնուեցաւ, մոռցաւ ցուրտն ու անօթութիւնը, ինքզինքը կատարեալ երջանիկ զգաց, բայց երբ այս ամեն լաւ բաներուն փոխարէն իւր պատիւը պահանջուեցաւ՝ դիմադրեց եւ ուզեց իւր համեստութիւնն անարատ պահել:

Վեց ամիս այսպէս անցաւ:

Օր մը Պ. տը Պլանեաք, որ Պ. Ժօրժ տը Պրույէրի մտերիմն էր, կը գանդատէր երիտասարդ ուհւոյն ընդդիմութեանցը դէմ, զոր թշուառութենէ աղատեր էր: Պ. Ժօրժ իւր բարեկամին խօսքերէն հետաքրքրուելով՝ ուզեց տեսնել այս հրաշալիքը, այս առաքինութեան նոր երեւոյթը, եւ երբ զայն տեսաւ՝ սիրեց, եւ Սիւզան, այն բանը զոր իւր երախտագիտութեանը չէր շընորհած, սիրոյն շնորհեց. զի Պրն. Ժօրժ՝ Պ. տը Պլանեաքէն աւելի երիտասարդ եւ աւելի համակրելի էր:

Ահա այս վիճակին մէջ դտաւ տիկին Մօրէլ իւր աղջիկը, բանտէն ելած միջոցին :

Սիւզան իւր մայրը տեսնելով՝ սիրտն ուրախութեամբ լեցուեցաւ, բայց որովհետեւ խեղճ կինը ապրելու միջոց մը չունէր, հարկ եղաւ զայն սեւեկի մը մէջ տեղաւորել, մեկուսացեալ. եւ հոն էր որ Սիւզան երեկոյին եթէ կարենար ազատիլ կը բերէր թշուառ ազատելոյն կը յանձնէր ինչ որ կրցեր էր ճարել :

Դ .

Պուլվար տը Սէն—Միշէլի վրայ շատ մը սրճարաններ կան, ուր ամեն երեկոյ բաղմաթիւ ուսանողներ կը յաճախեն : Իրիկուն մը ասոնցմէ միոյն մէջ չորս երիտասարդներ սեղանի մը շուրջը նըստած՝ Գօֆֆօ կը խաղային . իսկ իրենցմէ քիչ մը հեռու նստող հինգերորդ ընկերնին անոնց խաղին ուշադրութիւն չընելով մտազբաղ կերեւէր :

Տասը վայրկեանէ ետքը խաղացողներէն մին, որ առաջին շահողը լինելուն սեղանէն կը հեռանար, խաղին շարունակութիւնը երեքին ձգելով, մրտազբաղ պարոնին քովը երթալով հարցուց .

— Ժիւլ, այս իրիկուն ի՞նչ պատճառաւ տխուր կերեւիս .

— Ամենեւին զարմանալու չէ, ըսաւ խաղացող ընկերներէն մին, ըստ որում Պ . Ժիւլ սիրահարեալ մ'է, եւ անյոյս սիրահարեալ մը :

— Պարոն Ալֆրէտ թերեւս իրաւունք ունենայ , պատասխանեց ժիւլ , զի խենդ-ենալու աստիճան սիրահարեալ մ' եմ :

— Բայց չա՛րժեր , եւ այդ աստիճան առաջ երթալու իրաւունք չունիս , կրկնեց Ալֆրէտ , նկատելով որ , այն զոր կը սիրես՝ խառնակեաց աղջիկ մ' է :

— Ո՞վ է ուրեմն , գոչեց երբորդը , որ էտուար կը կոչուէր :

— Այն գեղեցիկ , համեստ եւ թխադոյն աղջիկն է , որ Սիւֆլօ փողոցը գեղեցիկ տան մը մէջ կը բնակի , պատասխանեց Ալֆրէտ . դուք անպատճառ տեսած ըլլալու էք զինքը , որ վայելուչ հասակ մը , բանաստեղծութիւն ներշնչող սեւ աչքեր եւ նազելի քալուածք մը ունի :

— Յիրաւի , գէշ չէ' :

— Այո՛ , բայց ժօրժ տը Պրույէր անուն սիրահար մը ունի , որ խենդ-ենալու աստիճան զայն կը սիրէ , հետեւաբար նախանձոտ է եւ ամենեւին կատակ չի վերցներ՝ եթէ մէկը յանդգնի իւր սիրուհին յափշտակել :

— Հո՛գս , ըսաւ ժիւլ , ես կուղեմ զայն ճանչնալ , հետը խօսիլ եւ գոնէ անգամ մը լսել նորա ձայնին գեղգեղանքը :

— Է՛հ , եթէ այդպէս դժուարին բան մը չէ , ըսաւ Ալֆրէտ , գրեթէ ամեն երեկոյ ժամը Վիին տունէն տուրս կելլէ ճանաչի մը մէջ փաթտուած եւ երեսն ալ թանձր քօղով մը ծածկած . ամեն նայ-

ուածքներէ խոյս տալու համար մութին մէջէն քալելով կերթայ տուն մը, որ խօսքը մէջերնիս, այնչափ վատահելի չէ. ուսկից կէս գիշերին միեւնոյն գաղտնածածուկ եղանակաւ կը մեկնի:

— Ըսածիդ վատահ եո, գոչեց ժիւլ ոգեւորեալ:

— Կատարելապէ՛ս. եթէ այս իրիկուն Սէն— Սէրվրէն եւ Լա Հարբ փողոցներուն անկիւնը ըսպասես՝ անշուշտ պիտի տեսնես դայն:

Այս պատասխանին վրայ ժիւլ անմիջապէս ոտք ելաւ եւ առանց բառ մը արտասանելու՝ սրճարանին սանդուղներէն գահավէժ ընթացքով իջաւ եւ աներեւոյթ եղաւ:

Տօմինօյի խաղը միշտ կը շարունակուէր:

Ե.

Ցուրտ եւ աղճամուղին էր գիշերն երբ Պ. ժիւլ Լա Հարբ փողոցի տուներէն միոյն ներս քաշուած դրան խորը պահուրտուած՝ տրտում եւ տխուր կ'սպասէր անձկանօք, առանց կարեւորութիւն տալու բքաբեր քամիին որ բաւական սաստիկ էր:

Հազիւ թէ կէս գիշերուան ժամը 12 կը զարնէր, ընթերցողաց ծանօթ Լա Հարբ փողոցի դուռը կամացուկ մը բացուեցաւ եւ կին մը թեթեւաքայլ յառաջացաւ փողոցին մէջ:

Երիտասարդ էր արդեօք. իւր արագ եւ հաստատուն քալուածքը կրնային դայս ենթադրել տալ, բայց դէմքը կատարելապէս ծածկուած

ըլլալուն՝ անկարելի էր որոշել իւր գեղեցկութիւնը :

— Ինքն է , ըսաւ ժիւլ մտովի , եւ վրան տիրած վայրկեանական յուզմունքէն սկսաւ դողալ :

Քողարկեալ կիներ առջեւէն անցաւ դնաց . բայց ինք տեղէն անդամ չկրցաւ շարժիլ . քանի մը վայրկեանէ ետք յանկարծական խորհրդածութենէ մը մղեալ , կայծակի արագութեամբ անոր ետեւէն վազեց , եւ Լա Հարբ փողոցի բոլորովին ամայի անկիւնէն դառնալու միջոցին քովը հասաւ :

— Ո՛ւր կերթաւ այս ժամուս , գեղանի՛ տիկին , ըսաւ ժպտելով , թոյլ կը տա՞ք ինձ ձեզ ընկերանալ . զի այս ժամուս կրնան հանդպիլ վտանգաւոր պատահարներ :

Բայց քողարկեալը միշտ կը յառաջանար , առանց պատասխանելու եւ առանց գլուխն իսկ ետին դարձնելու :

— Արդեօք սիրային ժամադրութենէ՞ մը կը վերանառնաք . եւ կամ արդեօք այդպիսի ժամադրութեան մը կ'երթաք :

Չայս ըսած ժամանակ ժիւլ նորա թեւէն բռնած դէպ իրեն կը քաշէր :

— Գթութի՛ւն , պարո՛ն թողէք զիս . ըսաւ կիներ , անոր ձեռքէն ազատիլ ջանալով :

— Ո՛հ , այդ ինչ գեղեցիկ ձայն է , գոչեց ժիւլ սքանչացեալ , անշուշտ խիստ գեղանի լինելու էք , եւ ինչո՞ւ այդպէս դէմքերնիդ կը ծածկէք . եւ

տեսնելով որ քողարկեալ կինը չպատասխանելէ  
դատ ձեռքէն ազատիլ կ'աշխատէր, աշխուժիւ  
նորա քօղը քաշեց մէկդի առաւ եւ հիացման ա-  
զադակ մը արձակեց :

—Մ'հ, ալ չափն անցուցի՛ր, ապիրա՛տ . ըսաւ  
կինը կրակ կտրած, և իւր կրկնոցէն բռնող ժիւ-  
լի ձեռքը վար առնելով, անոր երեսին փառա-  
ւոր շառաչաձայն ապտակ մը իջեցնելէ ետքը օձի-  
քըն ազատեց և վազելով գնաց խառնուեցաւ  
խուճմբ մը մարդկանց՝ որք այն միջոցին Սէն—Սէվ-  
րէն փողոցէն դուրս կելլէին :

Պ. Ժիւլ իւր անյաջողութենէն սրտաբեկ եւ  
յուսահատ, եղած տեղը դամուած մնաց, այսպի-  
սի ընդունելութենէ մը ետքը այլ եւս չի համար-  
ձակեցաւ իւր շահատակութիւնը շարունակել .  
որով և Սիւզան առանց անգամ մ'ալ անհան-  
գիստ ըլլալու հասաւ իւր տունը :

## Զ.

Հետեւեալ օրը Ժօրժ ար Պրույէր Պարոնը նա-  
մակ մը կստանար, յորում կ'իմացնէին թէ իւր սի-  
րուհին ամեն իրիկունն անպատիւ տուն մը կ'եր-  
թեւեկէր, և թէ պարտէր մերժել այսպիսի թըշ-  
ուառական մը որ շարաշար կը խարէր զինքը : Ս. յս  
նամակը ժիւլ Գ . . . ստորագրութիւնը կը կրէր :

Պարոն Ժօրժ առանց ժամանակ կորսնցնելու,  
ստորագրութեան աակը նշանակուած վայրը գի-

մեց, ուր դտաւ զժիւլ իւր երկու ընկերներովը, եւ տակաւին ձեռքը բռնած նամակն անոր ցուցնելով՝ հարցուց:

— Պարո՛ն, այս նամակը ձեզմէ՞ է.

— Այո՛, պատասխանեց ժիւլ.

— Ուրեմն կը խնդրեմ որ ըսէք ինձ, ո՞րպիսի պատճառ մը զձեզ մղեց այսպիսի ամբաստանութիւն մը ընելու մանկամարդ աղջկան մը դէմ, որոյ նկատմամբ մասնաւոր հոգածութիւն մ' ունիմ.

— Մտիկ ըրէք որ ըսեմ. շատ ատեն չը կայ որ ձեր ակնարկած այդ մանկամարդուհին տեսած եւ անոր շնորհալի շարժումներէն եւ գեղեցկութենէն դիւթուած էի, ի մի բան կը սիրէի՝ զինքը, բայց օր մը լսած ըլլալով թէ անկանոն վարք մը ունի, ուղեցի այս կէտն ստուգել, եւ արդարեւ նամակիս մէջ նշանակած Լահարը փողոցի անկիւնի տունէն դուրս ելնելը տեսայ, հետեւաբար պարտաւոր համարեցայ իմացնել ձեզ այս ամենը:

— Ուրեմն՝ ի շահ անձանօթի մը, այսինքն՝ ի շահ իմ էր, որ կ'ամբաստանէիք զայն, զոր իմ սիրուհիս կը կոչէք:

— Բնաւ երբէք պարոն, այլ նախանձոտ եւ յիմար մը լինելուս ուղեցի վրէժ լուծել իրմէ. ու երբ խարուած չըլլալուս ապահովութեանը համար նորա երեսին քօղը մէկ կողմ քաշել ուղեցի՝ երեսիս ապտակ մը զարկաւ:

— Բայց գիտէ՞ք պարոն, թէ այդ ընթացքով

կրկնակի խայտառակութիւն գործած եղաք . ո՞վ ըսաւ ձեզ թէ նա իմ բաղձանացս եւ ինձ հաճոյ լինելու համար գացած չէր այն տունը :

Այս խօսքերով Պ . Ժօրժ իւր սիրելւոյն գոնէ համբաւը փրկել կ'աշխատէր . իսկ Ժիւլ շուարեալ չէր կրնար պատասխան մը գտնել այս պարոնին , որ հանդարտօրէն կեցած էր . իւր խօսքերը լսող Ժիւլի բարեկամները միջամտեցին եւ իրենց ընկերը կշտամբեցին , ըսելով թէ՛ արդարեւ ըրածը վատութիւն մ'էր , կին մը նախատած էր եւ անկէ ընդունած էր ապտակ մը , հետեւաբար իւր արժանի պատիժը առած ըլլալով՝ այլ եւս տեղի չի կար զայն վատահամբաւելու , որ վատութիւն ըսել էր :

Բարեկամաց այս յայտարարութեանը վրայ Պ . Ժօրժ ըսաւ Ժիւլի . ահա ես կը մեկնիմ , թողլով զքեզ լաւ մը խորհրդածել քու բարեկամացող կողմանէ արտասանուած «վատութիւն» բառին վրայ :

Եւ ողջունելով զանոնք՝ մեկնեցաւ , առանց իւր դիմացը վրայ երեւցնելու ինչ որ իւր սրտէն կ'անցնէր :

է .

Երբ Պ . Ժօրժ Սիւֆլօ փողոցի իւր տունը հասաւ , Սիւզան զայն դիմաւորելու համար ընդ առաջ վազեց ուրախութեամբ , սակայն Ժօրժի ցուրտ ընդունելութենէն սառ կտրեցաւ , աչքեր-



ըր բարձրացուց եւ նորա հետադօտիչ նայուած-  
քին հանդիպելով՝ դողաց :

— Ի՛նչ ունիք, սիրելիս, մրմնջեց դողահար :

— Հիմա պիտի գիտնաք, նստեցէ՛ք, շեշտեց  
աթոռ մը ցուցնելով անոր :

Սիւզան, որ սաստկապէս կը դողար, նստաւ,  
չի համարձակելով բառ մը արտասանել. իսկ Ժօրժ  
քանի մը անգամներ սենեկին երկայնութեանը  
մեծաքայլ երթալ գալէն ետքը կանգ առաւ եւ  
ըսաւ .

— Ստոյգ չէ՞ արդեօք, թէ կին մը որ իւր  
ամուսինը կամ սիրահարը կը մատնէ, մինչ այդ  
անձը իւր խանդաղատանքը եւ անձնուիրութիւ-  
նը այդ կնոջ ցուցնելու համար կըրցածը կ'ընէ,  
ստոյգ չէ՞ կըսեմ որ այդ կինը մեղապարտ մ'է :

— Բայց չը գիտեմ, սիրելիս, թէ այդ բառերով  
ի՞նչ կ'ուզէք ակնարկել :

— Կարդացէ՛ք սա նամակը եւ ապա պատաս-  
խանեցէք, ըսաւ Ժօրժ :

Սիւզան հազիւ թէ աչքը նամակին վրայ պը-  
տըտցուցեր էր, դռնեց .

— Ս՛հ, թշուառակա՛ն . . . ի՛նչ լըբութիւն . . .

— Երէկ իրիկուն դուրս ելե՞ր էիք .

— Այո՛ ,

— Ո՞վ էր այն մարդը որուն հետ տեսնուելու  
համար Լահարբ փողոցի անկիւնի տունը կ'երթա-  
յիք :

— Լահարբ փողոցի անկիւնի տունը բնակողը

մարդ մը չէ, այլ մայրս է, որուն սփոփանք եւ պատառ մը հաց տանելու համար կ'երթայի:

—Մայր . . . մայր ունի՞ս դու:

—Այո՛, մայր մ'ունիմ:

Այս պատասխանին վրայ դերերը փոխուեցան, հիմայ ժօրժ ապշեր ճնացեր էր եւ կը դողար. իսկ Սիւզան դուրսը կը բարձրացնէր:

—Բայց միթէ չէի՞ր ըսած ինձ թէ մայրդ կորուսած էիր, կակաղեց ժօրժ:

—Այո՛, բայց վերադարձաւ:

—Չեմ հասկնար:

—Հիմայ կը հասկնաք, մայրս Գլէրմօնի բանտը դրուած էր, ուր տասնամեայ բանտարկութենէ մը ետքը այս օրերս ազատեցաւ, ահա ճշմարտութիւնը:

Ժօրժ զայս լսելուն պէս կայծակնահար ինկաւ թիկնաթուին վրայ եւ դէմքը ձեռացը մէջ առած մրմնջեց:

—Իւր մայրն . . . ո՛հ, սոսկալի բան է այս:

Սիւզան անոր մօտենալով՝ դէմքը ծածկելու համար միացուցած ձեռքերը իրարմէ դատեց եւ ամենաքաղցր ձայնիւ ըսաւ:

—Ժօ՛րժ, դուք տասնամեայ բանտարկութեան դատապարտուած մօր մը աղջիկը սիրեցիք. կը տեսնէք ահա թէ չէ՞ք կրնար ինձ հետ ամուսնանալ:

Վայրկեան մը լռութիւն տիրեց. Երիտասարդին արտեւանանցը ծայրը մէկ երկու կաթիլ արցունք

երեւցան : Իսկ Սիւզան գլուխը սրտին վրայ ինկած սկսաւ մտածել :

Ժօրժ այտերէն իջած արտասուքը սրբելէն ետքը Սիւզանի մօտեցաւ եւ անոր քովը նստելով հարցուց .

— Խօսէ՛ Սիւզան , մտիկ պիտի ընեմ , պատմէ ինձ թէ քու եւ թէ մօրդ պատմութիւնը . բան մը մի՛ պահեր . ամեն բան դիտնալ կուզեմ :

Յայնժամ Սիւզան մեզ արդէն ծանօթ եղող իւր և մօրը պատմութիւնը մի առ մի պատմեց , եւ սա խօսքերով վերջացուց :

— Ս, յն օրը , որ նորա ազատութիւնը ինձ աւետեցին , նուիրական պարտք համարեցայ իրեն օգնել եւ ջանալ իւր կրած վշտերը մօռցնել տալ . ուստի ինձ տուած ստակէդ մաս մ'ալ անոր կը հանէի . եւ միթէ կը ցաւի՞ս մօրս ստակ տալուս վրայ : Ո՛հ , ինչ որ ալ ըլլայ , վերջապէս քիչ մը շունչ կառնում . այս բաները զոր սրտիս մէջ կը պահէի՝ զիս կը խեղդէին . սիրովանք մը դտնելու համար զայնս ձեզ հաղորդելու պէտքն ունէի . այլ եւս գոհ եմ , այլ եւս զձեզ տեսնելը մտքէս անգամ անցունելու չեմ , եւ դատասպարտեալին աղջիկը պիտի երթայ իւր մօրը հետ միանայ :

Զայս ըսելէ ետքը Սիւզան ոտք ելած մեկնիլ կը պատրաստուէր .

Բայց ժօրժ փառայ պսակ մը յափշտակողի մը պէս զայն դրկացը մէջ առաւ և գոչեց :

— Ձէ՛ Սիւզան, չէ՛, չպիտի երթաս . կարելի՞ է ինձ քեզմէ բաժնուած ապրիլ . հեռու քու քաղցրը ակնարկէդ, հեռու քու ժպիտէդ եւ ամենէն աւելի՛ քու վսե՛մ սրտիդ տրուումէն .

— Բայց կը մոռնա՞ք ժօրժ, թէ ընկերութիւնը պիտի նախատէ զձեզ :

Ժօրժ վայրկեան մը խորհեցաւ, յետոյ, որպէս թէ յանկարծական որուշում մը ըրաւ, դոչեց .

— Գլխարկդ դի՛ր եւ կրկնօցդ հագի՛ր, զի մօրըդ քովը պիտի երթանք, կուզեմ տեսնել զայն :

Քանի՛ մը վայրկեանէ ետքը Պ . Ժօրժի կառքը տիկին Մօրէլի տանն առջեւ կեցաւ :

Ը,

Տիկին Մօրէլ նստած էր սեղանի մը առջեւ, որուն վրայ կտոր մը հաց և խողի քիչ մը միս կը գտնուէր . այլ փոխանակ ուտելու՝ կարտասուէր հեծեծագին, երբ ժօրժ եւ Սիւզան սենեակէն ներս մտան :

Աղջիկը վստեց իւր մօրը պարանոցը ինկաւ, եւ ժօրժը անոր ներկայացնելով՝ ըսաւ .

« — Ամեն բան դիտէ . — »

Հէք դատապարտեալը հազիւ կրցաւ վայրկեան մը աչքերը ժօրժին դարձնել, զի ամօթէն թե-

Թեւիկ կարմրութիւն մը իւր դեղնած այտերը  
գունաւորելով՝ գլուխը դարձեալ խոնարհեցուց :

Սիւզան պարտաւորեցաւ հարցնել անոր թէ  
ի՞նչ էր տրամութեան պատճառը, քանի որ նոյն  
գիշերուան ուտելիք հաց ունէր :

— Քեզի չէի՞ ըսած թէ այո օրերս զիս չարա-  
չար նախատեցին եւ նորէն բանտարկել սպառ-  
նացան . պատասխանեց կինը հատկեալ ձայնիւ .

— Եւ ի՞նչ պատճառաւ, հարցուց աղջիկն ան-  
համբեր :

— Որովհետեւ չը գիտեն թէ ո՞ւրկէց կը ճարեմ  
իմ պարէնս . եւ այսօր իրենց հետաքրքրութիւ-  
նը աւելի յառաջ տարին . առաւօտուն, երբ ա-  
ռած հացիս փոխարէնը կը վճարէի, հացագործը  
ստակն առնելով՝ դռնեց . «ոսկի՛ . . . արդեօք ուս-  
կի՞ց առիր» . առ այս՝ սպասուհի մը, որ ինձ պէս  
հաց առնելու համար հացագործին խանութը ե-  
կեր էր՝ պատասխանեց . «անշուշտ գողցած է» .  
եւ ուրիշ մ'ալ «այս կինը գող է» պոռաց :  
Անմիջապէս բազմութիւնը չորս կողմն առած, զիս  
կը հրմշտկէին եւ նախատակօժ կրնէին, երբ ես  
ստակին մնացորդը եւ հացը առնելով կուզէի  
մեկնիլ . բայց բազմութիւնը կարգիլէր իմ քայլե-  
րըս . ուզեցի խանութին մէջ մտնել պահուրտիլ,  
այլ հացագործը զիս վռնաց . որովհետեւ խա-  
ժամութ ամբոխը ետեւէս ինկած՝ «բռնեցէ՛ք,  
գողը բռնեցէ՛ք, » կը պոռար . անոնց ձեռքէն  
ազատելու համար պարտաւորեցայ մօտակայ պա-

հականոցը մտնել եւ երկու քաղաքապահ զինւորաց շնորհիւը հազիւ կրցայ տուն հասնիլ: Աւաղ . . . այսպէս ապրելէն լաւագո՛յն է մեռնիլը» . ըսաւ եւ լռեց, ու թոյլ տուաւ արտասուաց ուր բռնութեամբ հոսելով իւր դէմքը ողողեն:

— Աչ, սիրեցեալ մայրիկ, գոչեց Սիւզան . ո՛չ, չի պիտի մեռնիս դու . ես քու քովդ պիտի մընամ, եւ աշխատելով՝ քու վշտերդ պիտի ամփքեմ:

— Դու այլեւս հոս չպիտի բնակիս, գոչեց Ժօրժ, որուն վրայ խոր սրտաշարժ տպաւորութիւն մը ըրած էին հէք կնոջ խօսքերը . մենք զքեզ ուրիշ տուն մը պիտի տանինք, եւ եթէ հարկ ըլլայ՝ Բարիզէն ալ հեռու պիտի երթանք, ուր պիտի կարենաս ազատ եւ հանգիստ ապրիլ:

— Ուրեմն աղջիկս շատ կը սիրէ՞ք . հարցուց կինը, աչքերը սրբելով:

— Այո՛, կը սիրեմ զինքը . եւ որպէս զի միշտ երջանիկ ըլլայ, կուզեմ որ քու թշուառութիւնդ տեսնելով չի տառասլի:

— Իրաւունք ունիք . սիրեցէ՛ք, սիրեցէ՛ք զինքը, զի բարի եւ անմե՛ղ է . իւր անպատուութեալ մարմնոյն մէջ միշտ պարկեշտ եւ անարատ հոգի մը պիտի գտնէք . նա իմ դժբաղդութիւններս սիրովեց եւ դիտցաւ ցաւերս ամփքել: Արդեօք իրեն դէմ տրտնջելու բան մը ունեցած էք, արդեօք կը կարծէ՞ք թէ վայրկեան մը իսկ կրնայ ըզձեզ խաբել:

— Ո՛չ, հաւատտի եմ թէ Սիւզան բարի աղջիկ մ'է :

— Ուրեմն սիրեցէ՛ք զայն . եւ խոստացէ՛ք ընդ միշտ սիրել . . . դալով իմ այս տունէն մեկնելու համար ձեր ըրած առաջարկին՝ ուրիշ օր մը կը պատասխանեմ :

Թ .

Յաջորդ առաւօտուն, հետաքրքիր եւ յուզեալ բազմութիւն մը Լահարբ փողոցի տան բոլորտիքը կը պտըտէին եւ բերնէ բերան հազար ու մէկ մեկնութիւններ կը բսբսային :

Ս,յս տան երրորդ յարկին մէջ բնակող կին մը ինքզինքը կախեր էր, որոշակի չը գիտէին թէ ի՞նչ էր նորա անունը . ոմանք զայն Պօտէլ կը կոչէին, այլք՝ Թողէլ կամ Մօռէլ . բայց ամենքն ալ միաձայն կը հաստատէին թէ նա շատ ատեն չի կար որ կեդրոնական բանտէն ելած էր, եւ սակայն զինքը անձնասպանութեան մղող պատճառը ի՞նչ էր :

Ոմանք կը պնդէին թէ ծայրահեղ թշուառութիւն մ'էր, ուրիշներն ալ թէ երկրորդ անգամ բանտարկուելու երկիւղն էր, եւ ոմանք որ ինքզինքնին աւելի իրազէկ կը կարծէին, կը վճռէին թէ մեծ գումար մը դողցած ըլլալու էր :

Ս,յսպէս մահուրնէն ետքն ալ կը նախատէին խեղճ կլինը, եւ բնաւ մէկը իսկ մտքէն չէր ան-

ցուներ թէ, այն կինը, որ երբեմն իբր որդեապան յանիրաւի դատապարտուած էր, ընդհակառակն իւր մայրական ճշմարիտ սիրովը իր զաւկին համար կենազրաւ կը լինէր. որպէս զի նորա պատիւն ազատի՛ :

Յաջորդ տարւոյ Մարտ ամսուան մէջ Պ. եւ տիկին ժօրժ տը Պրույէր (պարոն եւ պարոնուհի) որք դատապարտեալ կնոջ մեռնելէն գրեթէ տարի մը ետքը ամուսնացեր էին, Իտալիա երթալ ընակելու համար Բարիզէն մեկնել կը պատրաստուէին :

— Կը տեսնե՞ս Սիւզան, ըսաւ ժօրժ, թէ ի՞նչպէս հաւատարիմ գտնուեցայ իմ խօսքիս, թէ եւ այժմ կ'զգամ որ 'ի սկզբան այսպանելի է եղեր իմ ընթացքս, զքեզ հոմանուհիս ընելուս համար, բայց ի՞նչ կրնայի ընել, երիտասարդական կրակոտ եւ անխոհեմ եռանդէն մղեալ էի, բայց հիմայ աւելի անխոհեմ եւ կրնամ իսկ ըսել թէ ճիւղ մը պիտի ըլլայի, եթէզքեզ խաբելով լքանէի, որպէս կրնեն ոմանք իրենց սիրուհեաց :

— Այո՛, ժօրժ, պատասխանեց Սիւզան. իրաւունք ունիմ ըսել քեզ թէ, ես ալ, որ երիտասարդական կրակոտ եւ անխոհեմ եռանդէն մղեալ անճնատուր եղայ քեզ, ես ալ ճիւղ մը պիտի համարուէի, եթէ զքեզ խաբելով ուրիշներու յարէի, որպէս կրնեն ոմանք իրենց սիրելեաց :

(Էօժէն տ'Օրիագ)

Ա. Կ.



## 86

## ԵԿԵՂԵՑԵԱՑ ԺԱՄԱՑՈՅՑԸ

Գաղիացի ուսանող մը հարցուց իւր հօրը թէ՛  
 — Հայր իմ, թուրքեր անուն պատմագէտն ըսած  
 է թէ՛ մեր նախահարք ժամացոյցը եկեղեցեաց  
 դրսի կողմը կը դնեն եղեր բայց պատճառը չի  
 յայտնէր .

— Պատճառը սա է որ ժողովուրդը չուշանայ  
 ներս մտնելու .

— Շատ աղէկ, քանի որ այդպէս էր, մենք այ-  
 ժրմ ժամացոյցը ի՞նչու եկեղեցեաց ներսի կողմը  
 կը դնենք .

— Որպէս զի դուրս ելնելը չուշացնենք .

— 0 —

## 87

## ԽՂՃԱՄԻՏ ՄԱՐԴ ՄԸ

— Տուն մը կայրէր, մարդ մը յայնժամ ներս կը  
 մտնէ, եւ տանտիրոջ սենեակն երթալով՝ նորա  
 դարանին մէջէն նոր ու մաքուր շապիկ մը կառնու  
 կը հագնի. տանտէրն աճապարանօք սենեակը  
 մտնելով երբ կը տեսնէ զնա որ իւր հին եւ աղ-  
 տոտ շապիկն հանած, եւ իրեն (տանտիրոջ) նոր  
 եւ մաքուր մէկ շապիկը հագնելու զբաղեալ է,

«Ի՞նչ կընես այդ տեղ, կը գոչէ ապշեալ» . — կը տեսնես թէ ըրածս գողութիւն մը չէ, կը պատասխանէ անժանօթը, մտածեցի թէ քու նոր եւ մաքուր շապիկդ պիտի այրի, եւ ըսի ինքնին թէ լաւ է որ իմ աղտոտ եւ հին շապիկս այրի քան քու շապիկդ, եւ ահա փոխանակութիւն կընեմ:

— օ —

88

Մօնաքօյի իշխաններէն մին օր մը իւր առաջին խորհրդականին կըսէ .

— Արչա՛փ աղէկ բան մը պիտի ըլլար աշխարհ, եթէ մահը չըլլար .

Առ այս իմաստուն խորհրդականը կը պատասխանէ .

— Տէր իմ, ընդհակառակն աշխարհի աղէկութիւնը մահուամբ է . զի եթէ մահը չըլլար գուք հիմայ ի՞նչպէս պիտի կարենայիք իշխել:

— օ —

89

Օրիորդի մը հարցուցին թէ, «Քու պզտիկ եղբայրդ քանի՞ տարեկան է .

Օրիորդը զգալով որ այսպէսով իւր տարիքը հասկնալ կուզեն, պատասխանեց .

— Երկու տարիէն երկու քս ալ մի եւ նոյն տարիքը պիտի ունենանք:

Պատասխան մը, որմէ բան մը չի հասկցուիր:





8388

8389

2013

U. 7

107.